

Երիտասարդների և
մեծահասակների
կրթությունը

2030 ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

© 2019

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը Գերմանիայի բարձրագույն դպրոցների միության (Deutscher Volkshochschul-Verband e. V. (DVV)) միջազգային համագործակցության ինստիտուտն է:

Տեքստի օգտագործումն ու բազմացումը միանշանակորեն ողջունելի են՝ աղբյուրը նշելու պայմանով: Խնդրում ենք վերատպված տարբերակի օրինակն ուղարկել Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ՝ ստորև նշված հասցեով:

Հրատարակող՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ
Institut für Internationale Zusammenarbeit des Deutschen Volkshochschul-Verbandes e.V.

Օբերե Վիլհելմշտրասե 32

53225 Բոն

Գերմանիա

Հեռախոս՝ +49 (0) 228 97569-0

Էլ-փոստ՝ info@dvv-international.de

www.dvv-international.de

Պատասխանատու՝ Զրիստոֆ Յոսթ

Աշխատանքային խումբ՝ Թոմաս Լիխտենբերգ, Զրիստոֆ Յոսթ

Հեղինակ՝ Բրիտա Շվայգհոֆեր

Դիզայնը՝ Մայա Թոնե

Ձևավորում՝ MediaCompany –

Agentur für Kommunikation GmbH

Բևօրինակի տպագրություն. Druckerei Brandt GmbH, Բոն

Թարգմանության տպագրություն՝ Լիմուշ ՍՊԸ

ԿՁՆ նշաններ: © United Nations, www.un.org

Թարգմանությունը կատարվել և տպագրվել է Դի-Վի-Վի

Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից՝

Գերմանիայի տնտեսական համագործակցության և

զարգացման դաշնային նախարարության միջոցներով:



Federal Ministry
for Economic Cooperation
and Development

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԵՎ ՄԵԾԱՅԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԱԿԱՐԳ 2030- ՈՒՄ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒՄ

Նշանակությունը,
հնարավորությունները և
ազդեցությունը

Հրատարակող՝

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ, 2019թ.

Հայերեն թարգմանություն, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ

Հայաստան, 2020

Հեղինակ՝ Բրիտա Շվայգհոֆեր

Բովանդակություն

Հապավումներ	7
Նախաբան	8
Գործադիր Ամփոփում	10
1. Ներածություն. վերլուծության նպատակը, կառուցվածքը և մեթոդաբանությունը	18
1.1 Ուսումնասիրության հիմքը և նպատակը	19
1.2 Վերլուծության կառուցվածքը	20
1.3 Վերլուծության մեթոդաբանությունը	21
2. Մեծահասակների ուսումնառության և կրթության համընդգրկուն բնույթը	24
2.1. Մեծահասակների ուսումնառություն և կրթություն. ուսումնառողների ինքնավստահության ամրապնդում և հնարավորությունների ընդլայնում՝ ի նպաստ բոլոր ԿՁՆ-երի	25
2.2. Մեծահասակների կրթություն և ուսումնառություն. ազդեցությունն առանձին ոլորտներում	28
2.2.1 Աղքատության հաղթահարում	29
2.2.2 Առողջություն և բարեկեցություն	29
2.2.3 Միջոլորտային կապերը	30
2.2.4 Համակարգված շրջանակի ներդրում	32
3. Մեծահասակների ուսումնառության և կրթության դերը ԿՁՆ 4-ի իրականացման գործում. որակյալ կրթություն	34
3.1 ՄՈՒԿ-ի կարևորությունը ԿՁՆ 4-ի իրագործման հարցում	35
3.2 ՄՈՒԿ-ի ներդրումը ԿՁՆ 4-ի որոշ թիրախների իրականացման գործում	36
3.2.1 Գրագիտությունը որպես թիրախ և որպես հնարավորություն	37
3.2.2 Հավասար հասանելիություն և «ոչ մեկին չանտեսելու» սկզբունք	39
3.2.3 Կրթություն հանուն կայուն զարգացման	44

4. Մեծահասակների ուսումնառության և կրթության դերը ԿԶՆ 8-ի, 10-ի, 13-ի և 16-ի իրականացման գործում	46
4.1 ԿԶՆ 8. Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ	48
4.1.1 ՄՈՒԿ-ի դերը ԿԶՆ 8-ի իրականացման գործում	48
4.1.2 ՄՈՒԿ-ը և աշխատանքային շուկան	48
4.1.3 Աշխատող աղքատներ, ոչ ֆորմալ աշխատաշուկա և արժանապատիվ աշխատանք	50
4.2 ԿԶՆ 10. Անհավասարությունների կրճատում	55
4.2.1 ՄՈՒԿ-ի դերը ԿԶՆ 10-ի իրագործման հարցում	55
4.2.2 ՄՈՒԿ նշանակությունը հավասարության հարցում	55
4.2.3 ՄՈՒԿ-ի լրացուցիչ ազդեցությունը անհավասարությունների կրճատման գործում	56
4.3 ԿԶՆ 13. Կլիմայի փոփոխությունների դեմ ուղղված գործողություններ	59
4.3.1 ՄՈՒԿ-ի դերը ԿԶՆ 13-ի իրագործման հարցում	59
4.3.2 Մեծահասակների կրթությունը կարող է կյանքեր փրկել. աղետների ռիսկի նվազեցման մարդկային գործոնը	60
4.3.3 Կլիմայի փոփոխությունների դեմ պայքար	61
4.4 ԿԶՆ 16. Խաղաղություն արդարադատություն և արդյունավետ կառույցներ	63
4.4.1 Խաղաղություն, արդարադատություն և արդյունավետ գործող կառույցներ. վերևից ներքև, թե՛ ներքևից վերև	63
4.4.2 Ինչպես ձևավորել խաղաղ համագոյակցող հասարակություններ	64
4.4.3 Մեծահասակների կրթության դերը. օրինակներ	65
5. Եզրափակիչ դիտարկումներ և առաջարկություններ	68
6. Հղումներ	73

Ներդիրներ

Ներդիր 1. Եթովպիա. Գրագիտություն և համայնքային ուսուցման կենտրոններ	26
Ներդիր 2. Լաոս. ներգրավելով ամենաանտեսվածներին	41
Ներդիր 3. Կրթության 2-րդ հնարավորությունն ստանալու անհրաժեշտությունը Եվրոպայում. Սերբիայի օրինակը	44
Ներդիր 4. Սոցիալական և համերաշխության տնտեսություն	54
Ներդիր 5. Տաջիկստան. Ինչպես են համատեղվում մասնագիտական ուսուցումը, մարդու իրավունքները և իրավաբանական ու հոգեբանական խորհրդատվությունը	54
Ներդիր 6. «Կանաչ քարտեզ». մտածել գլոբալ, բայց պլանավորել տեղական մասշտաբով	62
Ներդիր 7. Գրագիտություն և ԿՁՆ 16	67
Ներդիր 8. Հակամարտությունների կարգավորում երիտասարդների հետ աշխատանքի միջոցով	67

Աղյուսակներ

Աղյուսակ 1 Համաշխարհային մակադրակով գրագիտության ցուցանիշները և ոչ գրագետ բնակչության ցուցանիշները՝ ըստ տարիքային խմբերի, 2016թ.	37
Աղյուսակ 2 Անհավասարությունների ներառմամբ վերանայված ՄՉՀ	56

Գծապատկերներ

Գծապատկեր 1. Մեծահասակների գրագիտության և աղքատության ցուցանիշների քարտեզագրում	31
Գծապատկեր 2. ՄՈՒԿ-ին մասնակցության ցուցանիշների փոփոխությունները	40
Գծապատկեր 3. Դպրոց վերադարձող մեծահասակներ	43
Գծապատկեր 4. ՄՈՒԿ-ի ազդեցությունը աշխատաշուկայի վրա	50
Գծապատկեր 5. Աշխատող բնակչության աղքատության ցուցանիշները	51
Գծապատկեր 6. Ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածության ցուցանիշները	52
Գծապատկեր 7. Խաղարարական գործունեության արդյունավետության մոդել	64

Հապավումներ

ՄԿԶՀ	«Մեծահասակների կրթություն և զարգացում» համաժողով
ՄՈՒԿ	Մեծահասակների ուսումնառություն և կրթություն
ՀԿԿԽ	Օրակարգ 2030-ի վերաբերյալ ՀԿ-ների կոլեկտիվ խորհրդատվություն
ՀՈԼԿ	Համայնքային ուսուցման կենտրոն
ԱՈԿ	Աղետների ռիսկերի կրճատում
ՄԿԵԱ	Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիա
ԿԿԶ	Կրթություն հանուն կայուն զարգացման
ԳԿՀ	Գլոբալ կրթական համաժողով
ԿՀՄ զեկույց	Կրթության վերաբերյալ համաշխարհային մոնիթորինգային զեկույց
ՄԿՈՒՀԶ	Մեծահասակների կրթության և ուսումնառության վերաբերյալ համաշխարհային մոնիթորինգային զեկույց
ՄԶՀ	Մարդկային զարգացման համաթիվ
ԲԶՖ	ՄԱԿ-ի՝ Կայուն զարգացման հարցերով բարձրաստիճան քաղաքական ֆորում
ՄՀԿՀ	Մեծահասակների համալիր կրթություն համայնքներում
ԳՄԽ	Գիտության միջազգային խորհուրդ
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
ԱՄԶՀ	Անհավասարությունները հաշվի առնելով ճշգրտված ՄԶՀ
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ՌԵՖԼԵԿՏ	Ֆրեյերյան վերածնված գրագիտություն՝ հանրության վստահության և հնարավորությունների ընդլայնման մեթոդներով
ԽԱՂՈՒՄ	Խաղաղարարությանն ուղղված մտածելակերպ
ԶՓԿՊ	Զարգացող փոքր կղզի-պետություններ
ԿԶԼ	Կայուն զարգացման նպատակներ
ԿԶԼ-Կրթություն 2030 ՂԿ	ԿԶԼ-Կրթություն 2030 հարցերով ղեկավար կոմիտե
ՍՀՏ	Սոցիալական և համերաշխության տնտեսություն
ՅՈՒԿԻ	ՅՈՒՆԵՍԿՕ-ի Վիճակագրության ինստիտուտ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն

Նախաբան

Օրակարգ 2030-ը և Կայուն զարգացման նպատակներն (ԿՁՆ) ուղղված են բոլորի համար առավել լավ ու կայուն ապագայի ապահովմանը: Դրանք վերաբերում են այն մարտահրավերներին, որոնց մենք բախվում ենք թե՛ գլոբալ, և թե՛ տեղական մակարդակով, ինչպիսիք են, ի թիվս այլնի՝ աղքատությունը, անհավասարությունը, կլիմայի և շրջակա միջավայրի վիճակի վատթարացումը, բարձրագույն և խաղաղության ու արդարության հետ կապված խնդիրները: Կրթությունը Էական նշանակություն ունի այս նպատակների իրականացման գործում, հատկապես որ ԿՁՆ 4-ը («ապահովել ներառական ու համահավասար որակյալ կրթություն և ցկյանս ուսումնառության հնարավորություններ բոլորի համար») բավականին կարևոր դեր ունի ընդհանուր օրակարգում: Չնայած առաջին անգամ Է հստակ անդրադարձ կատարվում ցկյանս ուսումնառությանը, այդուհանդերձ քաղաքական ուղղվածությունը և ուշադրությունն առաջիմ կենտրոնացած են ֆորմալ կրթության վրա, և շատ քիչ Է հաշվի առնվում երիտասարդների և մեծահասակների ուսումնառության ներուժը: Սա հատկապես մտահոգիչ Է այն առումով, որ բազմաթիվ երկրներում ֆորմալ կրթական համակարգի հասանելիությունը դեռևս սահմանափակ բնույթ Է կրում, իսկ երեխաներն Էլ տարբեր պատճառներով թողնում են կրթությունը: Ավելին, Կայուն զարգացման նպատակներից շատերը սերտորեն փոխկապակցված են կրթության հետ և կարող են կյանքի կոչվել միայն այն դեպքում, երբ ցկյանս ուսումնառությունն ու ոչ ֆորմալ կրթությունը դիտարկվեն որպես արժեքավոր ռեսուրս, քանի որ ֆորմալ կրթության սահմանափակումները չեն կարող ապահովել ցանկալի հաջողություններ:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը ողջունում Է, որ ներկայացված՝ «Երիտասարդների և մեծահասակների կրթությունը Օրակարգ 2030-ում և Կայուն զարգացման նպատակներում. Նշանակությունը, հնարավորությունները և ազդեցությունը» վերնագրով ուսումնասիրությամբ շեշտադրվում Է Կայուն զարգացման նպատակների իրագործման հարցում երիտասարդների և մեծահասակների ուսումնառության կարևոր դերակատարումը: Չափազանց կարևոր Է նկատել, որ երիտասարդների և մեծահասակների ուսումնառությունը պետք Է ոչ միայն կրթության ոլորտի հանրության ավելի լայն ուշադրության կենտրոնում լինի, այլ նաև այն, որ մի շարք ԿՁՆ-երին հասնելուն խնդիրների ուղղված համապարփակ մոտեցում կարող Է լինել: Աղքատության վերացումը, սովի վերացումը, ամուր առողջությունը և բարեկեցությունը, գենդերային հավասարությունը, պատասխանատու սպառումը և արտադրությունը, ինչպես նաև կլիմայի փոփոխության դեմ ուղղված գործողություններն ու բազմաթիվ այլ նպատակներ սերտորեն փոխկապակցված են ցկյանս ուսումնառության և կրթության հետ և հաջողությամբ կարող են իրագործվել միայն այն դեպքում, երբ երիտասարդներն ու մեծահասակները, որոնք պետք Է օգտվեն ԿՁՆ-ների իրագործումից, սովորեն, թե ինչպես պետք Է դրսևորել համապատասխան վարքագիծ և ինչպես գործել:

Այս ուսումնասիրության նպատակը ԿՁՆ 4-ի համատեքստում երիտասարդների և մեծահասակների կրթության կարևորության հետևողական վերլուծությունն է, ինչպես նաև Օրակարգ 2030-ի մի շարք այլ նպատակների հետ փոխկապակցվածության դիտարկումը՝ վերհանելով դրանց իրագործման հնարավորությունները ու կարևորությունը: Բացի դրանից, ուսումնասիրության մեջ բազմաթիվ օրինակներ են բերվում, որոնք ցույց են տալիս երիտասարդների և մեծահասակների կրթության արդյունքները գործնականում և նկարագրում վերջինիս ներդրումը Կայուն զարգացման նպատակների իրականացման գործում: Այս ուսումնասիրությանը ծանոթանալուց հետո ակնհայտ կդառնա, որ Կայուն զարգացման նպատակները հնարավոր չէ հաջողությամբ իրագործել առանց երիտասարդների և մեծահասակների կրթության պատշաճ ներառման:



Թոմաս Լիխտենբերգ
Ուսումնասիրության համակարգող,
Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ



Քրիստոֆ Յոսթ
Տնօրեն, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ

Բոնն, հունվար, 2019թ

Գործադիր ամփոփում

i. Համատեքստ և ներածություն

Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից 2015 թվականին ընդունվել է Օրակարգ 2030-ը՝ իր 17 կայուն զարգացման նպատակներով (ԿՀՆ-ներ), որոնք պետք է իրագործվեն մինչև 2030 թվականը: 2030 թվականի օրակարգը համընդգրկուն բնույթ է կրում և նպատակաուղղված է մարդու իրավունքների իրացմանը բոլորի համար: Այն ընդգրկում է այնպիսի հարցերի լայն շրջանակ, ինչպիսիք են՝ սովը, աղքատությունը, առողջության հետ կապված խնդիրները, կրթությունը և արժանապատիվ աշխատանքը, կայուն տնտեսության և կենսակերպի հետ կապված հարցերը: Բացի դրանից, վերհանվում են նաև այնպիսի փոխկապակցված հարցեր, ինչպիսիք են խաղաղության և արդարության հարցերը, հաշվետվողականությանը, ֆինանսավորմանը և կոռուպցիային առնչվող կառավարման հարցերը: Կրթությունը կարևորվում է որպես առանձին նպատակ (ԿՀՆ 4): Միևնույն ժամանակ, կրթության հետ կապված թիրախներն ու ցուցանիշները ընդգրկված են նաև այլ ԿՀՆ-ների իրականացման շրջանակներում:

ՄԱԿ-ի՝ Կայուն զարգացման հարցերով բարձրատիճան ջաղաքական ֆորումը (ԲԶՖ) կենտրոնական հարթակ է ապահովում Օրակարգ 2030-ի հետագա հետևողական իրականացման և վերանայման համար: Ֆորումի 2019 թվականի նիստը նվիրված է լինելու «Մարդկանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնում ու ներառականության և հավասարության ապահովում» ընդհանուր թեմային, և դրա ընթացքում մանրամասն ուսումնասիրության կենթարկվեն ԿՀՆ 4-ի (Որակյալ կրթություն), ԿՀՆ 8-ի (Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ), ԿՀՆ 10-ի (Անհավասարության կրճատում), ԿՀՆ 13-ի (Կլիմայի փոփոխության դեմ ուղղված գործողություններ), ԿՀՆ 16-ի (Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ) և ԿՀՆ 17-ի (Գործընկերություն հանուն նպատակների) իրականացման առաջընթացն ու դրանց հետ կապված մարտահրավերները:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը, լինելով մեծահասակների կրթության և զարգացման ոլորտի առաջատար կազմակերպություններից մեկը, պատվիրել է այս ուսումնասիրությունը՝ ընդգծելու մեծահասակների ուսումնառության և կրթության (ՄՈՒԿ) կարևորությունը, ինչպես նաև վեր հանելու ցկյանս ուսումնառության հնարավորությունների շրջանակը՝ վերը նշված ԿՀՆ-ների համատեքստում:

Ուսումնասիրության նպատակն է շեշտադրել այն գաղափարը, որ մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը համընդգրկուն բնույթ ունեցող օժանդակ գործոն են ԿՀՆ 4-ի, ինչպես նաև այլ ԿՀՆ-ների իրագործման գործում: Դրանում ներկայացված են մեծահասակների կրթության և ուսումնառության կարևորության հիմնավորումները, փոխկապակցվածությունը բոլոր ԿՀՆ-ների հետ, ինչպես նաև դրա օգուտների ու շահավետության ապացույցները:

Օգուտները ներկայացվում են հետևյալ ոլորտներում.

ii. Մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը համընդգրկուն օժանդակող գործոն է

Սույն ուսումնասիրությունը հիմնավորում է, որ ՄՈՒԿ-ի և ԿՀՆ-ների միջև փոխկապակցվածությունները խարսխված են մեծահասակների կրթության և ուսումնառության մեթոդաբանական մոտեցման վրա:

ՄՈՒԿ-ը դիտարկվում է որպես մոբիլիզացիայի, հնարավորությունների ընդլայնման և վերա-

փոխման գործընթաց: Այս գործընթացի արդյունքը մի կողմից նոր գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերումն է, իսկ մյուս կողմից՝ կարող է նպաստել քաղաքական և որոշումների կայացման գործընթացներում ներգրավմանը, կամքի և գործելու կարողության ձևավորմանը: ՄՈՒԿ-ը սովորողակենտրոն է և կարող է մոբիլիզացնել սովորողներին ոչ միայն որպես գիտելիքներ ստացողների, այլև նաև որպես սեփական կյանքում և իրենց համայնքներում փոփոխություններ նախաձեռնողների: Ապացուցված է, որ ՄՈՒԿ-ը հանգեցնում է սեփական կյանքի կառավարելիության մեծացմանը (անձնային զարգացում), ավելացնում է դրական վերաբերմունքը և սոցիալական կապիտալը (փափուկ հմտություններ) և խորացնում է գիտելիքներն ու կարողություններն այնպիսի կարևորագույն ոլորտներում, ինչպիսիք են առողջությունը, ընտանիքը և աշխատանքը:

Այս ներհատուկ մեթոդաբանությունը ՄՈՒԿ-ի ուժեղ կողմերից մեկը լինելուն զուգահեռ վերջինիս առանցքային առանձնահատկությունն է և, որպես այդպիսին, չափելի օգուտներ է ապահովում ուսումնառողների և լայն հասարակության համար:

iii. **Մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը նպաստում է ԿԶՆ 4-ի (որակյալ կրթության ապահովում) իրագործմանը**

Մեծահասակների կրթությունը և ցկյանս ուսումնառությունը Օրակարգ 2030-ի և ԿԶՆ 4-ի անբաժանելի մասն են կազմում: Դա ընդունված փաստ է, որն այնուհետև հիմնավորվել է «ԿԶՆ 4. Կրթություն 2030 գործողությունների շրջանակային ծրագրով», որն ընդունվել է ՄԱԿ-ի անդամ 184 պետությունների և կրթական համայնքի կողմից: ՄՈՒԿ-ը նպաստում է ԿԶՆ 4-ի իրագործմանը բազմաթիվ այնպիսի թիրախների մասով, ինչպիսիք են՝ գրագիտությունն ու տարրական թվաբանական գիտելիքները,

կրթության հավասար մատչելիությունը, աշխատանքի կամ եկամուտ ստանալու համար անհրաժեշտ հմտությունները, հանուն կայուն զարգացման ուսումնառությունը և ուսուցիչների վերապատրաստումը:

Այսօրվա դրությամբ կարդալու և գրելու բազային հմտություններ դեռևս չունի 750 միլիոն մեծահասակ, որոնց երկու երրորդը կանայք են: ՄՈՒԿ-ը մասնավորապես կարևոր է **մեծահասակների գրագիտության և տարրական թվաբանական գիտելիքների** ապահովման համար (թիրախ 4.6):

Մեծահասակների համար գրագիտության և տարրական թվաբանական գիտելիքների առաջարկվող ծրագրերով նախապայմաններ են ստեղծվում աղքատության հաղթահարման համար, քանի որ բազմաթիվ երկրներում հենց ֆունկցիոնալ գրագիտությունն է աշխատանքային շուկա մուտք գործելու կամ աշխատանքի համար հմտություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ նախապայմանը: Ի լրումն, նման ծրագրերը նպաստում են, որ երեխաները չմեծանան ոչ գրագետ միջավայրում: Գրագիտության տնային միջավայրը նպաստում է հաջորդ սերունդների մոտ գրագիտության հմտությունների զարգացմանը, ինչպես նաև երկրի զարգացմանն ընդհանրապես (անուղղակի ներդրում թիրախ 4.1-ում): Գրագիտությունը ներառվում է նաև մեծահասակների կրթության ոլորտային այնպիսի հաջողված ծրագրերում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, փոքր բիզնեսի կառավարումը, մասնագիտական հմտությունների ձևավորումը՝ դրանով իսկ նպաստելով թիրախ 4.6-ի իրագործմանը՝ գրագիտության մասով և թիրախ 4.4-ի իրագործմանը՝ աշխատանքի համար անհրաժեշտ հմտությունների մասով: Քանի որ սովորողներն իրենց են որոշում իրենց առաջնահերթությունները և պատասխանատվությամբ մոտենում ուսման գործընթացին, ուսումնական արդյունքները լիովին համապատասխանում են մարդկանց կարիքներին, իսկ դասընթացներից դուրս մնալու կամ հրաժարվելու դեպքերը ծայրահեղ քիչ են:

«Կրթություն ի նպաստ 2-րդ հնարավորության»-ը իրենից ներկայացնում է մեկ այլ կարևոր գործիք, որն ապահովում է կրթության հավասար հասանելիություն (ինչով նաև նպաստում է թիրախ 4.5-ի իրագործմանը), քանի որ նախկինում ուսումը թողած սովորողները,

ներին հնարավորություն է տրվում հետ վերադառնալ և ֆորմավորություն ստանալ: Բազմաթիվ փաստեր կան այն մասին, որ ուսումը թողնելու հավանականությունը մեծ է սոցիալապես մարգինալացված մարդկանց մոտ: ՄՈՒԿ-ը ամեն ինչ նորից սկսելու հնարավորություն է տալիս և օգնում հաղթահարել մարգինալացման արատավոր շրջանն ու ցածր կրթական մակարդակը: Եվ նորից հարկ է նշել, որ դա իր դրական ազդեցությունն է ունենում հետագա սերունդների վրա: Ավելին, 56 երկրներում անցկացված հարցումները ցույց են տալիս, որ ընտանիքի մոր ստացած յուրաքանչյուր լրացուցիչ մեկ տարվա կրթության դիմաց միջին վիճակագրական երեխան ստանում է լրացուցիչ 0.32 տարվա կրթություն:

ՄՈՒԿ-ը նաև մեծապես նպաստում է թիրախ 4.7-ի իրագործմանը, այն է՝ **կրթություն հանուն կայուն զարգացման**: «Կրթություն հանուն կայուն զարգացման տասնամյակի» (2005-2014) արդյունքների ամփոփման ժամանակ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդգծվել է, որ այն վճռորոշ նշանակություն ունի ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթական գործընթացներում, որպեսզի բոլոր քաղաքացիները՝ երիտասարդները և մեծահասակները իմանան, թե ինչպես կարող են իրենց ներդրումն ունենալ ավելի հավասար, էկոլոգիապես կայուն ու խաղաղ աշխարհի կառուցելու գործում: ՄՈՒԿ-ի ներդրումը այս հարցում բազմաբնույթ է. այն կարող է դրսևորվել թե՛ հանրային ջատագովման, թե՛ ցուցահանդեսների և հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացման այլ միջոցառումների, թե՛ համայնքային կրթական միջոցառումների և թե՛ փողոցային արվեստի տեսքով: ՄՈՒԿ-ը շոշափում է կայուն զարգացման բոլոր ասպեկտները, որոնք կարող են լինել ամբողջ կյանքի ընթացքում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լիբերալ կրթական ծրագրերից բացի նաև գրագիտության դասընթացներն են օգնում ձևավորել ժողովրդավարական արժեքներ, նպաստում են խաղաղ համագոյությանն ու համայնքային միասնականությանը՝ միևնույն ժամանակ նպաստելով թիրախներ 4.6-ի և 4.7-ի իրագործմանը:

Ավելին, ՄՈՒԿ-ը մեծապես նպաստում է նաև ԿՉՆ 4-ի իրագործման կարևոր միջոցներից մեկին, այն է՝ **որակավորված ուսուցիչների թվի ավելացմանը** կրթական գործընթացների բոլոր մակարդակներում

(իրականացման միջոց 4.գ): ՄՈՒԿ-ը ուսուցիչներին առաջարկվում է ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցման հնարավորություն՝ այսպիսով կրթության որակի բարելավման երկարաժամկետ հեռանկարի հիմք դնելով:

iv. **Մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը նպաստում է ԿՉՆ 8-ի (արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ) իրագործմանը**

Բազմաթիվ փաստեր կան այն մասին, որ ՄՈՒԿ-ը նպաստում է արտադրողականությանը և զբաղվածության ապահովմանը (այդպիսով նպաստելով թիրախներ 8.1-ի, 8.5-ի և 8.6-ի իրագործմանը): Միկրոտնտեսական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերապատրաստումները բարձրացնում են արտադրողականության ցուցանիշները և արտադրանքի արժեքը ընկերության մակարդակում, իսկ մակրոտնտեսական վերլուծությունները փաստում են վերապատրաստումների և կրթության հետ արտադրողականության ու տնտեսական աճի փոխկապակցվածությունը: Ըստ Մասնագիտական վերապատրաստման զարգացման եվրոպական կենտրոնի՝ ՄՈՒԿ-ը սերտորեն փոխկապակցված է նորարարությունների հետ, իսկ ՄՈՒԿ-ում առավել ակտիվ ներգրավված երկրներն ամենանորարար երկրների շարքում են գտնվում: Ամբողջ աշխարհում տարբեր երկրներ արձանագրում են, որ ՄՈՒԿ-ը դրական ազդեցություն ունի ընկերությունների հաջողությունների վրա (շահութաբերության, արդյունավետության և ծառայությունների որակի մասով), նորարարական ներուժի զարգացման, փոփոխություններին հարմարվելու ունակության կամ խոցելի խմբերի ներգրավման առումով:

ՄՈՒԿ-ի ազդեցությունն ակնհայտ է նաև այն դեպքում, երբ վերապատրաստումները բնութթվով ինֆորմալ են: Սահարայից հարավ ընկած մի շարք աֆրիկյան երկրներում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինֆորմալ արտադրական պրակտիկան մարդկանց օգնել

Ե ավելի հեշտությամբ աշխատանք գտնել (Մալալի), կրթություն ստացածներին օգնել Ե աստիճանաբար ավելացնել իրենց եկամուտները (Տանզանիա), ինֆորմալ գործնական պրակտիկան հետագայում օգնել Ե նաև ֆորմալ կրթություն ստանալու հասանելիության հարցում (Տանզանիա) և նպաստել արտադրողականության ավելացմանը (Չամբիա): Հմտությունների ձեռքբերման ոչ ֆորմալ դասընթացները միտված են տեղական աշխատաշուկայի պահանջների բավարարմանը, բացի դրանից դրանք մեծապես նպաստում են օրգանական գյուղատնտեսությանը՝ բարձրացնելով արտադրողականությունն ու արդյունավետությունը՝ այդպիսով օգնելով կայունացնել ցածր եկամուտ ունեցող խմբերի եկամուտների մակարդակը: Արձանագրվել է, որ արտադրական պրակտիկան և ոչ ֆորմալ ձևաչափով գործնական պարապմունքները տեղում աշխատանքային փորձ ձեռք բերելու հնարավորություն են տվել նույնիսկ այն երիտասարդներին, ովքեր բարձրագույն կրթություն են ստացել, սակայն չեն կարողացել աշխատաշուկա մուտք գործել որակավորումների կամ հմտությունների անհամապատասխանության պատճառով: Հետևաբար, ոչ ֆորմալ մասնագիտական ուսուցումը կարող է նույն կերպ օգտակար լինել թե՛ որակավորում չունեցող աշխատողների, և թե՛ բարձր որակավորում ունեցող աշխատողների համար: Ոչ ֆորմալ եղանակով հմտությունների կատարելագործումն ու հետագա զարգացումն իր օգուտներն է բերում միկրո և փոքր ձեռնարկություններին և հանգեցնում է եկամուտների ավելացմանը: ՄՈՒԿ-ը նպաստում է տնտեսական աճին, տնտեսական արդյունավետության առավել բարձր ցուցանիշների ապահովմանը, փոքր ձեռնարկությունների գրանցման ոլորացմանը, լիարժեք և արդյունավետ զբաղվածության ապահովմանն ու աշխատանք չունեցող երիտասարդների թվի կրճատմանը (թիրախներ 8.1, 8.3, 8.5 և 8.6):

Միևնույն ժամանակ, ՄՈՒԿ-ը նպաստում է արժանապատիվ աշխատանքի ապահովմանը, աշխատանքային իրավունքների պաշտպանությանը և խթանմանը (թիրախ 8.8): ՄՈՒԿ-ի միջոցով տրամադրվում են հմտություններ և գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են աշխատանքային իրավունքների համար պայքարելու, ապահով և անվտանգ աշխատանքային միջավայր ունենալու, ինչպես նաև արհեստակցական միություններ և արտադրական այլընտրանքային այնպիսի կառույցներ ստեղծելու համար, ինչպիսին են օրինակ

կոոպերատիվները: ՄՈՒԿ-ի առանձնահատուկ ուժեղ կողմերից է հասարակության առավել խոցելի խմբերի ներգրավումն ու մեծահասակների ուսումնառության (այդ թվում վերապատրաստումների)՝ ոչ ֆորմալ ձևաչափերի առաջարկը, որոնք համադրվում են արժանապատիվ աշխատանքի, աշխատանքային իրավունքների և համատեղ գործողությունների վերաբերյալ դասընթացների հետ:

Արժանապատիվ աշխատանք գտնելու գործընթացի անքակտելի մասն են կազմում մասնագիտական հմտություններն ու աշխատողների իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը:

V. Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը նպաստում է ԿՁՆ 10-ի (անհավասարությունների կրճատում) իրագործմանը

Օրակարգ 2030-ում անհավասարությունը դիտարկվում է երկու տարբեր ձևերով: ԿՁՆ 10-ն ուղղված է անհավասարությունների, այդ թվում՝ գենդերային անհավասարության կրճատմանը երկրների ներսում և դրանց միջև (որը հավելյալ հիմնավորվում է ԿՁՆ 5-ում): Ավելին, Օրակարգ 2030-ը վստահեցնում է, որ «ոչ ոք չի անտեսվելու», և ամեն ջանք գործադրվելու է «մեկնարկային կետում ամենահետ մնացածներին օգնության հասնելու համար»՝ որդեգրելով այս մոտեցումները որպես առանցքային սկզբունքներ:

ՄՈՒԿ-ն իր ազդեցությունն ունի Մարդկային զարգացման համաթվի (ՄՀ) բոլոր ուղղությունների վրա: ՄՈՒԿ-ն ավելացնում է միջին վիճակագրական նվաճումները կրթության բնագավառում, նպաստում է առողջությանն ու բարեկեցությանը և օգնում է ապահովել արժանապատիվ կենսամակարդակ (տե՛ս ԿՁՆ 3-ի գլուխ 2-ը, ԿՁՆ 4-ի գլուխ 3-ը և ԿՁՆ 8-ի գլուխ 4-ը): Ինչպես ցույց են տալիս Մարդկային զարգացման

համաթվի տվյալները, Մարդկային զարգացման համաթիվն ուղիղ համեմատական է հավասարության բարձր ցուցանիշներին: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ **ՄՈՒԿ-ը իր դրական ազդեցությունն ունի երկրների ներսում՝** այդպիսով նպաստելով թիրախ 10.2-ի իրագործմանը (բոլորի սոցիալական, տնտեսական, քաղաքական ներառում): ՄՈՒԿ-ը հատկապես հարմարեցված է ամենախոցելի խմբերին ներգրավելուն և **առանցքային դերակատարում ունի Օրակարգ 2030-ի՝ «ոչ մեկին չանտեսելու» սկզբունքը կյանքի կոչելու համար:**

Բացի դրանից, ոչ ֆորմալ քաղաքացիական և գլոբալ կրթության մաս կազմելով՝ ՄՈՒԿ-ն արձագանքում է երկրների միջև անհավասարություններին առնչվող բազմաթիվ հարցերի, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, խտրականության դեմ պայքարը, գենդերային հավասարությունը, համաշխարհային առևտուրը, կլիմայի փոփոխությունները և (պարտադրված) միգրացիան: Սրանք ընդամենը մի քանի արդիական հարցերն են, իսկ **ՄՈՒԿ-ը մեծ ներուժ ունի՝ բարձրացնելու գլոբալ հարցերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը և խթանելու համախմբվածության մշակույթը:**

vi. **Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը նպաստում է ԿԶՆ 13-ի (կլիմայի փոփոխությունների դեմ ուղղված գործողություններ) իրագործմանը**

ԿԶՆ 13-ում կրթությունը, իրազեկվածության մակարդակի բարձրացումը և մարդկային կարողությունների հզորացումը միանշանակորեն նշվում են որպես այդ նպատակի թիրախներ և իրագործման միջոցներ (թիրախներ 13.1, 13.2 և 13բ-ի իրականացման միջոց):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղետներն ավելանում են թե՛ իրենց հաճախականությամբ, և թե՛ ուժգնությամբ, աղետների ռիսկերի կրճատման (ԱՌԿ) մարդակենտրոն կանխարգելիչ մոտեցումները ընկած են բոլոր առնչվող քաղաքականությունների հիմքում, սակայն մինչ այժմ քիչ ուշադրության են արժանացել: Ինչպես նշված է Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030թթ. գործողությունների ծրագրում, դա նշանակում է հանրության ուսուցում աղետների ռիսկերի վերաբերյալ, այդ թվում՝ աղետների կանխման, հետևանքների մեղմացման, պատրաստվածության, արձագանքելու, հետևանքների վերացման և վերականգնման վերաբերյալ գիտելիքների փոխանցում ոչ ֆորմալ և ֆորմալ կրթության, ինչպես նաև քաղաքացիական կրթության միջոցով՝ բոլոր մակարդակներում և մասնագիտական ուսուցման ու կրթության շրջանակներում: Աղետների ռիսկերի նկատմամբ կանխարգելիչ մարդակենտրոն մոտեցումներն արդյունավետ են մարդկանց հետ և հանուն մարդկանց գործելու տեսանկյունից: Միջինում տարեկան 83,000 մարդ է զոհվում բնական աղետների հետևանքով: **Աղետների ռիսկերի կրճատման մասով մեծահասակների կրթության և ուսուցման միջոցով կարող են գործողության մեջ դրվել մարդակենտրոն մոտեցումներ, ինչի շնորհիվ հնարավոր կլինի կյանքեր փրկել:**

Փարիզյան համաձայնագրում սահմանվում է, որ կլիմայի փոփոխությունը մարդկության համընդհանուր խնդիրն է, և փորձ է արվում հանրությանը հնարավորություն տալ մասնակից լինելու լուծումների որոնման հարցում: Շահագրգիռ կողմերի մեծ մասը գիտակցում է, որ կլիմայի փոփոխությունները հնարավոր չէ արագ տեմպերով կանգնեցնել, դրանք ավելի շուտ պետք է կառավարել, հետևաբար դրանց հետևանքների մեղմացումն ու դրանց դիմակայելն ավելի արդիական են դառնում, ինչը հանգեցնում է մի շարք ամբողջովին նոր հմտությունների անհրաժեշտության: Գյուղաբնակները կիրառում կամ կրկին թարմացնում են երաշտադիմացկուն մշակաբույսերի սերմերի վերաբերյալ իրենց գիտելիքները, հումանիտար աջակցությամբ զբաղվողները սկսում են ուսումնասիրել, թե ինչպես կարելի է «ավելի լավ կառուցել», քաղաքացիական ինժեներները սկսում են ավելի շատ

ուշադրություն դարձել վերականգնվող էներգիայի աղբյուրներին, կառավարիչները փորձի փոխանակում են անում, թե ինչպես կարելի է պլանավորել բոլոր տեսակի ապրանքների արտադրությունն՝ հաշվի առնելով հնարավոր փոփոխական եղանակային երևույթները: **Քանի որ մեր միջավայրը փոփոխության է ենթարկվում, ավելանում է նաև ավանդական հմտությունների վերականգնման և նորերի ձեռքբերման անհրաժեշտությունը:** Այդ ամենի իրագործման համար համապատասխան հնարավորություններ կարող է տրամադրել մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը:

Միևնույն ժամանակ ավելանում է նաև կլիմայի փոփոխությունների դեմ ուղղված գործողությունների նոր քաղաքականությունների անհրաժեշտությունը: 119 երկրներում անցկացված հարցման հիման վրա կազմված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կլիմայի վերաբերյալ գիտելիքների կատարելագործումը և հանրության կողմից կլիմայի փոփոխությունների տեղային նշանակության ազդեցությունների գիտակցումը կարևոր նշանակություն ունեն կլիմայի փոփոխությունների դեմ ուղղված գործողություններում հանրության ներգրավման և օժանդակության համար: **ՄՈՒԿ-ը կարող է առանցքային դերակատարում ունենալ կլիմայի փոփոխությունների դեմ ուղղված գործողություններում քաղաքացիների ներգրավման գործում:**

vii. **Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը նպաստում է ԿԶՆ 16-ի (խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ) իրագործմանը**

Մեծահասակների կրթությունը կարևոր դեր ունի հակամարտությունների կարգավորման, կայուն խաղաղության խթանման և հաստատությունների գործունեության ու հաշվետվողականության նկատմամբ մոնիթորինգի նպատակներով համայնքները մոբիլիզացնելու և կրթելու գործում: Մեծահասակների ոչ ֆորմալ կրթությունը, օրինակ՝ համայնքային ուսուցման կենտրոններում կամ երիտասարդական կենտրոններում կազմակերպվող միջոցառումների տեսքով, կարող է էապես թուլացնել տվյալ տարածքում բնակչության տարբեր խմբերի միջև գոյություն ունեցող լարվածությունները՝ անկախ նրանից՝ դրանք միջեթնիկ բնույթ են կրում, թե միգրանտների ու տեղի բնակչության միջև եղած լարվածություններ են: ՄՈՒԿ-ի միջոցով հնարավոր է հասնել հակամարտությունների կարգավորման ու լուծմանը: Ավելին, մեծահասակների կրթությունը օգնում է զարգացնել այնպիսի կարողություններ, որոնք հնարավորություն են տալիս պահանջել հաստատություններին և քաղաքական գործիչներին հաշվետու լինելը: Դա հանգեցնում է նրան, որ պետական հաստատությունները դառնում են ավելի վստահելի, ինչն էլ իր հերթին բերում է սոցիալական կապիտալի ավելացմանը: Եթե փոխադարձ հզորացման այս գործընթացը պատշաճ աշխատի, ապա կարելի է փաստել, որ մեծահասակների կրթությունն իրենից միայն օժանդակ գործիք չի ներկայացնում: Հաշվետու և մասնակցային հաստատությունների կայացումը և իրազեկ ու ակտիվ քաղաքացիական բնակչության ձևավորումը իրենցից ներկայացնում են երկու անքակտելի գործընթացներ:

Բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ մեծահասակների կրթության ծրագրերը կարող են անմիջականորեն նպաստել բռնությունների կրճատմանը՝ հակամարտությունների կարգավորման միջոցով (թիրախ 16.1), դաժան վերաբերմունքի, երեխաների շահագործման և թրաֆիքինգի նվազեցմանը (թիրախ 16.2), օրենքի գերակայության ապահովմանը (թիրախ 16.3), կոռուպցիայի կրճատմանը (թիրախ 16.5), արդյունավետ գործող հաստատությունների զարգացմանը (թիրախ 16.6), որոշումների կայացման գործընթացում հանրության ներգրավման (թիրախ 16.7) և հանրության համար տեղեկատվության հասանելիության ապահովման միջոցով (թիրախ 16.10):

տազա միջոլորտային համագործակցություն, վստահել մարդկանց կարողություններին, համապատասխան ազգային մակարդակում մշակել լոբբինգի և քարոզչության ռազմավարություններ, ապահովել ավելի շատ տեսանելիություն և, վերջապես, ավելի շատ ֆինանսական միջոցներ տրամադրել կրթության ներառական և ինտերակտիվ գործընթացների խթանման համար: Մեծահասակների ուսումնառության և կրթության գործընթացի հզորացումը կարևոր ու առանցքային քայլ է հանուն մարդկության և մոլորակի «մեր աշխարհը վերափոխելու» գործում:

VIII. Եզրափակիչ դիտարկումներ

Մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը Էական ներդրում ունի Կայուն զարգացման բոլոր նպատակների իրագործման հարցում: Դրա սովորողակենտրոն մոտեցումը հատկապես արդյունավետ է մարգինալացված խմբերին ներգրավելու հարցում, և բացի դրանից՝ լիովին համապատասխանում է Օրակարգ 2030-ի «ոչ մեկին չանտեսելու և հետ չթողնելու» սկզբունքին: Ժամանակակից փոփոխվող աշխարհում շատերն են վախենում շրջակա միջավայրի դեգրադացման, գլոբալ միգրացիայի և անհավասարությունների ավելացման հետ կապված մարտահրավերներից: Իր Էությամբ, մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը նպատակաուղղված է մարդկանց այն հնարավորությունների ավելացմանը, որոնց միջոցով կկարողանան գտնել կամ վերագտնել իրենց կյանքի նկատմամբ վերահսկողությունը և հնարավորություն կունենան ներգրավվելու որոշումների կայացման գործընթացներում: Մեծահասակների կրթությունը սովորողներին հնարավորություն է տալիս իրենց ներդրումն ունենալ իրենց համայնքի զարգացման գործում: Զետևաբար, մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը յուրաքանչյուր ԿՁՆ-ի անբաժանելի մասն է կազմում և հանդիսանում է խիստ անհրաժեշտ գործիք: Զինգերորդ գլխում ներկայացված առաջարկություններով նախանշվում է, թե ինչպես կարելի է ավելի օպտիմալացնել ՄՈՒԿ-ը: Դրանից առավելագույնս օգուտ քաղելու համար անհրաժեշտ է, օրինակ, ապահովել հե-

1

Ներածություն.
վերլուծության
նպատակը,
կառուցվածքը և
մեթոդաբանությունը

ԿԱՅՈՒՆ
ԶԱՐԴԱՅՄԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐ

Վերափոխելով մեր աշխարհը.

Մենք պարտավորվում ենք ներառական և համահավասար որակյալ կրթություն և ապահովել բոլոր մակարդակներում՝ նախադպրոցական, տարրական, միջնակարգ, բարձրագույն և մասնագիտական ուսուցման փուլերում: Բոլոր մարդկանց՝ անկախ սեռից, տարիքից, ռասայից կամ էթնիկ ծագումից, ինչպես նաև հաշմանդամություն ունեցողներին, միգրանտներին, տեղաբնիկ ժողովուրդներին, երեխաներին և հատկապես խոցելի իրավիճակում գտնվողներին պետք է հասանելի լինեն ցկյանս ուսումնառության հնարավորությունները, որոնք կօգնեն նրանց ձեռք բերելու այնպիսի գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են հնարավորությունների բացահայտման և օգտագործման ու հասարակության կյանքում լիարժեք մասնակցության համար: (ՕՐԱԿԱՐԳ 2030)

1.1 Ուսումնասիրության հիմքը և նպատակը

Միավորված ազգերի կազմակերպությունը 2015 թվականին ընդունեց Օրակարգ 2030-ը՝ իր 17 կայուն զարգացման նպատակներով (ԿՀՆ-ներ), որոնք պետք է իրագործվեն մինչև 2030 թվականը: Օրակարգ 2030-ը համապարփակ բնույթ ունի և ընդգրկում է հարցերի այնպիսի լայն շրջանակ, ինչպիսիք են՝ սովը, աղքատությունը, առողջության հետ կապված խնդիրները, կրթությունը և արժանապատիվ աշխատանքը, կայուն տնտեսության և կենսակերպի հետ կապված հարցերը: Բացի դրանից, վերհանվում են նաև այնպիսի փոխկապակցված հարցեր, ինչպիսիք են խաղաղության և արդարության հետ կապված հարցերը, հաշվետվողականության, ֆինանսավորման և կոռուպցիայի առնչվող կառավարման հարցերը: Կրթությունը կարևորվում է որպես առանձին նպատակ (ԿՀՆ 4), միևնույն ժամանակ, (մեծահասակների) կրթության հետ կապված թիրախներն ու ցուցանիշները ընդգրկված են նաև այլ ԿՀՆ-ների իրականացման շրջանակներում:

Եվ դա բոլորովին էլ պատահական չէ, քանի որ Օրակարգ 2030-ի հիմքում ընկած են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերը:

րերը և դրա մասին նշված է Չարգացման իրավունքի մասին հռչակագրում:¹ Չնայած որ ԿՀՆ-ները կամավոր բնույթ են կրում, այդուհանդերձ յուրաքանչյուր ԿՀՆ-ի բովանդակությունն արդեն իսկ ամրագրված է միջազգայնորեն պարտադիր՝ մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերից որևէ մեկում:²

Ինչպես նշում է ՄԱԿ-ի Սոցիալական և տնտեսական խորհուրդը. «Կրթությունն ինքնին թե՛ մարդու իրավունք է, և թե՛ մարդու այլ իրավունքների իրականացման անփոխարինելի միջոց: Որպես վստահության և հնարավորությունների ընդլայնման միջոց՝ կրթությունը այն ամենահիմնական միջոցն է, որի օգնությամբ տնտեսապես և սոցիալապես մարգինալացված մեծահասակները և երեխաները կարող են դուրս գալ աղքատությունից և հնարավորություններ ձեռք բերել իրենց համայնքների կյանքում լիարժեք մասնակցություն ունենալու համար»:³

1 UN General Assembly: Transforming our world: the 2030 Agenda for Sustainable Development, 2015, paragraph 10.

2 Մանրամասների համար, տե՛ս <http://sdg.humanrights.dk/en>. Կայքում նկարագրվում է, որ Կայուն զարգացման 17 նպատակները խաղաղված են մարդու իրավունքների վրա, և կոնկրետ փոխկապակցվածություն են ապահովում 169 թիրախների և միջազգային ու տարաշաճիչության մարդու իրավունքներին, շրջակա միջավայրին առնչվող բազմաթիվ գործիքների հետ:

3 UN Economic and Social Council: Implementation of the international covenant on economic, social and cultural rights. General Comment No. 13, 1999, paragraph 1.

Նմանապես, Օրակարգ 2030-ի հետ կապված հարցերի քննարկման շրջանակներում կրթական համայնքը ընդգծում է կրթության կարևորությունը՝ որպես Օրակարգ 2030-ի բոլոր նպատակների իրագործման առանցքային նպատակ: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը, լինելով մեծահասակների կրթության և զարգացման ոլորտի առաջատար կազմակերպություններից մեկը, պատվիրել է այս ուսումնասիրությունը՝ մեծահասակների ուսումնառության և կրթության (ՄՈՒԿ) կարևորությունը ընդգծելու, ինչպես նաև ցկյանս ուսումնասիրության հնարավորությունների շրջանակը վեր հանելու նպատակով:

Ուսումնասիրության նպատակն է հիմնավորել այն իրողությունը, որ մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը կարևոր է ոչ միայն ԿԶՆ 4-ի իրագործման համար, այլ նաև անհրաժեշտ միջոց է հանդիսանում այլ ԿԶՆ-ների իրագործման համար: Ուսումնասիրության մեջ ներկայացված են մեծահասակների ուսումնառության և կրթության կարևորության հիմնավորումները, փոխկապակցվածությունը բոլոր ԿԶՆ-ների հետ՝ ՄՈՒԿ օգտակարության տեսանկյունից:

ՄԱԿ-ի՝ կայուն զարգացման հարցերով Բարձրաստիճան քաղաքական ֆորումը (ԲԶՖ) կենտրոնական հարթակ է ապահովում Օրակարգ 2030-ի հետագա հետևողական իրականացման և վերանայման համար: Ֆորումի 2019 թվականի կիստը նվիրված է լինելու «Մարդկանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնում ու ներառականության և հավասարության ապահովում» ընդհանուր թեմային, և դրա ընթացքում մանրամասն ուսումնասիրվելու են հետևյալ ԿԶՆ-երի մասով իրականացման առաջընթացն ու դրանց հետ կապված մարտահրավերները:

- ԿԶՆ 4. Ապահովել ներառական ու համահավասար որակյալ կրթություն և ցկյանս ուսումնառության հնարավորություններ բոլորի համար
- ԿԶՆ 8. Խթանել շարունակական, ներառական և կայուն տնտեսական աճ, լիարժեք և արտադրողական զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար

- ԿԶՆ 10. Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև
- ԿԶՆ 13. Ձեռնարկել անհետաձգելի գործողություններ՝ կլիմայի փոփոխությունների և դրանց ազդեցությունների դեմ պայքարելու համար
- ԿԶՆ 16. Խթանել խաղաղ և ներառական հասարակության կայացումը՝ հանուն կայուն զարգացման, ապահովել արդարադատության հասանելիությունը բոլորի համար, ստեղծել արդյունավետ, հաշվետու և ներառական հաստատություններ բոլոր մակարդակներում
- ԿԶՆ 17. Հզորացնել իրագործման միջոցները և ակտիվացնել գլոբալ գործընկերությունը հանուն կայուն զարգացման:⁴

Լինելով ԲԶՖ ավանգարդում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը կկազմակերպի «Մեծահասակների կրթություն և զարգացում» իր հերթական համաժողովը (ՄԿԶՀ), որի ընթացքում նույնպես կդիտարկվեն ՄՈՒԿ-ի դերն ու հնարավորությունները ԿԶՆ-ների իրագործման հարցում: Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները կօգտագործվեն մի շարք առանցքային միջոցառումների համար, որոնք տեղի են ունենալու 2019 թվականին ու նաև՝ հնարավոր է, դրանից հետո:

1.2 Վերլուծության կառուցվածքը

Այս վերլուծության ներածությանը հաջորդող 2-րդ գլխում խոսքը գնում է ՄՈՒԿ-ի համընդգրկուն բնույթի մասին՝ կարևորելով, որ այն կամ հնարավորություններ է ընձեռում բոլոր ԿԶՆ-ների իրագործման համար, կամ էլ ամրապնդում է դրանց արդյունքները: Այնուհետև, 2-րդ գլխում անդրադարձ է արվում տարբեր ԿԶՆ-ների և համապատասխան գործողությունների միջև առկա բազմաթիվ կապերին: Միմյանց փոխլրացնող այս գործողությունները և ՄՈՒԿ-ի դերը ներկայացված են որոշ ԿԶՆ-ների իրականացման գործում արդեն իսկ ԲԶՖ-ի կողմից 2017 և 2018

4 ԿԶՆ 17-ը՝ որպես համընդգրկուն ԿԶՆ (իրականացման և գործընկերության միջոց) արդեն իսկ քննարկվել դիտարկվել է 2018 և 2017 թվականներին:

թվականներին արձանագրված հաջողությունների տեսքով, որոնցից են, օրինակ՝ ԿԶՆ 1՝ աղքատության հաղթահարում և ԿԶՆ 3՝ առողջապահության և բարեկեցության ապահովում:

3-րդ և 4-րդ գլուխներն անդրադառնում են ԿԶՆ 4-ին, 8-ին, 10-ին, 13-ին և 16-ին, որոնք դիտարկվելու են Բարձրաստիճան քաղաքական ֆորումի կողմից 2019 թվականին: Գլուխ 3-ում, մասնավորապես, քննարկվում է ՄՈՒԿ-ի դերակատարությունը՝ ԿԶՆ 4-ի առանցքային թիրախների իրագործման հարցում:

Գլուխ 4-ում անդրադարձ է արվում ԿԶՆ-ների 8-ին, 10-ին, 13-ին և 16-ին, և ներկայացվում է, թե ինչպես են դրանց փոխկապակցված ԿԶՆ 4-ի հետ, և թե որքանով է ՄՈՒԿ-ը նպաստում դրանց իրագործմանը: Սկզբում գնահատվում է այդ ԿԶՆ-ներից յուրաքանչյուրի, դրանց թիրախների իրականացման և ցուցանիշների ապահովման հարցում մեծահասակների կրթության և ուսումնառության դերը:

Ամփոփիչ պարբերությունում ներկայացվում է, թե մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը ինչ ազդեցություն ունի յուրաքանչյուր ԿԶՆ-ի իրականացման գործում:

Եվ վերջում, գլուխ 5-ում ներկայացված են ընդհանուր հակիրճ եզրակացություններ և առաջարկություններ՝ ուղղված մեծահասակների կրթության համայնքին:

1.3 Վերլուծության մեթոդաբանությունը

Ուսումնասիրությունը հիմնված է միջազգային կազմակերպությունների գեկույցների և ուսումնասիրությունների վերլուծության վրա, որոնք առանցքային դերակատարություն ունեն Օրակարգ 2030-ի իրականացման, համակարգման կամ վերանայման գործում, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և առանձին գիտնականների՝ ԿԶՆ-ների վերաբերյալ դիսկուրսներում ներկայացված կարծիքների ու քննարկումների արդյունքների վրա: Վերլուծության են ենթարկվել և ներառվել են

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի գլխամասային գրասենյակի և տարբեր երկրներում տեղակայված գրասենյակների, տեղական գործընկերների և մեծահասակների կրթության (վերազգային) ցանցերի կողմից ստեղծված արդյունքները, իսկ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի ու իր միջազգային ՄՈՒԿ ոլորտի իր գործընկեր փորձագետները օժանդակել են համապատասխան գրականության որոնման հարցում:

Ուսումնասիրության մեջ մեծահասակների կրթության և ուսումնառության մասով որպես հիմք է վերցվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մեծահասակների կրթության և ուսումնառության վերաբերյալ համաշխարհային մոնիթորինգային գեկույցում (ՄԿՈՒՀԶ3 [GRALE3]) գործածված սահմանումը, որի համաձայն, ՄՈՒԿ-ը՝

«... Ընդգրկում է ֆորմալ, ոչ ֆորմալ, ինֆորմալ կրթության և չկանխամտածված ուսուցման բոլոր ձևերը (հանրակրթական և մասնագիտական, նաև տեսական ու գործնական), որոնք ստանում են մեծահասակները (ինչպես այդ հասկացությունը սահմանված է երկրներից յուրաքանչյուրում): ՄՈՒԿ-ի մասնակիցները սովորաբար ավարտում են նախնական /հիմնական կրթությունը և մասնագիտական ուսուցումը և այնուհետև կրկին վերադառնում որևէ այլ ձևաչափով ուսուցմանը: Սակայն բոլոր երկրներում լինում են երիտասարդներ և մեծահասակներ, որոնք հնարավորություն չեն ունեցել դպրոց հաճախել կամ ավարտել դպրոցական կրթությունը նախատեսված տարիքում, ուստի նրանք մասնակցում են ՄՈՒԿ ծրագրերին, այդ թվում՝ գրագիտության և այլ բազային հմտությունների ձեռքբերման կամ «կրթություն հանուն երկրորդ հնարավորության» ծրագրերին, որոնց միջոցով ձեռք են բերում պաշտոնապես ճանաչելի վկայականներ»:⁵

ԿԶՆ-ների համատեքստում մեծահասակների կրթությանը և ուսումնառությանը հղում անելիս ոչ միշտ են նշվում կոնկրետ մեծահասակները: Փոխարենը, որոշ տեղերում պարզապես ընդհանուր հղում է արվում ցկյանս ուսումնառությանը, որը թեև չի սահմանափակվում միայն մեծահասակների կրթությամբ, այն ներառում է որպես իր բաղադրիչ: Ուստի, լրացնելով ՄՈՒԿ-ի՝ վերը բերված սահմանումը, սույն

5 UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 29.

ուսումնասիրության մեջ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանմանը համապատասխան, ցկյանս ուսումնառությունը ընկալվում է հետևյալ կերպ՝

« (...) խարսխված լինելով և՛ սովորելու, և՛ կյանքը բնականոն ապրելու համատեղման սկզբունքի վրա, ներառում է ուսումնական գործընթացներ բոլոր տարիքի մարդկանց համար (երեխաներ, երիտասարդներ, մեծահասակներ և տարիքով մարդիկ, աղջիկներ և տղաներ, կանայք և տղամարդիկ)՝ ամբողջ կյանքի ընթացքում մարդկանց ուղեկցող բոլոր իրողություններում (ընտանիք, դպրոց, համայնք, աշխատանքի վայր և այլն) և իրականացվում է տարբեր ձևաչափերով (ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ), որոնք բոլորը միասին ապահովում են կրթության բավականին լայն սպեկտրի կարիքների ու պահանջների բավարարումը: Ցկյանս ուսումնառությունը խթանող կրթական համակարգերում որդեգրված են համապարփակ և բոլոր հատվածներն ընդգրկող մոտեցումներ, որոնք ներառում են բոլոր ենթահատվածները և մակարդակները՝ ապահովելու համար կրթության հնարավորությունների տրամադրումը բոլորի համար»:⁶

⁶ UNESCO Institute for Lifelong Learning: Technical Note Lifelong Learning, page 2.

2

Մեծահասակների
ուսումնառության
և կրթության
համընդգրկուն
բնույթը



Հիմնական ուղերձները

- ➔ **Մեծահասակների ուսումնառություն և կրթություն.** ՄՈՒԿ-ը մոբիլիզացման, հնարավորությունների ընդլայնման և վերափոխման գործընթաց է: ՄՈՒԿ-ը սովորողակենտրոն է և կարող է մոբիլիզացնել սովորողներին ոչ միայն որպես գիտելիքներ ստացողների, այլև նաև որպես սեփական կյանքում և իրենց համայնքներում փոփոխություններ նախաձեռնողների: Այս ներհատուկ մեթոդաբանությունը ՄՈՒԿ-ի ուժեղ կողմերից ու հիմնական առանձնահատկություններից է:
- ➔ **Զափելի օգուտներ.** ՄՈՒԿ-ը չափելի օգուտներ է ապահովում ուսումնառուների և լայն հասարակության համար:
- ➔ **ԿԶՆ-ների մասով ազդեցությունը.** մեծահասակների ուսումնառությունը և կրթությունն արժեք է ավելացնում ոչ միայն ԿԶՆ 4-ի, այլև նաև բոլոր ԿԶՆ-ների իրականացման գործում: Դրա մասին են վկայում բազմաթիվ՝ կոնկրետ դեպքերի դիտարկումը, թեմատիկ հետազոտություններն ու միմյանց միջև փոխներգործությունների վերաբերյալ պարբերական ուսումնասիրությունները: Բացի ԿԶՆ 4-ի մասով ունեցած ազդեցությունից, այն մեծապես նպաստում է նաև ԿԶՆ 1-ի (Ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով) և ԿԶՆ 3-ի (Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից) իրականացմանը:

2.1. Մեծահասակների ուսումնառություն և կրթություն. ուսումնառուների ինքնավստահության ամրապնդում և հնարավորությունների ընդլայնում՝ ի նպաստ բոլոր ԿԶՆ-երի

Կայուն զարգացման Օրակարգ 2030-ի նախաբանում հստակ սահմանվում է, որ նպատակները «մեկ ամբողջություն են կազմում և անբաժանելի են...»: Այնուամենայնիվ, ԿԶՆ-ների ամբողջական, անբաժանելի և փոխկապակցված բնույթը այդպես ակնհայտորեն չի ներկայացվում նպատակների և թիրախների նկարագրության մեջ, ինչպես որ կարելի էր ակնկալել: Ինչպես նշվում է Կրթության վերաբերյալ համաշխարհային մոնիթորինգի զեկույցում՝ «Կրթությունն առանցքային դեր ունի Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ-ների) իրականացման գործում: Մինչդեռ ԿԶՆ 4-ից բացի այն արտացոլված է միայն հինգ ցուցանիշներում:

Այլ ցուցանիշներում կրթության հարաբերական բացակայությունը վկայում է այն մասին, որ ԿԶՆ-ների իրականացման համար դրա կարևորությունը ամբողջությամբ չի գիտակցվում»:⁷

Սակայն այս ուսումնասիրության մեջ հիմնավորվում է, որ ՄՈՒԿ-ի և ԿԶՆ-ների միջև փոխներգործությունները խարսխված են մեծահասակների ուսումնառության և կրթության մեթոդաբանական մոտեցման վրա: ՄՈՒԿ-ը դիտարկվում է որպես մոբիլիզացման, հնարավորությունների ընդլայնման և վերափոխման գործընթաց: Այս գործընթացի արդյունքը չի սահմանափակվում միայն նոր գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերմամբ. այն կարող է նպաստել նաև քաղաքական և որոշումների ընդունման գործընթացներում ներգրավմանը, կամարտահայտության և գործելու կարողության ձևավորմանը:

Այս ամենը լավագույնս կարող է ի ցույց դրվել «ՌԵՖԼԵԿՏ»-ի [REFLECT] միջոցով (Ֆրեյդայան վերածնված գրագիտություն՝ հանրության վստահության և հնարավորությունների ընդլայնման մեթոդներով), որը լայն ճանաչում ունեցող մասնակցային մեթոդաբանություն է՝ ուղղված գրագիտության և տարրական թվաբանության գիտելիքների մակարդակի բարձրաց-

7 UNESCO: Global Education Monitoring Report 2017/18, 2017, page 256.

մանր: Հետևելով «ՌԵՖԼԵԿՏ»-ի մեթոդաբանությանը՝ ուսումնառուները միավորվում են գրագիտության խմբակներում: «Յուրաքանչյուր գրագիտության խմբակ ինքն է մշակում իր սեփական ուսումնական նյութերը՝ այնպիսի քարտեզների, աղյուսակների, օրացույցների և գծապատկերների կազմման միջոցով, որոնք արտացոլում են իրենց տեղի իրականությունը, համակարգում են ուսումնառուների մոտ առկա գիտելիքները և նպաստում են տեղական պրոբլեմների մանրամասն վերլուծությանը: (...) Այս մեթոդն ուղղված է ակտիվ երկխոսության խթանմանն ու վստահության ձևավորմանը: Զանի որ մասնակիցներն իրենք են մշակում իրենց նյութերը, հետևաբար նրանք ստանձնում են առաջ եկող խնդիրների պատասխանատվությունն ու առավել հակված են տեղական մակարդակում գործողություններ ձեռնարկելուն, իրենց վարքագիծը կամ վերաբերմունքը փոխելուն»:⁸

Երեք տարբեր երկրների 100 գյուղերում անցկացված՝ «ՌԵՖԼԵԿՏ» ծրագրի օրկնակելի գնահատման տվյալներից⁹ կարելի է առանձնացնել հետևյալ արդյունքները.

- Ի սկզբանե «ՌԵՖԼԵԿՏ» խմբակներում ներգրավված մեծահասակների թվից Սալվադորում 65%-ը,

Բանգլադեշում 60%-ը, իսկ Ուգանդայում 68%-ը մեկ տարվա ընթացքում ձեռք են բերել գրագիտության բազային գիտելիքներ:

- Հանրային և համայնքային կազմակերպություններում ավելի ակտիվ մասնակցությունը պայմանավորված է Ուգանդայում և Սալվադորում «ՌԵՖԼԵԿՏ» խմբակներում մասնակցությամբ: Հատկապես ապշեցուցիչ է այն հանգամանքը, որ Սալվադորում սովորողների 61%-ը նշել են, որ ներկայումս պատասխանատու պաշտոններ են ստանձնել հանրային կազմակերպություններում, որոնք չեն զբաղեցրել նախքան «ՌԵՖԼԵԿՏ» գրագիտության ծրագրերին մասնակցելը (օրինակ՝ որևէ կառույցի նախագահ, քարտուղար կամ գանձապահ համայնքի ավագանիում, որևէ պաշտոն կոոպերատիվների տնօրինությունում, վարկային հանձնաժողովում, ծնողական կոմիտեներում, առողջապահական հարցերով հանձնաժողովներում, կանանց կամ ծխական կազմակերպություններում):
- Գրագիտության դասերն ուղղակիորեն հանգեցրել են գործողությունների իրականացմանը: «Դրանք եղել են թե՛ տնտեսական ոլորտում (հացահատիկի պահեստների կառուցում, մշակաբույսերի դիվերսիֆիկացում, կոոպերատիվ առ ու վաճառք), թե՛ համայնքային ծրագրերում (փոքր ենթակառուցվածքների հետ կապված աշխատանքների իրականացում, օրինակ՝ ճանապարհների վերակառու-

8 Overseas Development Administration: Occasional papers on education. No. 17, 1996, paragraphs 2.1. and 2.4.

9 Overseas Development Administration: Occasional papers on education. No. 17, 1996, paragraphs 4.2. and 4.3.

Եթովպիայում գրագիտության շրջիկ ծրագրերը և համայնքային ուսումնական կենտրոնները Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի ծրագրերի առանցքային մասն են կազմում: ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ցկյանս ուսումնառության ինստիտուտն ամփոփ նշում է հետևյալը. «ԿԶԼ 4-ին համահունչ՝ գյուղական համայնքներին ներգրավելու նպատակով կառավարությունը՝ Պերմանիայի մեծահասակների կրթության ասոցիացիայի հետ համատեղ նախաձեռնել է գրագիտության շրջիկ ծրագրեր:

Գրագիտություն ուսուցանողները աշխատում են քոչվոր կյանքով ապրողների հետ, որոնք հեռանում են տակից՝ իրենց ընտանի կենդանիների համար նոր արտադրարժեք գտնելու նպատակով: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հետ մեկ այլ համատեղ նախաձեռնություն է ՀՈՒԿ-երի պիլոտային գործարկումը, որոնք շարունակական կրթության հնարավորություններ են տրամադրում՝ համայնքի հզորացման նպատակով: Նախատեսված գործողությունները ներառում են սոցիալ-մշակութային միջոցառումների կազմակերպում, որոնք խրախուսում են սատարում են կանանց մասնակցությունը՝ այդպիսով ամրապնդելով նրանց ակտիվ դերը հասարակության կյանքում:

Աղբյուրը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ցկյանս ուսումնառության ինստիտուտ. Ցկյանս ուսումնառության խրախուսում բոլորի համար. Եթովպիայի, Էթիոպիայի, Նամիբիայի, Ռուանդայի և Տանզանիայի Միացյալ Հանրապետության փորձը, 2018թ.:

**Ներդիր 1.
Եթովպիա.
Գրագիտություն
և համայնքային
ուսուցման կենտրոններ
(ՀՈՒԿ)**

ցում, դպրոցների վերանորոգում, ջրատարների վերանորոգում), թե՛ շրջակա միջավայրի ոլորտում (սանդղավորում, օրգանական պարարտանյութեր, ծառաբուծարաններ, ծառատունկ), և թե՛ առողջապահության ոլորտում (խողովակային ջրհորների փոխում, զուգարանների կառուցում, աղբի մաքրում, կեղտաջրերի մաքրում): Այդ գործողությունների իրականացման առանցքային գործոն է հանդիսացել այն հանգամանքը, որ ուսումնառությունը ինքնուրույն են հանգել իրենց վերլուծությունների հիման վրա գործողություններ ձեռնարկելու որոշմանը:

- Բացի դրանից, «ՌԵՖԼԵԿՏ» խմբակները դրական ազդեցություն են ունեցել առողջությամբ ապահովության հարցերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման վրա: Դրանք բազմաթիվ համայնքներում կյանքի են կոչվել կոնկրետ գործողությունների տեսքով, որոնք մասնավորապես ներառել են արտաքննությունների կառուցումը և թափոնների առավել արդյունավետ հեռացումը:

Այլ կերպ ասած, այն միջամտությունը, որը կարելի է ասել նախանշվել է ԿՀՆ 4-ի շրջանակներում, հանգեցրել է առողջապահության, տնտեսության, պարենային, շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկացվածությանը, գյուղատնտեսության ոլորտում գործողությունների և արդյունքների, ինչպես նաև բարելավել քաղաքացիների կրթությունն ու մասնակցությունը: Այն արդարացիորեն ապահովել է բազմաթիվ ԿՀՆ-ների մասով նպատակների իրականացումը: Մասնավորապես, Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրներում, ինչպես նաև Լատինական Ամերիկայում այս մեթոդը լայն ճանաչում ունի և մեծապես գնահատվում է:

Օրինակ, Մալավիի Կանանց և Երեխաների Չարգացման Հարցերով Նախարարության կողմի իրա-

կանցրած գնահատման մեջ բավականին դրական եզրակացություն է տրվում մեթոդին, նշելով, որ «այն խթանում է մասնակիցների կողմից իրենց կյանքը քննադատաբար գնահատելու, իրենց ապագան կառավարելու, գրագիտության իրենց հմտությունները բարձրացնելու, իրենց համայնքին կամ իրավիճակին առնչվող բառապաշարի ձևավորման, անհատական և կոլեկտիվ գործողություններ նախաձեռնելու նպատակի շուրջ իրենց գիտելիքների զարգացման ու համախմբման հնարավորությունները»:¹⁰ Ավելին, Տանզանիայի փորձը վկայում է այն մասին, որ այս մեթոդը հարմար է իր ազդեցության բազմապատկման տեսանկյունից և կարող է ընդգրկել միլիոնավոր ուսումնառուների: Տանզանիայում «Մեծահասակների համալիր կրթություն համայնքներում» (ՄՀԿՀ) ծրագիրը փոխկապակցվել է «ՌԵՖԼԵԿՏ» մոտեցումը մասնագիտական ու կենսական անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման հետ և նպաստել է շրջանառու ֆոնդից կենսամակարդակի բարելավման համար փոխառությունների տրամադրման հնարավորությունների ապահովմանը:

Իր մեկնարկից հետո ՄՀԿՀ ծրագիրը մոտ 14 միլիոն երիտասարդ և մեծահասակ ուսումնառուների ուսուցման հնարավորություններ է տրամադրել, և ապահովել է մեծ թվով կանանց ներգրավումը:¹¹

Ինչ վերաբերում է Եվրոպային, ապա այդտեղ արդյունքները հիմնավորվում են ցկյանս ուսումնառության ավելի լայն օգուտների վերաբերյալ ԲեԼԼ (BeLL) հարցմամբ,¹² որը Եվրոպայում անցկացվել է Արևելյան Ֆինլանդիայի համալսարանի կողմից ընդհանուր 8,600 մասնակիցների շրջանում: Տվյալ դեպքում հարցումը հիմնականում կենտրոնացած է եղել այսպես կոչված մեծահասակների «լիբերալ» ուսումնառության, այսինքն՝ ոչ ֆորմալ, ոչ մասնագիտական դասընթացների վրա:

10 Ministry of women and child development of Malawi: The development of and state of adult learning and education, 2008, page 21.

11 UNESCO Institute for Lifelong Learning: Promoting lifelong learning for all: The experiences of Ethiopia, Kenya, Namibia, Rwanda and the United Republic of Tanzania, 2018, page 46.

12 Արևելյան Ֆինլանդիայի համալսարանի կողմից հարցումն իրականացվել է ԲեԼԼ-ի ավելի լայն ուսումնասիրության շրջանակներում, որն անցկացվել է 10 ընկերություններից բաղկացած կոնսորցիումի կողմից և ֆինանսավորվել է ԵՄ-ի կողմից: Մանրամասների համար տե՛ս <http://www.bell-project.eu/cms/index.html>

Այս դասընթացները սովորաբար չեն գրանցվում և (առնվազն ուղղակիորեն) ուղղված չեն աշխատաշուկային համապատասխանող հմտությունների ձևավորմանն ու զբաղվածության ապահովմանը: Հարցման արդյունքում տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ օգուտները կարելի է դասակարգել երեք խմբի. 1) սեփական կյանքի նկատմամբ վերահսկողություն, 2) հարաբերություններ և սոցիալական կապիտալ և 3) առողջություն, ընտանիք ու աշխատանք: «Արդյունքները ցույց են տալիս, որ մեծահասակների լիբերալ կրթության դասընթացներին մասնակցությունը բազմաթիվ օգուտներ է ապահովում թե՛ անհատների, և թե՛ հասարակության համար: Հարցվածների 70-87%-ը կշռել են, որ դրական փոփոխություններ են արձանագրել սովորելու իրենց մոտիվացիայի, սոցիալական փոխգործակցության, ընդհանուր բարեկեցության և կյանքից բավարարված լինելու հարցերում:

Մի փոքր ավելի քիչ են աշխատանքին, կարիերային և ակտիվ քաղաքացիությանը առնչվող փոփոխությունները, սակայն նույնիսկ այս դեպքում հարցվածների 31-42%-ի մոտ դրական տեղաշարժեր են արձանագրվել: Բաց հարցերի որակական վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդիկ ի վիճակի են ընդունել, կշռել և նկարագրել այս օգուտները»:¹³

Մեծահասակների լիբերալ կրթության ոլորտներից մեկն էլ Կրթությունն է հանուն կայուն զարգացման (ԿՀԿԶ): Ինչպես նշվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից՝ «Բոլոր ուսումնական հաստատությունները՝ սկսած նախադպրոցականներից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցում ապահովող հաստատությունները կարող են և պետք է ինտենսիվորեն զբաղվեն կայուն զարգացման հարցերով և խթանեն համապատասխան կարողությունների զարգացումը»:¹⁴ Հանուն կայուն զարգացման կրթության համատեքստում սովորողները դիտարկվում են որպես «կայունության ոլորտում փոփոխություններ իրականացնողներ»: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից նշվում է նաև, որ «ԿՀԿԶ»-ն նպատակաուղղված է այնպիսի

կարողությունների զագացմանը, որոնք մարդկանց հնարավորություն են տալիս մտորել իրենց գործողությունների մասին՝ հաշվի առնելով դրանց ներկա և ապագա սոցիալական, մշակութային, տնտեսական և էկոլոգիական ազդեցությունները թե՛ տեղական, և թե՛ համաշխարհային մակարդակում»:¹⁵ Արդյունքում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից խրախուսվող՝ Հանուն կայուն զարգացման կրթության նպատակներն ընդգրկում են բոլոր ԿԶՆ-ների ոլորտները տեղական և համաշխարհային մակարդակներում:

Այսպիսով, ԿՀԿԶ-ի համընդգրկուն բնույթը խարսխված է թե՛ (վստահություն ապահովող և հնարավորություններն ընդլայնող) մեթոդաբանական մոտեցման, և թե՛ դրա բովանդակության վրա: Այսպիսի կրթության տեսլականը, այն է՝ ինչպես են սովորողները դառնում «փոփոխություններ իրականացնողներ», հատկապես հարմար է մեծահասակների ոչ ֆորմալ կրթության համար:

2.2. Մեծահասակների կրթություն և ուսումնառություն. ազդեցությունն առանձին ոլորտներում

Եթե նախորդ բաժնում խոսվում էր ՍՈԲԿ-ի մեթոդաբանական մոտեցման՝ որպես դրա առանձնահատուկ ուժեղ կողմի մասին, ապա այս բաժնում ներկայացվում են փաստեր և օրինակներ ՍՈԲԿ-ի տարբեր ԿԶՆ-ների ուղղությամբ այն ազդեցության մասին, որն արդեն դիտարկվել է ԲԶՖ-ի կողմից 2017 և 2018 թվականներին: Ստորև բերված օրինակները հիմնված են տարբեր մեթոդաբանությունների կիրառմամբ իրականացված ուսումնասիրությունների վրա. գրագիտության և աղքատության վերաբերյալ առաջին օրինակում օգտագործվում է ազգային մակարդակում համահավաք տվյալների հարաբերակցությունը, որոշ այլ օրինակներ հիմնված են առանձին դեպքերի

13 Manninen, Jyri & Meriläinen, Matti: Benefits of Lifelong Learning. BeLL Survey Results, page 2.

14 UNESCO: Education for Sustainable Development Goals, Learning Objectives, 2017, page 7.

15 UNESCO: Education for Sustainable Development Goals, Learning Objectives, 2017, page 7.

վերլուծության վրա, որոշներն էլ՝ թեմատիկ վերլուծության վրա, օրինակ՝ առողջապահության ոլորտում, իսկ որոշ օրինակներ էլ բխում են տարբեր ԿԶՆ-ների միջև փոխներգործությունների համակարգված և նորարարական վերլուծությունից: Չնայած մեթոդաբանական մոտեցումները տարբեր են, դրանք բոլորն էլ փաստում են, որ մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը կարևոր նշանակություն ունեցող ներդրում ունեն մի շարք ԿԶՆ-ների հարցում:

2.2.1 Աղքատության հաղթահարում

Վերը նշված օրինակները ցույց են տալիս, թե ինչպես գրագիտություն ստանալը կարող է կապված լինել մասնագիտական ու կյանքի համար կարևոր հմտություններ սովորելու, ինչպես նաև կենսամակարդակի բարձրացման հետ: Ի լրումն առանձին դեպքերի վրա հիմնված օրինակների, փաստեր կան նաև այն մասին, որ գրագիտությունը սերտորեն փոխկապակցված է ազգային հարստության հետ և առանցքային դեր ունի աղքատության վերացման գործում (ԿԶՆ 1): ՅՈՒՆԵՍԿՕ-ն նշում է, որ «երկրում գրագիտության մակարդակի և ազգային հարստության միջև սերտ հարաբերակցությունն արձանագրված փաստ է (որը չափվում է ըստ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշներով): Բացի դրանից, նկատվում է միտում, ըստ որի գրագիտության ցուցանիշների աճի հետ միասին նվազում է աղքատության մեջ ապրող, այսինքն՝ օրական 2 դոլարից պակաս եկամուտ ունեցող բնակչության թիվը»:¹⁶

Գծապատկեր 1-ում ներկայացված է մեծահասակների գրագիտության ցուցանիշների և աղքատության ցուցանիշների ընդհանուր հարաբերակցությունը: ԿԶՆ 4-ի իրականացման գործում մեծահասակների գրագիտության ունեցած ներդրման մասին ավելի մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է 2-րդ գլխում:

2.2.2 Առողջություն և բարեկեցություն

Առողջության և բարեկեցության (ԿԶՆ 3) ոլորտում նույնպես ուսումնասիրությունները ցույց են տվել ՄՈՒԿ-ի արդյունավետ ու չափելի ազդեցությունը: «Փաստացիորեն առաջ է քաշվել այն ենթադրությունը, որ ՄՈՒԿ-ի միջոցով ապահովված ամենալայն տարածում ունեցող օգուտները առողջության, մտավոր առողջության և բարեկեցության հետ են կապված»:¹⁷ Դրանք կարելի է ներկայացնել մի քանի եզրակացություններով.

- Առողջապահության հետ կապված հարցերի վերաբերյալ գիտելիքների խորացումը կարող է շատ արդյունավետ լինել: Օրինակ, Կենտրոնական Ամերիկայի ութ երկրների համայնքներում սովորեցին, թե ինչպես կարելի է խուսափել ԴԴՏ տեսակի միջատասպան նյութն օգտագործելուց՝ մալարիայի դեմ պայքարելու շրջանակներում: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությամբ և ենթադրաբար նաև մարդու առողջության համար վնասակար ԴԴՏ նյութի օգտագործման փոխարեն առաջարկվել է խուսափել հավաքած ջուր պահելուց, բարելավել դրենաժային համակարգերը և համայնքները մաքուր պահել: Արդյունքում, մալարիայի դեպքերի թիվը կրճատվել է 63%-ով:¹⁸
- Բրիտանական հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ անկախ նրանից, թե մեծահասակներն ինչ ուղի են ընտրել վաղ տարիքում, 33-ից 42 տարեկանում դասընթացներին մասնակցելը դրական ազդեցություն է ունեցել ծխելուց հրաժարվելու, ֆիզիկական ակտիվության և կյանքից բավարարվածության մակարդակի վրա:¹⁹
- Ֆիլիպիններում «... mHealth» կոչվող շրջիկ կրթական ծրագիրը, որը կոչված էր խթանելու կրծքով կերակրումն ու մանկահասակ երեխաների սնուցումը, բավականին հաջող է եղել, և գնահատումները ցույց են տվել, որ կրծքով կերակրման ցուցանիշ-

17 UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 70.

18 UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 70.

19 UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 71.

16 <https://tellmaps.com/uis/literacy/#/tellmap/-1003531175/9>, accessed 07.11.18

ներև ավելացել են, իսկ մանկական մահացության դեպքերը՝ նվազել: Առողջապահական շրջիկ «mHealth» ծրագիրն աշխատում է բջջային և ակաթ սարքերի օգտագործմամբ և նպատակաուղղված է առանց մեծ ծախսերի բարելավելու առողջության հետ կապված ցուցանիշները՝ օգտատերերի կարիքներին հարմարեցված ճիշտ տեղեկատվության տրամադրման միջոցով: Առողջապահական շրջիկ «mHealth» ծրագրի հաջողությունների մասին փաստերն արձանագրվել են թե՛ հյուսիսային, և թե՛ հարավային կիսագնդի երկրներում:²⁰

- Մեծահասակների ուսումնառության և կրթության վերաբերյալ համաշխարհային երրորդ զեկույցի (ՄԿՈՒՅԶ3) մասով մոնիթորինգային հարցմանը²¹ մասնակցած երկրների 65%-ը անգրագիտությունը նշել է որպես առողջության և բարեկեցության վրա ՄՈՒԿ առավել նկատելի ազդեցությունն ապահովելու հիմնական խոչընդոտ:

Ընդհանուր առմամբ, ապացուցողական բազան ցույց է տալիս, որ ՄՈՒԿ-ը նպաստում է առողջության և բարեկեցության ապահովմանը երկու մակարդակներում: Նախ ՄՈՒԿ-ը ուղղակիորեն է նպաստում առողջության բարելավմանը, սակայն գրագիտությունը ևս կարևոր նշանակություն ունի և հանդիսանում է այն հիմնաքարը, որի վրա կառուցվում է առողջապահական հարցերին միտված ՄՈՒԿ-ը:

2.2.3 Միջուրտային կապերը

Հաջողությունների գրանցման տեսանկյունից ՄՈՒԿ-ի հետ հեշտությամբ ասոցացվող ոլորտներից է ԿԶՆ 2-ը, որը նպատակաուղղված է սովի վերացմանը, պարենային ապահովությանը, բարելավված սնուցմանն ու կայուն գյուղատնտեսության զարգացմանը: Ստորև բերված օրինակում ներկայացվում է ԿԶՆ 2-ից բացի նաև այլ ԿԶՆ-ների հետ կապերը՝ ցույց տալով, որ սննդամթերքի արտադ-

րության որակի բարելավումը (ԿԶՆ 2), դեղաբույսերի մասին գիտելիքները (ԿԶՆ 3), արտադրության պրոցեսի նկատմամբ պատասխանատու մոտեցումը (ԿԶՆ 12) և գյուղատնտեսական կենսաբազմազանության պահպանումը (ԿԶՆ 15) հանդիսանում են տարբեր, սակայն միևնույն ժամանակ միմյանց փոխլրացնող մոտեցումներ:

«Առավել աղքատ երկրներում մի շարք խոստումնալից նախաձեռնություններում կրթությունը վճռորոշ դեր ունի մանր հողատերերի հնարավորությունների ընդլայնման հարցում, մասնավորապես արագ անհետացող գյուղատնտեսական կենսաբազմազանության պահպանման և ագրոբիզնեսում հիմնական կիրառվող պրակտիկաների փոփոխման մասով: Հնդկաստանում Նավդանյան (Իննը սերմեր) իրենից ներկայացնում է 18 սահանգներում գործող ցանց, որի նպատակն է պահպանել սերմերը՝ դրանց մասին և դրանց օգտագործման մասին գիտելիքների պահպանության միջոցով: Վերջին երկու տասնամյակների ընթացքում այն ավելի քան 500,000 ֆերմերների ուսուցանել է սերմնաբուծություն և կայուն գյուղատնտեսական զարգացում: Ուստարակխանդ սահանգում վերջինիս աջակցությամբ գրի են առնվել դեղաբույսերի և այլ բույսերի վերաբերյալ գիտելիքները և փաստաթղթային ձևակերպում ստացել գյուղացիական տնտեսության վարման մեթոդները, որպեսզի հնարավոր լինի ճիշտ խորհրդատվություն տրամադրել: Նման մոտեցումը սովորաբար գրեթե միշտ հակասում է պետական քաղաքականությանը, որով հիմնականում խրախուսվում է քիմիկատների օգտագործումը:


Հնդկաստանի Փենջաբ սահանգի «Կիսեթի վիրասաթ» (Գյուղատնտեսության ժառանգություն) առաքելության՝ գյուղատնտեսական գիտելիքների տարածման գծով մասնագետները գրավոր նյութերի փոխարեն փաստավավերագրական և կրթական ֆիլմեր են օգտագործում ավանդական մեթոդներով ֆերմերային տնտեսությունների վարման հետ կապված՝ շրջակա միջավայրի և առողջապահության խնդիրների, գյուղատնտեսության աշխարհաքաղաքականության և օրգանական ֆերմերային տնտեսության վարման վերաբերյալ ֆերմերներին ուսուցում տրամադրելու համար (...):²²

20 UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 75-76.

21 Ամբողջ աշխարհում ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ 195 երկրներից 139-ը մասնակցել են ՄԿՈՒՅԶ 3-ին՝ Մեծահասակների կրթության և ուսումնառության վերաբերյալ համաշխարհային մոնիթորինգային զեկույցին (2016թ.): Սա կազմում է մասնակցության 71%: Տե՛ս UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, page 27.

22 UNESCO: Global Education Monitoring Report 2017/18, 2017a, page 261.


Մեծահասակների
գրագիտության ցուցանիշ
բնակչությունը՝ 15+
տարեկան, բոլոր սեռերի
ներկայացուցիչները (%)
(2017թ.)



Գծապատկեր 1. Մեծահասակների գրագիտության և աղքատության ցուցանիշների քարտեզագրում

Աղբյուրը՝ <https://tellmaps.com/uis/literacy/#!/tellmap/-1003531175/0> and
<https://tellmaps.com/uis/literacy/#!/tellmap/-1003531175/9>

Օրական 3.10 դոլարի
մակարդակում
աղքատների թվաքանակի
ցուցանիշը (PPP
[գնողունակության
համարժեքության
ցուցանիշ]) (բնակչության
%) (2014թ.)



2.2.4 Համակարգված շրջանակի ներդրում

Քանի որ տարբեր ԿՉՆ-ների միջև փոխներգործություններն ու փոխկապակցվածությունները բավականին բարդ են, Գիտության միջազգային խորհուրդն (ԳՄԽ)²³ ավելի համակարգված շրջանակ է մշակել այդ կապերի մասին ավելի լավ պատկերացում ունենալու համար: Այդ շրջանակը բնութագրվում է «տարբեր ԿՉՆ-ների միջև դրական և բացասական փոխներգործության շրջանակը: (...) Չափման սանդղակը տատանվում է -3-ից մինչև +3-ի միջև՝ սկսելով այն դեպքերից, երբ մի թիրախի առաջընթացը չեզոքացնում է մեկ այլ թիրախի առաջընթացը, և վերջացրած այն դեպքերով, երբ մեկ նպատակի դրական առաջընթացն անբաժանելիորեն կապված է մեկ այլ նպատակի առաջընթացի հետ»:²⁴ Սխեմային զուգահեռ կիրառվում են նաև այսպես կոչված «առանցքային պարամետրեր», որոնք նկարագրում են, թե ինչպես կարող է ժամանակի, աշխարհագրության, կառավարման, տեխնոլոգիաների և ուղղվածության բաղադրիչը ազդեցություն ունենալ գնահատման վրա:²⁵ Ցանկացած գործողություն, որը ճիշտ է իրականացվում կառավարման տեսանկյունից և կատարվում է ճիշտ ժամանակին և տեղում, կարող է սիներգետիկ ձևով ներազդել նաև այլ ուղղությունների վրա, բայց անհաջողության մատնվել, երբ իրականացվում է մեկ այլ ոլորտում կամ իրականացվում է սխալ կառավարմամբ:

ԳՄԽ-ն այս շրջանակը պարբերաբար կիրառել է ԿՉՆ-ներ 2-ի, 3-ի, 7-ի և 14-ի հիմնական փոխներգործությունների նկատմամբ և ստացված արդյունքներից որոշները առնչվել են նաև մեծահասակների

ուսումնառությանը և կրթությանը: ԿՉՆ 2-ի և 3-ի վերաբերյալ տվյալները հաստատում են ՄՈՒԿ-ի՝ վերջին նշված ազդեցության առկայությունը: ԿՉՆ 7-ի և 14-ի վերաբերյալ տվյալները հետաքրքիր են, քանի որ ավելի քիչ են ասոցացվում ՄՈՒԿ-ի հետ, իսկ համապատասխան փաստերը բավականին քիչ են: ԳՄԽ-ի մոտեցումը ցույց է տալիս, թե ինչպես կարող է համակարգված ուսումնասիրությունը և փոխգործակցության որոնումը հանգեցնել նոր եզրակացությունների:

- ԿՉՆ 2՝ Վերացնել սովը, հասնել պարենային անվտանգության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը. «Հանուն կայուն զարգացման և կայուն կենսակերպի ապահովման կրթության հավասար հասանելիությունը դրական ազդեցություն ունի պարենային և սնուցման անվտանգության, ինչպես նաև առավել կայուն գյուղատնտեսության զարգացման վրա: Այդպիսի կրթությունը կարող է առանցքային դեր ունենալ գյուղացիական տնտեսության վարման ավելի կայուն գործելակերպերին անցնելու և սնուցման մասին տեղեկատվության ընկալման հարցում մարդկանց օգնելու գործում»:²⁶

- ԿՉՆ 3՝ Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից. «Ինֆորմալ կրթությունը և տեղեկատվության այլ աղբյուրները նույնպես կարող են կարևոր դեր ունենալ լավ առողջության ապահովման կամ վատ առողջություն ունենալու վրա: Օրինակ՝ ոչ ճիշտ տեղեկատվությունը կարող է բերել առողջության հետ կապված սխալ որոշումների կայացմանը թե՛ զարգացող երկրներում, և թե՛ զարգացած երկրներում (ինչպես, օրինակ, պատվաստումների դեմ տրամադրվածության դեպքում): Կրթությունը կարող է անմիջական ազդեցություն ունենալ առողջության վրա՝ փոփոխված գործելակերպի կամ նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով: Այն կարող է նաև առողջության վրա ազդեցություն ունենալ երկարաժամկետ հեռանկարում՝ ավելացված եկամուտների, հնարավորությունների, ինքնավստահության ավելացման, ինչպես նաև իրավունքների ընդլայնման շնորհիվ: Առողջության համար կրթությունից ստացվող օգուտները չեն սահմանափակվում միայն վաղ դպրոցական

23 Գիտության միջազգային խորհուրդը (ԳՄԽ) հասարակական կազմակերպություն է, որը միավորում է 40 միջազգային գիտական միություններ և ասոցիացիաներ և ավելի քան 140 ազգային և տարածաշրջանային գիտական կազմակերպություններ: ԳՄԽ-ի գործունեությունը նպատակաուղղված է ԿՉՆ-ների իրագործման քաղաքական գործընթացներում գիտական համայնքի ներգրավման ամրապնդմանը: Այն օժանդակում է նաև ԲԶԳ-ին և դրա մասն է կազմում: <https://council.science/>

24 Ամբողջական սանդղակը հետևյալն է. +3 անբաժանելի, +2 ամրապնդող, +1 օժանդակող, 0 չնակառող, -1 զսպող, -2 խոչընդոտող, -3 հնարավորությունը վերացնող

25 5 International Council for Science: A Guide to SDG Interactions, 2017, page 20 and 24. For some examples on key dimensions see <http://www.sustainablescientists.org/a-draft-framework-for-understanding-sustainable-development-goal-sdg-interactions/>

26 International Council for Science: A Guide to SDG Interactions, 2017, page 36.

տարիների կրթությամբ: Ցկյանս ուսումնառությունը շատ կարևոր հնարավորություններ է ընձեռում ավելի արագ փոփոխությունների հասնելու համար»:²⁷

- ԿԶՆ 7՝ Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն: «Էներգետիկ կայունության ոլորտում գիտելիքներն ու հմտությունները կարող են ազդեցություն ունենալ որոշելու, թե իրականացման տեսանկյունից որ տեխնոլոգիական, ֆինանսական ու քաղաքական լուծումներն են իրատեսական: Հետևաբար, որակյալ կրթությունը օժանդակող գործոն է ԿԶՆ 7-ի իրագործման համար»:²⁸

ԿԶՆ 14՝ Ապահովել օվկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանությունը և ռացիոնալ օգտագործումը՝ հանուն կայուն զարգացման: «Օվկիանոսային և ծովային ծառայությունների վերաբերյալ գիտելիքներն ու կարողությունները, ինչպես նաև ուսուցման և իրազեկության մակարդակի բարձրացման ծրագրերը դրական ազդեցություն կունենան օվկիանոսների, ծովերի և ծովային ռեսուրսների պահպանության և ռացիոնալ օգտագործման վրա: Դա կնպաստի ԿԶՆ 14-ի իրագործմանը: Ծովային ոլորտում կարողությունների զարգացմանը, գիտելիքների ու տեխնոլոգիաների փոխանցմանն ուղղված ներդրումները, ինչպես նաև ԿԶՆ 4-ի շրջանակներում որակյալ կրթություն և ուսուցում տրամադրելու նպատակով ձեռնարկված գործողությունները (ըստ էության՝ բոլոր թիրախները) հատկապես կարևոր կլինեն զարգացող երկրների և զարգացող փոքր կղզի-պետությունների (ՉՓԿԴ) համար»:²⁹

Գիտության միջազգային խորհրդի կողմից կիրառվող վերը ներկայացված շրջանակը հանդիսանում է դիտարկման և գնահատման լիարժեք ու համակարգված մոտեցում: Այդուհանդերձ, ԳՄԽ-ն նշում է, որ «... տարբեր մասնագիտական թիմեր շատ արագ մշակել են շրջանակի կիրառման և փոխազդեցությունների գնահատման տարբեր մեկնաբանություններ: Սա խնդիրներ է առաջացնում ուսումնասիրությունը

կրկնելու և որպես մոդել օգտագործելու հարցում: (...) Շատ դեպքերում կարելի է պնդել, որ գնահատականի վերաբերյալ որոշում կայացնելը թերևս ավելի կարևոր է եղել, քան վերջնական արդյունքը: (...) Այս առումով շրջանակը վերաճում է երկխոսելու, մեկնաբանելու և սովորելու գործընթացի»:³⁰ Այլ կերպ ասած, ուսումնասիրությունն ինքնին դարձել է նորարարության իդեալական օրինակ՝ ՄՈՒԿ համայնքի կողմից գործընկերների որոնման և նմանատիպ միջգիտակարգային գործընթացներում ներգրավվելու համար, որպեսզի հնարավոր լինի ավելի լավ պատկերացում կազմել ՄՈՒԿ-ի և բոլոր ԿԶՆ-ների միջև բազմակողմանի փոխներգործությունների մասին, արձանագրել դրանք և բարձրացնել դրանց տեսանելիության մակարդակը (տե՛ս նաև գլուխ 5 v. և vi.):

27 International Council for Science: A Guide to SDG Interactions, 2017, page 86.

28 International Council for Science: A Guide to SDG Interactions, 2017, page 123.

29 International Council for Science: A Guide to SDG Interactions, 2017, page 179. The term "sids" refers to "Small Island Developing States". For Details on sids see: <https://sustainabledevelopment.un.org/topics/sids>

30 International Council for Science: A Guide to SDG Interactions, 2017, page 9-10.

3

Մեծահասակների
ուսումնառության
և կրթության
դերը ԿԶՆ 4-ի
իրականացման
գործում. որակյալ
կրթություն

4 ՈՐԱԿՅԱԼ
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ



ԿԶՆ 4. Ապահովել
ներառական ու
համահավասար որակյալ
կրթություն և ցկյանս
ուսումնառության
ինարավորություններ
բոլորի համար

Հիմնական նույնությունները

- **Ճանաչումը.** Մեծահասակների կրթությունը և ցկյանս ուսումնառությունը ԿՉՆ 4-ի անբաժանելի մասն են կազմում: Դա ընդունված փաստ է, որն այնուհետև հիմնավորվել է «ԿՉՆ 4. Կրթություն 2030 գործողությունների շրջանակային ծրագրով», որն ընդունվել է ՄԱԿ-ի անդամ 184 պետությունների և կրթական համայնքի կողմից:
- **Կարիքները.** Ամբողջ աշխարհում ՄՈՒԿ-ի հսկայական կարիք կա: Բազմաթիվ ուղղությու-
յուններից թեկուզ միայն մեկը նշելով կարելի է ասել, որ 750 միլիոն մեծահասակներ, որոնց
երկու երրորդը կանայք են, դեռևս չունեն կարողալու և գրելու տարրական հմտություններ:
- **Նշանակությունը.** ՄՈՒԿ-ը նպաստում է ԿՉՆ 4-ի իրագործմանը բազմաթիվ այնպիսի
թիրախների մասով, ինչպիսիք են՝ գրագիտությունն ու թվաբանական տարրական գիտելիք-
ները, կրթության հավասար մատչելիությունը, աշխատանքի համար անհրաժեշտ հմտությու-
յունները, հանուն կայուն զարգացման ուսումնառությունը և ուսուցիչների վերապատրաս-
տումը:
- **Նշանակությունը .** ՄՈՒԿ-ը հատկապես մեծ նշանակություն ունի կյանքում առավել հետ
մնացածներին ներգրավելու հարցում՝ մեծահասակների համար գրագիտության դասըն-
թացների կազմակերպման, 2-րդ հնարավորության կրթության և մասնագիտական ու կեն-
սականորեն կարևոր հմտությունների ուսուցանման շնորհիվ: ՄՈՒԿ-ը կարևոր դերակա-
տարում ունի Օրակարգ 2030-ի՝ «ոչ մեկին չանտեսել» սկզբունքը կյանքի կոչելու գործում:

3.1 ՄՈՒԿ-ի կարևորությունը ԿՉՆ 4-ի իրագործման հարցում

Չնայած մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը ուղղակիորեն չեն հիշատակվում ԿՉՆ 4-ում, այնուամենայնիվ, ցկյանս ուսումնառության հնարավորությունները միանշանակորեն ներառում են նաև մեծահասակների ուսումնառությունը: Ավել-
ին, մի շարք համապատասխան թիրախներ, իրակա-
նացման մեթոդներ և որոշ ցուցանիշներ ուղղակիոր-
են կապված են ՄՈՒԿ-ի հետ:

- Թիրախ 4.3-ը նպատակաուղղված է միջին մասնագիտական ու բարձրագույն կրթության հասանելիության ապահովմանը՝ հավասարապես բոլոր կանանց ու տղամարդկանց համար, իսկ համապատասխան ցուցանիշով կրթությունը և ուսուցումը միանշանակորեն ներառում են նաև ոչ ֆորմալ մեթոդները:
- Թիրախ 4.4-ը նպատակաուղղված է զբաղվածությու-
յուն, արժանապատիվ աշխատանք գտնելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ հմտությունների տրամադր-
մանը, այդ թվում՝ ՏՀՏ հմտություններ ունեցող երիտասարդների և մեծահասակների թվի ավելաց-
մանը:
- Թիրախ 4.5-ը նպատակաուղղված է կրթության բոլոր մակարդակներում գեղերային հավասա-
րության և խոցելի խմբերի, այդ թվում՝ օրինակ, հաշմանդամություն ունեցող անձանց և տեղաբնիկ ժողովուրդների համար հավասար հասանելիությու-
յան ապահովմանը:
- Թիրախ 4.6-ով պահանջվում է, որ մեծահասակ-
ների մեծ մասը՝ թե՛ կանայք, և թե՛ տղամարդիկ, ձեռք բերեն գրաճանաչության և թվաճանաչության հմտություններ:
- Թիրախ 4.7-ը նպատակաուղղված է կայուն զար-
գացման համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների խթանմանն ու հավասարապես կիրառվում է բոլոր ուսումնառողների, այդ թվում՝

երիտասարդների և մեծահասակների նկատմամբ: Բովանդակային առումով այն մասնավորապես ներառում է «կրթությունը հանուն կայուն զարգացման և կայուն կենսակերպի, մարդու իրավունքների, գենդերային հավասարության, խաղաղության և բռնությունից զերծ մշակույթի խրախուսման, համաշխարհային քաղաքացիության և մշակութային բազմազանության ու կայուն զարգացման հարցում մշակույթի ունեցած ավանդի գնահատման»:

- Թիրախ 4.գ-ով նախատեսված գործողությունները նպատակաուղղված են ուսուցիչների թվի զգալի ավելացմանը: ՄՈՒԿ-ը Եական դերակատարություն ունի ուսուցիչների թվի ավելացմանն ուղղված այս նպատակի իրականացման գործում թե՛ ֆորմալ, և թե՛ ոչ ֆորմալ ձևաչափերում:

Որոշ գիտնականներ համարում են, որ չափազանց թույլ է ՄՈՒԿ-ի և ցկյանս ուսումնառության միջև կապը, պնդելով՝ որ ցկյանս ուսումնառության թիրախների կամ ցուցանիշների բացակայությունը թուլացնում է «նպատակի հավակնոտ և համապարփակ բնույթը»:³¹ Մյուսները նշում են, որ ՄՈՒԿ-ը և ցկյանս ուսումնառությունը հաստատվել են որպես ԿԶՆ 4-ի անբաժանելի մասեր Ինչիոնի հռչակագրով և «ԿԶՆ 4. Կրթություն 2030 գործողությունների շրջանակային ծրագրով», ինչի արդյունքում ձեռք է բերվել ընդհանուր համաձայնություն, որ մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը ԿԶՆ 4-ի անբաժանելի մասն են կազմում: 2015 թվականին «ԿԶՆ 4. Կրթություն 2030 գործողությունների շրջանակային ծրագիր» ընդունվել է ՄԱԿ-ի անդամ 184 պետությունների և կրթական համայնքի կողմից: Մեծահասակների կրթության և ուսումնառության կոնկրետ դերակատարության դիտարկումը ցույց է տալիս, որ այն պարունակում է մի շարք հանձնառություններ:

- Այն ներառում է ցկյանս ուսումնառության մոտեցումը և խթանում է որակյալ ցկյանս ուսումնառության հնարավորությունները կրթության բոլոր պայմաններում և բոլոր մակարդակներում:
- Այն ընդունում է ուսուցման ճկուն մոտեցումներ կարևորությունը և ոչ ֆորմալ ու ինֆորմալ

կրթության ձևաչափով ստացած գիտելիքների ճանաչումը, համապատասխանության հաստատումն ու հավաստագրումը:

- Այն նպատակաուղղված է ապահովելու, որ բոլոր երիտասարդները և մեծահասակները, հատկապես աղքիկները և կանայք, հասնեն գրաճանաչության և թվաճանաչության համապատասխան ու ընդունելի մակարդակի և ձեռք բերեն կենսականորեն կարևոր հմտություններ:
- Այն վերահաստատում է ցկյանս ուսումնառության սատարումը, ու բացի այդ հանդես է գալիս որպես «ԿԶՆ 4. Կրթություն 2030» ծրագրի ռազմավարական մոտեցում ու ընդհանուր «ուղեցույց»:³²

3.2 ՄՈՒԿ-ի ներդրումը ԿԶՆ 4-ի որոշ թիրախների իրականացման գործում

Դիտարկելով մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը ԿԶՆ 4-ի շրջանակներում ունեցած դերակատարության և ներդրման տեսանկյունից՝ ստորև անդրդադարձ կկատարվի հետևյալին.

- գրաճանաչություն/թվաճանաչություն (թիրախ 4.6),
- կրթության՝ այդ թվում 2-րդ հնարավորությանը նպաստող կրթություն, ստանալու հավասար հասնելիության ապահովում (թիրախ 4.5),
- քաղաքացիական կրթություն (թիրախ 4.7):

Մասնագիտական կրթության և ուսուցման թեման ներկայացված է 4.1 գլխում ԿԶՆ 8 (արժանապատիվ աշխատանք):

32 UNESCO/UNDP/UNFPA/UNHCR/UNICEF/UN Women/World Bank Group/ILO: Education 2030, 2015, in particular paragraphs 5 and 8 of the Incheon Declaration and paragraphs 15 and 23 of the Framework for Action.

31 <http://www.right-to-education.org/issue-page/th-mes/adult-education-and-learning>, դիտվել է՝ 06.09.18

3.2.1 Գրագիտությունը որպես թիրախ և որպես հնարավորություն

ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության ինստիտուտի (ՅՈՒՎԻ) տվյալները ցույց են տալիս, «որ 750 միլիոն մեծահասակներ, որոնց երկու երրորդը կանայք են, դեռևս չունեն կարդալու և գրելու տարրական հմտություններ (...) Ոչ գրագետ բնակչության թվից 102 միլիոնը 15-ից մինչև 24 տարեկան անձինք են»։ 2016 թվականին աշխարհում մեծահասակների գրագիտության մակարդակի ցուցանիշը եղել է 86%, իսկ երիտասարդների գրագիտության մակարդակի ցուցանիշը՝ 91%։ Ըստ գնահատումների՝ 2000 թվականից մինչև 2015 թվականն ընկած ժամանակահատվածում մեծահասակների և երիտասարդների գրագիտության մակարդակն ավելացել է ընդամենը 4%-ով»։³³

Թե՛ ֆորմալ կրթական համակարգում, և թե՛ մեծահասակներին տրամադրվող գրագիտության ոչ ֆորմալ ծրագրերում արվող բարեփոխումները մեծապես նպաստում են ընդհանուր գրագիտության մակարդակի բարձրացմանը։³⁴ Մեծահասակների համար գրագիտության և տարրական թվաբանական գիտելիքների ծրագրեր կազմակերպելը հատկապես կարևոր է հետևյալ դեպքերում և հետևյալ պատճառներով.

Աղյուսակ 1.
Համաշխարհային մակարդակով գրագիտության ցուցանիշները և ոչ գրագետ բնակչության ցուցանիշները՝ ըստ տարիքային խմբերի, 2016թ.

Մեծահասակներ (տարիքը՝ 15+)
Երիտասարդներ (տարիքը՝ 15-24)

Գրագիտության ցուցանիշն աշխարհում (%)

Բոլոր սեռերը	86	91
Տղամարդիկ	90	93
Կանայք	83	90

Ոչ գրագետ բնակչության ցուցանիշն աշխարհում (մլն)

Բոլոր սեռերը	750	102
Տղամարդիկ	277	44
Կանայք	473	58
Կանանց մասնաբաժինը (%)	63	57

Աղբյուրը՝ UNESCO Institute for Statistics. Fact Sheet No. 45, page 3.

1. Երբ մեծահասակների գրագիտության մակարդակը ծայրահեղ ցածր է՝ 50%-ից պակաս. այդպիսին է իրավիճակը հետևյալ 20 երկրներում՝ Աֆղանստան, Բենին, Բուրկինա Ֆասո, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Զադ, Կոմորյան կղզիներ, Կոտ Դ'իվուար, Եթովպիա, Գամբիա, Գվինեա, Գվինեա-Բիսաու, Հաիթի, Իրաք, Լիբերիա, Մալի, Մավրիտանիա, Նիգերիա, Սենեգալ, Սիերա Լեոնե և Հարավային Սուդան։³⁵

33 UNESCO Institute for Statistics: Fact Sheet No. 45, 2017, page 1.

34 ՅՈՒՎԻ-ի տվյալների համաձայն, գրագիտությունը հիմնականում ձեռք է բերվում երիտասարդ տարիքում ստացած կրթության շնորհիվ։ (Աղբյուրը՝ UNESCO Institute for Statistics: Fact Sheet No. 45, 2017, page 7) Սակայն սա հիմնված է այն մեթոդաբանության վրա, որով տարբեր մեծահասակ բնակչություններ գնահատվել են տարբեր ժամանակահատվածներում։ «Քանի որ երեխաների համար ավելանում են ֆորմալ կրթության հնարավորությունները, հետևաբար և աճում են մեծահասակների գրագիտության ցուցանիշները, որովհետև ավելի կրթված երեխաները դառնում են նաև կրթված երիտասարդներ ու մեծահասակներ։ Եթե քաղաքականություն մշակողները ցանկություն ունեն վերհանելու այն պայմանները (...), որոնք մեծահասակների գրագիտության ձեռքբերման ու պահպանման հնարավորություն են տալիս, ապա անհրաժեշտ կլինեն գրագիտության վերաբերյալ ավելի ճշգրիտ տվյալներ։» (Աղբյուրը՝ Benavot & Lackhart: Monitoring the education of youth and adults: from EFA to Sustainable Development Goal 4, 2016, page 61):

35 UNESCO Institute for Statistics: Fact Sheet No. 45, 2017, page 3.

2. Կոնկրետ տարածաշրջաններում, ինչպես օրինակ՝ Հարավային Ասիայում, որտեղ բնակվում է ամբողջ աշխարհի ոչ գրագետ բնակչության գրեթե կեսը (49%)³⁶:

3. Որպեսզի երեխաները չմեծանան ոչ գրագետ միջավայրում. գրագիտության տնային միջավայրը օգնում է հաջորդ սերունդների մոտ գրագիտության հմտությունների զարգացմանը և այդպիսով նպաստում է ԿԶՆ 4-ի իրագործմանը՝ ապահովելով, որ բոլոր աղքիկներն ու տղաները ստանան այնպիսի կրթություն, որը կհանգեցնի համարժեք ու արդյունավետ ուսումնական արդյունքներ ստանալուն:

4. Ստեղծել մարդկանց աղքատությունից հանելու համար նախապայմաններ, քանի որ երկրների մեծ մասում աշխատաշուկա մուտք գործելու կամ աշխատանքի համար հմտություններ ձեռք բերելու նախապայմանը ֆունկցիոնալ գրագիտությունն է:

Կառավարությունները միանշանակորեն կարևորում են մեծահասակների համար գրագիտության և թվաբանական տարրական գիտելիքների ծրագրերը

Բազմաթիվ փաստեր կան, որոնք վկայում են այն մասին, որ ամբողջ աշխարհում կառավարությունները բարձր են գնահատում մեծահասակների համար գրագիտության և **թվաբանական տարրական գիտելիքների** ծրագրերը.

- ՄԿՈՒՅԶ 3 մոնիթորինգային հարցմանը³⁷ մասնակցած երկրների 85%-ը նշել է, որ ՄՈՒԿ-ի մասով իրենց քաղաքական ռազմավարությունների հիմնական առաջնահերթություններից են գրագիտությունն ու տարրական հմտությունները:

- ՄԿՈՒՅԶ 3 մոնիթորինգային հարցմանը մասնակցած երկրների 81%-ը գրագիտության կամ տարրական հմտությունների ցածր մակարդակ ունեցող մեծահասակներին նշել են ՄՈՒԿ-ի համար ամենակարևոր թիրախային խմբեր:³⁸

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ցկյանս ուսումնառության ինստիտուտը նախանշել է գրագիտության ավելի քան 200 տարբեր ծրագրեր, որոնք գրանցվել են ռեսուրսների բազայում որպես գրագիտության արդյունավետ ծրագրեր: Փորձարկվել են բավականին մեծ թվով լայն սպեկտրի գործիքներ, որոնք այժմ պատրաստ են կիրառության համար:³⁹ Ավելին, մեծահասակների համար գրագիտության և **թվաբանական տարրական** գիտելիքների ավելի քան 200 ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանց բոլորի ժամանակ էլ որոշ չափով իրականացվել է մշտադիտարկում և գնահատում՝ կառավարման և իրականացման փուլերի շրջանակներում:⁴⁰

- մեծահասակների կրթության ամենահաջող ծրագրերում գրագիտությունն ընդգրկված է նաև այլ ոլորտային և ուսումնական միջոցառումներում, այդ թվում՝ մասնագիտական հմտությունների զարգացման գործընթացներում,⁴¹ դրանով իսկ նպաստելով գրագիտության վերաբերյալ թիրախ 4.6-ի և աշխատանքի համար անհրաժեշտ հմտությունների վերաբերյալ թիրախ 4.4-ի իրականացմանը:

- ՄԿՈՒՅԶ 3 մոնիթորինգային հարցմանը մասնակցած երկրների երկու երրորդը նշել է, որ գրագիտության ծրագրերը օգնում են ձևավորել ժողովրդավարական արժեքներ, նպաստում են խաղաղ համագոյությանն ու համայնքային միասնականությանը,⁴² միևնույն ժամանակ նպաստելով թիրախ 4.7-ի իրագործմանը՝ հանուն կայուն զարգացման կրթության մասով:

36 <https://tellmaps.com/uils/literacy/#/tellmap/-1003531175>, դիտվել է՝ 07.11.18

37 Ամբողջ աշխարհում ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ 195 երկրներից 139-ը մասնակցել են ՄԿՈՒՅԶ 3-ին՝ Մեծահասակների կրթության և ուսումնառության վերաբերյալ համաշխարհային մոնիթորինգային զեկյոցին (2016թ.): Սա կազմում է մասնակցության 71%: Տե՛ս UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 27.

38 UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 34.

39 <http://litbase.uil.unesco.org/?menu=4>, դիտվել է՝ 07.11.18

40 UNESCO: Global Education Monitoring Report 2017/18, 2017, page 200.

41 <https://gemreportunesco.wordpress.com/2012/09/05/literacy-lets-listen-to-what-adults-want-to-learn/>, դիտվել է՝ 07.11.18

42 UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 13.

3.2.2 Հավասար հասանելիություն և «ոչ մեկին չանտեսելու» սկզբունք

Կրթությունը արտացոլում է անհավասարությունը, բայց նաև կարող է ել ավելի խորացնել այն: Կրթության հարցում անհավասարությունը՝ պայմանավորված սեռով, քաղաքային/գյուղական բնակավայրով, բարեկեցությամբ, էթնիկ կամ լեզվական խմբերով և այլ հատկանիշներով, դեռևս համատարած բնույթ է կրում: Երկրների միայն 66%-ն է տարրական կրթության հարցում՝ հասել գենդերային հավասարության ապահովմանը:⁴³ 2001-2015 թվականների համար 62 երկրներից ստացված տվյալները ցույց են տալիս, որ «տարրական կրթությունն ավարտելուց հետո կարողալու կամ **թվաբանական** նվազագույն կարողությունների ձեռքբերման հարցում միայն 12 երկրներում է հավասարություն արձանագրվել քաղաքական և գյուղական երեխաների միջև»:⁴⁴ Բարեկեցության հավասարության համաթիվը ցույց է տալիս, որ աղքատ բնակչության հինգերորդ մասի հաշվով թերի միջնակարգ կրթություն ստացել է 61 երեխա, իսկ ավելի բարեկեցիկ ընտանիքների երեխաներից՝ 100 երեխա:⁴⁵

Հենց այս համատեքստում է, որ մեծահասակների կրթության հնարավորությունները արժեքավոր ներդրում ունեն հետևյալ ոլորտներում հավասարության ապահովման հարցում.

- Գրագիտության և **թվաբանական տարրական** գիտելիքների ծրագրեր նրանց համար, ովքեր նվազագույն կարողություններ ձեռք չեն բերել ֆորմալ կրթության համակարգում կամ վաղ են թողել ուսումը,
- 2-րդ հնարավորություն ստանալուն նպաստող կրթություն նրանց համար, ովքեր թողել են ֆորմալ կրթական համակարգը և ցանկանում են վերադառնալ,
- Ոչ ֆորմալ մասնագիտական-տեխնիկական ուսուցում մարզինալացված խմբերի համար:

Օրակարգ 2030-ը ոչ միայն վստահեցնում է, որ ոչ ոք չի անտեսվելու, այլ որ ամեն ջանք գործադրվելու է «ամենաանտեսվածների և հետ մնացածների օգնության հասնելու համար»: «Կրթություն 2030 գործողությունների շրջանակային ծրագրով» սահմանվում է, «որ ավելի շատ անհրաժեշտություն կա իրականացնելու այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են ամենամարգինալացված կամ խոցելի խմբերում գտնվողների ներգրավմանը»:

«Դրանում ձևավորված է այն տեսլականը, որ բոլոր մարդիկ՝ անկախ սեռից, տարիքից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ ծագումից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ ծննդից, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող մարդիկ, միգրանտները, տեղաբնիկ ժողովուրդները, և երեխաներն ու երիտասարդները՝ հատկապես խոցելի իրավիճակում կամ այլ կարգավիճակում գտնվողները, պետք է կարողանան օգտվել ներառական, համահավասար որակյալ կրթության ու ցկյանս ուսումնառության հնարավորություններից»:⁴⁶

Մեծահասակների ուսումնառության և կրթության տեսանկյունից սա նշանակում է, որ սոցիալապես առավել խոցելի խմբերն ամենաշատը պետք է ներկայացված լինեն ուսումնառուների շրջանում: Առկա տվյալները չեն ապահովում բացարձակ թվեր, բայց առնվազն որոշակի խմբերի մասնակցության մակարդակի ավելացման կամ նվազման միտումների մասին պատկերացում կազմելու հնարավորություն են տալիս կառավարություններին (տե՛ս գծապատկեր 2):

43 UNESCO: Global Education Monitoring Report 2017/18, 2017, page 184.


44 UN Economic and Social Council: Progress towards the Sustainable Development Goals. Report of the Secretary-General 2018, 2018, paragraph 46.

45 UNESCO: Global Education Monitoring Report 2017/18, 2017, page 187.

46 UNESCO/UNDP/UNFPA/UNHCR/UNICEF/UN Women/World Bank Group/ILO: Education 2030, 2015, page 25.

Գծապատկեր 2. ՄՈՒԿ-ին մասնակցության ցուցանիշների փոփոխությունները

ՄՈՒԿ-ի տարբեր խմբերում մասնակցության գլոբալ
ցուցանիշների փոփոխությունները
(ընդհանուր 139 պատասխանների %)



Աղբյուրը՝ UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, monitoring survey, question 5.2: What differences are there between women and men in terms of their participation rates (%) in ALE programmes? Total number of responses: 139. In GRALE III, page 53.

Ընդհանուր պատկերը ցույց է տալիս, որ առաջընթացն առկա է գրեթե բոլոր ոլորտներում, միայն թե տվյալների հավաքման մասով գործողությունները բարելավման կարիք ունեն, որպեսզի հնարավոր լինի ավելի լավ մոնիթորինգի ենթարկել կոնկրետ խմբերի ներգրավվածության աստիճանը:

Չնայած գոյություն ունեցող տվյալները ընդամենը մակերեսային պատկեր են ներկայացնում, այդուհանդերձ խմբերի միջև եղած տարբերությունները կարող են ուղղորդիչ դեր կատարել ցույց տալով, թե որ խմբերն ունեն լրացուցիչ ուշադրության կարիք, պատկերացում կազմել մասնակցության խոչընդոտների մասին և մշակել ներգրավման համապատասխան մոտեցումներ:

Ստորև բերված ներդիր 2-ում ներկայացված է հեռավոր շրջանների բնակիչների, այդ թվում՝ Եթևիկ փոքրամասնությունների հետ աշխատանքի լավագույն

օրինակ՝ հավասարապես թե՛ տղամարդկանց, և թե՛ կանանց ներգրավմամբ:

Լաոսում մասնագիտական ուսուցումը հիմնականում իրականացվում է մարզային կենտրոններում տեղակայված մասնագիտական հաստատություններում, որոնք վերջերս են արդիականացվել: Այն բնականաբար, ուղղակիորեն հասանելի չէ Լաոսի ամենահեռավոր ու մարզինալացված տարածքներում: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը՝ այլ կառույցների հետ համագործակցությամբ, նախաձեռնել է մասնագիտական ուսուցման շրջիկ ծառայություն, որպեսզի հինգից մինչև տասն օր տևողությամբ դասընթացներ կազմակերպվեն ամենահեռավոր և ամենաանապահով տարածքներում: 2015 և 2016 թվականների ընթացքում ծրագրի շրջանակներում տարեկան կազմակերպվել է 16 դասընթաց, յուրաքանչյուր տարի 375 մասնակիցների համար: Դրանք վերաբերել են տարբեր թեմաների՝ սկսած անասնապահությունից և սնկերի աճեցումից մինչև էլեկտրամոնտաժ և մոտոցիկլների վերանորոգում:

2017 թվականին անցկացվել է արտաքին գնահատում, որը նախ և առաջ հաստատել է, որ ծրագրին հաջողվել է ներգրավել մարզինալացված կամ սովորաբար թերի ներկայացված խմբերին: Հարցման 145 մասնակիցները, որոնք կազմում էին ուսումնառուների 83%-ը, ներկայացնում էին 5 տեղանք, որտեղ կազմակերպվել էր ուսուցումը: Հարցման մասնակիցների 48%-ը կանայք էին, ավելի քան 33%-ը Եթևիկ փոքրամասնության ներկայացուցիչներ: Նրանց միայն 32%-ն էր տարրական կրթություն ստացել, և 100%-ը բնակվում էր գյուղական համայնքներում: Բացի այդ, ուսումնասիրությունը համեմատել էր եկամուտների հետ կապված իրավիճակը դասընթացից առաջ և հետո: Ուսումնասիրության համապատասխան տվյալները ցույց են տվել, որ 300,000 կիպ (ամենացածր կատեգորիան) պակաս եկամուտ ունեցող մասնակիցների թիվը Էականորեն նվազել է՝ 43%-ից հասնելով 5%-ի:

Միկրոմակարդակից այն կողմ նայելով կարելի է տեսնել, որ մասնագիտական ուսուցման հիմնական խնդիրը փոխկապակցվածությունն է և ոչ ֆորմալից ֆորմալ համակարգ անցման հնարավորությունը: Մասնագիտական կրթության և ուսուցման շրջիկ ծրագրի շրջանավարտները (երկու մակարդակ ավարտելուց հետո) դեռ կարիք ունեն համապատասխանության կուրս անցնելու, որպեսզի կարողանան ընդունվել ֆորմալ մասնագիտական քոլեջ: Վերջնական նպատակը շրջիկ դասընթացները մասնագիտական կրթության և ուսուցման պաշտոնական համակարգում ինտեգրելն է:

Աղբյուրը՝ Siochru: Evaluation of DVV International Asia Programme, 2017, pages 91-92 and DVV

Կրթություն հանուն 2-րդ հնարավորության

«Կրթություն հանուն 2-րդ հնարավորությանը» բավականին ուժեղ գործիք է, որն ապահովում է կրթության հավասար հասանելիություն, քանի որ նախկինում ուսումը թողած սովորողներին հնարավորություն է տրվում հետ վերադառնալ և ֆորմալ կրթություն ստանալ:

Ինչպես ցույց է տրված ստորև բերված գծապատկեր 3-ում, «...Եկամուտների ցածր և միջին մակարդակ

ունեցող երկրներում մեծահասակ բնակչության մեծ մասը չի ավարտել տարրական դպրոցը և քիչ հավանական է, որ նորից կվերադառնա տարրական ուսումը շարունակելու: Չնայած նրան, որ Մոզամբիկում մեծահասակների ընդամենը 20%-ն է ավարտել տարրական դպրոցը, միայն 0.5%-ն է ընդունվել ֆորմալ կրթական համակարգ: Այն երկրները, որտեղ կրթական համակարգ ընդունման ցուցանիշներն ավելի բարձր են եղել (4%-ից բարձր), հիմնականում եղել են միջինից բարձր եկամտի մակարդակ ունեցող

երկրները, ինչպիսիք են օրինակ Բրազիլիան, Դոմինիկյան Հանրապետությունը և Թայլանդը»:⁴⁷

Շատ սահմանափակ տվյալներ կան տարրական կրթության ծրագրերում մեծահասակների ներգրավվածության մասին ներկայացված 15 տարեկանից բարձր ընդհանրապես դպրոց չհաճախած կամ թերի տարրական կրթություն ունեցողների տոկոսային հարաբերակցությամբ:⁴⁸ Այս մի քանի երկրների համար դպրոց ընդունված սովորողների համակազմի ցուցանիշները տատանվում են 0.5-ից 15 տոկոսի միջև:

Չնայած այս վիճակագրական տվյալները չեն արտացոլում այն մեծահասակների թիվը, որոնք ֆորմալ համակարգից դուրս որևէ այլ շարունակական կրթություն են ստանում, միևնույն է դրանք ցույց են տալիս, որ առկա է երկրորդ անգամ կրթություն ստանալուն հավակնողների բավականին մեծ թիվ: Եթե ընձեռնվում է կրթություն ստանալու այդ երկրորդ հնարավորությունը, ապա այն դառնում է ոչ միայն հետագա կրթություն ստանալու աղբյուր, այլ նաև նպաստում է ավելի համահավասար հասարակության ձևավորմանը:

«Ավելի հավանական է, որ սոցիալապես մարգինալացված երիտասարդներն ընդմիջտ կթողնեն ուսումը ֆորմալ կրթական համակարգում՝ դրանով էլ ավելի խորացնելով ծայրահեղ աղքատությունը: Լատինական Ամերիկայի վեց երկրներում շատ երիտասարդներ, որոնք մասնակցել են կրթություն հանուն երկրորդ հնարավորության ծրագրերում, ձեռք են բերել այն հմտությունները, որոնք նրանց անհրաժեշտ են մարգինալացման հաղթահարման համար:

Ծրագիրն ավարտելուց հետո 19,600 մասնակիցների 42%-ը վերադարձել է ֆորմալ կրթության համակարգ. այս ցուցանիշը ծրագրի մեկնարկից հետո գրեթե կրկնապատկվել է»:⁴⁹

Ավելին, հարկ է նշել, որ մեծահասակներին կրթելը կարող է երկարաժամկետ ազդեցություն ունենալ:

Որքան այսօրվա սովորողներն ավելի շատ տարիներ են սովորում դպրոցում, այնքան շահում են հաջորդ սերունդները. «Այն ծնողները, որոնք դպրոց են հաճախել կամ ավարտել են այն, ավելի հավանական է, որ կրթության կտան իրենց երեխաներին: 1990 թվականից մինչև 2009 թվականն ընկած ժամանակահատվածում 56 երկրներում անցկացված 142 ժողովրդագրական ուսումնասիրությունների տվյալները ցույց են տալիս, որ ընտանիքի մոր ստացած յուրաքանչյուր լրացուցիչ մեկ տարվա կրթության դիմաց միջին վիճակագրական երեխան ստանում է լրացուցիչ 0.32 տարվա կրթություն, իսկ աղջիկների դեպքում օգուտներն էլ ավելի շատ են եղել:

Պարզվել է նաև, որ եվրոպական 24 երկրներում ծնողների կրթական մակարդակի և երեխաների առաջադիմության ու նվաճումների միջև փոխկապակցվածությունը նույնպես բավականին մեծ է»:⁵⁰

Հետևաբար, կրթություն հանուն 2-րդ հնարավորության ծրագրերի արդյունքները նույնպես բազմաբնույթ են: Դրանք ուղղակիորեն նպաստում են թիրախ 4.5-ի իրագործմանը՝ հավասար հասանելիության մասով: Հաջորդ սերունդների վրա ունեցած ազդեցության շնորհիվ անուղղակիորեն նպաստում են նաև թիրախ 4.1-ի իրագործմանը (ավարտուն կրթության՝ հիմնականում ուշադրություն դարձնելով երեխաներին): Ավելին, դրանք անուղղակիորեն նպաստում են նաև ԿԶՆ 10-ի իրագործմանը (Անհավասարությունների կրճատում), քանի որ կրճատվում է անհավասարությունը թե՛ երկրի ներսում, և թե՛ երկրների միջև: Կրթություն հանուն 2-րդ հնարավորության նախաձեռնությունները մեծապես ծառայում են ի շահ մարգինալացված խմբերի և նպաստում նրանց հավասարության հաստատմանը:


47 UNESCO: Global Education Monitoring Report 2017/18, 2017, page 153, Data Focus 11.1

48 ՅուՎԻ-ի տվյալների համաձայն, դրանք հասանելի են միայն Արգենտինայի, Բոլիվիայի, Զիլիի, Կոլումբիայի, Դոմինիկյան Հանրապետության, Պանամայի և Ուրագվայի համար:

49 UNESCO: Sustainable Development Begins with Education, 2014, page 5.

50 UNESCO: Sustainable Development Begins with Education, 2014, page 5.

Գծապատկեր 3.
Դպրոց վերադարձող
մեծահասակներ



Աղբյուրը՝ Global Education Monitoring Report 2017/2018, page 154.

**Ներդիր 3.
Կրթության 2-րդ
հնարավորություն
ստանալու
անհրաժեշտությունը
Եվրոպայում.
Սերբիայի օրինակը**

Ըստ գնահատումների, 16-ից 65 տարեկան ԵՄ 55 միլիոն քաղաքացիներ ունեն գրագիտության հետ կապված խնդիրներ: Սերբիայի Հանրապետությունը 160 երկրների շարքում 39-րդ տեղն է զբաղեցնում գրագիտության ցուցանիշների վարկանիշային աղյուսակում: Ըստ գնահատումների, գրագետ բնակչությունը կազմում է 98.1%: Կարելի է ենթադրել, որ ֆունկցիոնալ գրագետ քաղաքացիների թվի ցուցանիշը շատ ավելի ցածր է: 2010 թվականին Սերբիայում մեկնարկեց «2-րդ հնարավորություն. մեծահասակների ֆունկցիոնալ տարրական կրթության համակարգային զարգացում» ծրագիրը: Այն ֆինանսավորվում էր ԵՄ-ի կողմից և իրականացվում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալից, մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիայից (ՄԿԵԱ) և GOPA խորհրդատվական խմբից կազմված կոնսորցիումի կողմից՝ սերտորեն համագործակցելով Սերբիայի կրթության, գիտության ու տեխնոլոգիական զարգացման նախարարության և Բելգրադի համալսարանի հետ: Ուսումնական ծրագրում համատեղված էին ֆունկցիոնալ տարրական կրթությունը և աշխատանքի համար անհրաժեշտ կրթությունը (Սերբիայում մասնագիտական կրթության և ուսուցման ֆորմալ համակարգն ավելի ցածր մակարդակի վրա է), ինչպես նաև քաղաքացիական կրթության տարրեր: Ծրագրում ներգրավվել են մոտավորապես 4000 սովորողներ, դրա շրջանակներում մեծահասակներին կրթելու հմտությունների դասավանդման մասով ուսուցում է տրամադրվել ավելի քան 1000 ուսուցիչների և մշակվել է Սերբիայում կրթության 2-րդ շանս տրամադրելու համակարգի նախագիծ:

Աղբյուրներ՝ <https://ec.europa.eu/epale/en/blog/fighting-functional-illiteracy-second-chance-schools-example-serbia> և <http://drugasansa.rs/?lang=en>

3.2.3 Կրթություն հանուն կայուն զարգացման

Թիրախ 4.7-ը նպատակաուղղված է սովորողների կողմից կայուն զարգացման համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը ու հավասարապես կիրառվում է երեխաների և մեծահասակների նկատմամբ թե՛ ֆորմալ, և թե՛ ոչ ֆորմալ կրթական համակարգերում: «Հանուն կայուն զարգացման կրթության տասնամյակի» (2005-2014) ավարտին ՅՈՒՆԵՍԿՕ-ն ընդգծել է, որ «Կրթական համակարգերի արմատական վերափոխման համար պահանջվում են փոփոխություններ կրթության բոլոր մակարդակներում ու ոլորտներում, ոչ միայն ֆորմալ, այլև ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթական գործընթացներում, որպեսզի բոլոր քաղաքացիները՝ երիտասարդները և մեծահասակները իմանան, թե ինչպես կարող են իրենց ներդրումն ունենալ ավելի հավասար, Էկոլոգիապես կայուն ու խաղաղ աշխարհի կառուցելու գործում:»⁵¹

«Հանուն կայուն զարգացման կրթության տասնամյակի» արդյունքների ամփոփման ժամանակ, ի թիվս այլոց, ընդգծվել է հասարակության շրջանում քարոզչության, ցուցահանդեսների և հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացման այլ միջոցառումների կարևորությունը, որոնք կարող են ներգրավել տարբեր տարիքի միլիոնավոր սովորողների: ⁵² ՄՈՒԿ-ն կարևոր դերակատարում ունի հատկապես այն քարոզարշավներում, որոնք ուղղված են միաժամանակ թե՛ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, և թե՛ ակտիվ քաղաքացիական դիրքորոշման զարգացմանը, և մեծահասակներին խրախուսում ու հնարավորություն են տալիս կյանքի կոչել իրենց գիտելիքներն ու իրազեկվածությունը: Տարբեր երկրներում անցկացված վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «ՄՈՒԿ-ը մարդկանց տալիս է ակտիվ քաղաքացիներ դառնալու համար անհրաժեշտ մտածելակերպ, գիտելիք և հմտություն-

51 UNESCO: Shaping the future we want, 2014, page 132.

52 UNESCO: Shaping the future we want, 2014, page 131.

ներ: (...) Զաղաքացիական կրթության ծրագրերը մարդկանց օգնում են ստանալ քաղաքական տեղեկատվություն, զարգացնել ինքնավստահությունը և մեծացնել քաղաքական գործընթացներում նրանց մասնակցության մակարդակը: Այս արդյունքները հատկապես կարևոր են փաստացի քաղաքական գիտելիքների ձեռքբերման և տեղական մակարդակում մասնակցության ակտիվացման տեսանկյունից»:⁵³

Ավելին, «Հանուն կայուն զարգացման կրթության տասնամյակի» արդյունքների ամփոփման մեջ ընդգծվել է նաև ֆորմալ կրթական համակարգում ուսուցիչների վերապատրաստման կարևորությունը և անհրաժեշտությունը: Զանի որ տեսանելի է հանուն կայուն զարգացման նպատակի համար կրթության ներառման և կարևորման գործում առկա առաջընթացը տարրական և միջնակարգ կրթության ոլորտում՝ բոլոր տարածաշրջաններում, հետևաբար ավելի շատ օժանդակություն ուսուցիչներին անհրաժեշտ է դասասեյակում:⁵⁴ Այս համատեքստում մեծահասակների կրթությունն առանցքային կարևորություն ունի ուսուցիչներին և ուսումնական պրոցեսի օժանդակողներին (ֆասիլիտատորներին)՝ կայուն զարգացման վերաբերյալ ուսումնական նյութերի ավելացման և զարգացման հետ համահունչ աշխատելու և դրանց լիարժեք տիրապետելու հարցում: Նույնը կարելի է ասել նաև այն դասընթացավարների մասին, որոնք մեծահասակների հետ ոչ ֆորմալ կրթության ձևաչափով ուսումնասիրում և բացահայտում են կայուն զարգացման հետ կապված հարցերը: Նույն կերպ, ֆորմալ կրթական համակարգի ուսուցիչների և ոչ ֆորմալ կրթական համակարգի դասընթացավարների վերապատրաստումը ուղղակիորեն նպաստում է թիրախ 4.7-ի իրագործմանը և 4.գ-ի իրականացման մեխանիզմների ապահովմանը, որն ուղղված է որակավորված ուսուցիչների թվի եական ավելացմանը:

53 UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 111.

54 UNESCO: Shaping the future we want, 2014, page 99.

4

Մեծահասակների
ուսումնառության և
կրթության դերը ԿԶՆ
8-ի, 10-ի, 13-ի
և 16-ի իրականացման
գործում





Հիմնական ուղերձները

ԿԶՆ 8. Խթանել շարունակական, ներառական և կայուն տնտեսական աճը, լիարժեք և արտադրողական զբաղվածությունը և արժանապատիվ աշխատանքը բոլորի համար

- ➔ **Ճանաչումը.** ՄՈՒԿ դերը միանշանակորեն ճանաչվել է ԿԶՆ 8-ի իրականացման հարցում՝ ոչ միայն տեխնիկական ու մասնագիտական կրթության և ուսուցման մասով, այլ նաև զբաղվածության, արժանապատիվ աշխատանք գտնելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու հնարավորության մասով:
- ➔ **Կարիքները.** 2017 թվականին աշխարհում գործազրկության պաշտոնական մակարդակը կազմում էր 5.6%, իսկ երիտասարդների շրջանում գործազրկության մակարդակը կազմում էր 13%: Բացի դրանից, միլիոնավոր մարդիկ կան, որոնք աշխատում են, սակայն վաստակած եկամուտները ծայրահեղ ցածր են նրանց աղքատությունից դուրս բերելու համար: Ցածր եկամուտների մակարդակ ունեցող երկրներում աշխատողների գրեթե 90%-ը կամ աղքատ են, կամ գտնվում են աղքատության շեմին:
- ➔ **Նշանակությունը.** Աշխարհի երկրների 43%-ը հավաստում է, որ ՄՈՒԿ-ը դրական ազդեցություն ունի ընկերությունների / կազմակերպությունների հաջողությունների, նորարարական կարողությունների, փոփոխություններին հարմարվելու ունակությունների զարգացման կամ խոցելի խմբերի նկատմամբ ներառական վերաբերմունքի ձևավորման հարցում:
- ➔ **Նշանակությունը.** ՄՈՒԿ-ը ոչ ֆորմալ մեթոդաբանությամբ մասնագիտական և հըմտությունների ձեռքբերման, այդ թվում՝ գյուղատնտեսության և փոքր ձեռնարկատիրության վերաբերյալ դասընթացներ է տրամադրում թե՛ ֆորմալ, և թե՛ ոչ ֆորմալ համակարգերում: Դա ՄՈՒԿ-ի առանձնահատուկ ուժեղ կողմերից է, որը հնարավորություն է տալիս ներգրավել հասարակության առավել խոցելի խմբերին ու համատեղել մասնագիտական ուսուցումը արժանապատիվ աշխատանք գտնելու համար կրթության հետ:

4.1 ԿՀՆ 8. Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ

4.1.1 ՄՈՒԿ-ի դերը ԿՀՆ 8-ի իրականացման գործում

ԿՀՆ 8-ը և դրա թիրախները անխզելիորեն փոխկապակցված են ԿՀՆ 4-ի հետ՝ մասնավորապես ոչ միայն տեխնիկական և մասնագիտական ուսուցման, այլև նաև զբաղվածության, արժանապատիվ աշխատանք գտնելու և ձեռնարկատիրական գործունեության մեջ զբաղվելու համար անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու հնարավորության մասով: Ստորև ներկայացված են այն թիրախները, որոնք սերտորեն կապված են ԿՀՆ 4-ի (մասնավորապես թիրախ 4.4-ի) և ՄՈՒԿ-ի հետ:

- Թիրախ 8.5 ... հասնել լիարժեք և արտադրողական զբաղվածության և արժանապատիվ աշխատանքի բոլոր կանանց և տղամարդկանց, այդ թվում՝ երիտասարդների և հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչպես նաև ապահովել հավասար վարձատրություն՝ հավասար արժեք ունեցող աշխատանքի դիմաց:
- Թիրախ 8.6 ... Եապես կրճատել զբաղվածություն չունեցող, կրթություն կամ ուսուցում չստացող երիտասարդների թիվը:
- Թիրախ 8.8. Պաշտպանել աշխատանքային իրավունքները և ապահովել անվտանգ ու ապահով աշխատանքային միջավայր բոլոր աշխատավորների, այդ թվում՝ միգրանտ աշխատավորների, մասնավորապես կին միգրանտների և անկայուն զբաղվածություն ունեցողների համար:

Ի լրումն վերը նշվածի, ՄՈՒԿ-ի հետ անուղղակիորեն կապված են նաև մի շարք այլ թիրախներ:

- Օրինակ՝ թիրախ 8.2-ի շրջանակներում կարևորվում է Նորարարությունը՝ որպես արտադրողա-

կանության վրա ազդեցություն ունեցող գործոն: Նորարարական ներուժը միանշանակորեն փոխկապակցված է ՄՈՒԿ-ի հետ:

- Թիրախներ 8.3-ը և 8.10-ը վերաբերում են ֆինանսական ծառայությունների՝ որպես տնտեսության շարժիչ ուժի հասանելիությանը: Ակնհայտ է, որ դրա համար, որպես նախապայման, անհրաժեշտ են ֆունկցիոնալ գրագիտություն և թվաբանական տարրական գիտելիքներ ունեցող անձինք:
- Թիրախ 8.4-ը նպատակաուղղված է տարանջատել տնտեսական աճը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունից՝ ռացիոնալ սպառման և արտադրության 10-ամյա շրջանակային ծրագրերին համապատասխան: Այս ծրագրի իրականացումը ներառում է սպառողների կրթության, իրազեկության մակարդակի բարձրացման և տեղեկատվության հասանելիության ավելացման տարրեր, ինչպես նաև իրավունքների ու հնարավորությունների ընդլայնում ու քաղաքացիների մասնակցության մակարդակի ավելացման ապահովում:⁵⁵
- Թիրախ 8.7-ը նպատակաուղղված է հարկադիր աշխատանքի, ժամանակակից ստրկության և մարդկանց թրաֆիքինգի և երեխաների աշխատանքի խստառ վերացմանը, ուստի սերտորեն փոխկապակցված է մարդու իրավունքների և աշխատանքային իրավունքների վերաբերյալ ուսուցման և աշխատողների (հատկապես երեխաների) իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման հետ:

4.1.2 ՄՈՒԿ-ը և աշխատանքային շուկան

2017 թվականին աշխարհում գործազրկության ցուցանիշների մակարդակը կազմում էր 5.6% (ի տարբերություն 2000 թվականին արձանագրված 6.4%-ի), իսկ երիտասարդների շրջանում գործազրկության մակարդակը կազմում էր 13%, ինչը ցույց է տալիս, որ երիտասարդների շրջանում գործազրկության

55 St'ւ UNEP: The 10-Year Framework of Programmes on Sustainable Consumption and Production, (ամսաթիվ չկա)

հավանականությունը երեք անգամ ավելի մեծ է, քան մեծահասակների մոտ:

«2016 թվականի առկա տվյալներով՝ աշխարհի 74 երկրների կեսում երիտասարդների ավելի քան 17 տոկոսը չի ստանում կրթություն, չի աշխատում կամ չի անցնում մասնագիտական ուսուցում, և այս ցուցանիշը որևէ կերպ չի կրճատվել ֆինանսական և տնտեսական ճգնաժամից հետո»:⁵⁶ Ըստ 2016 թվականի տվյալների, աշխարհում աշխատողների 61%-ը ներգրավված է եղել ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում:

Շատ ուսումնասիրություններ հստակ ցույց են տալիս ՄՌԻԿ-ի ունեցած դերը արտադրողականության ու զբաղվածության ապահովման հարցում, մասնավորապես՝

- Միկրոտնտեսական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսուցումն ավելացնում է արտադրողականության ցուցանիշները և արտադրանքի արժեքը կազմակերպության մակարդակում:
- Մակրոտնտեսական վերլուծությունները փաստում են ուսուցման և կրթության հետ արտադրողականության ու տնտեսական աճի փոխկապակցվածությունը:
- Ըստ Cedefop-ի՝ Մասնագիտական ուսուցման զարգացման Եվրոպական կենտրոնի «ՄՌԻԿ-ի մասով ամենաբարձր ակտիվություն ունեցող երկրները նաև ամենանորարար երկրների շարքում են գտնվում (...) Իսկապես, ՄՌԻԿ-ը թերևս ավելի շատ է կապված նորարարությունների հետ, քան բարձրագույն կրթությունը»:⁵⁷
- Բացի դրանից, ՄՌԻԿ-ի ազդեցությունն ակնհայտ է նաև այն դեպքում, երբ ուսուցումը կազմակերպվում է ինֆորմալ ձևով: Սահարայից հարավ ընկած մի շարք աֆրիկյան երկրներում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշկերտությունը մարդկանց օգնել է ավելի հեշտ

աշխատանք գտնել (Մալավի), կրթությունն ստացածներին օգնել է աստիճանաբար ավելացնել իրենց եկամուտները (Տանզանիա), ինֆորմալ աշկերտությունը հետագայում օգնել է նաև ֆորմալ կրթություն ստանալու հասանելիության հարցում (Տանզանիա) և նպաստել արտադրողականության ավելացմանը (Չադ)։⁵⁸ Այլ կերպ ասած, ամենամեծ ոչ ֆորմալ աշխատաշուկան ունեցող՝ Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրների փորձը ցույց է տալիս, որ ՄՌԻԿ-ի օգուտները չեն սահմանափակվում միայն ֆորմալ հատվածով և աշխատաշուկայով:

Գլոբալ մասշտաբով, ՄԿՈՒՅԶ 3 (GRALE III, 2015) մոնիթորինգային հարցմանը մասնակցած երկրների 43%-ը փաստում են, որ ՄՌԻԿ-ը դրական ազդեցություն ունի ընկերության/կազմակերպության հաջողությունների (շահութաբերություն, արդյունավետություն, ծառայությունների որակ), նորարարական կարողությունների, փոփոխություններին հարմարվողականության, խոցելի խմբերի (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց, ավելի մեծ տարիքի աշխատողների) նկատմամբ ներառական վերաբերմունքի վրա:⁵⁹ Մանրամասների համար տե՛ս գծապատկեր 4-ը:


56 UN Economic and Social Council: Progress towards the Sustainable Development Goals. Report of the Secretary-General 2018, 2018, paragraphs 74-77.

57 UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 90.

58 UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 90.

59 UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 96.

Գծապատկեր 4. ՄԿՈԼ-ի ազդեցությունը աշխատաշուկայի վրա



Աղբյուրը՝ UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, page 96.

4.1.3 Աշխատող աղքատներ, ոչ ֆորմալ աշխատաշուկա և արժանապատիվ աշխատանք

Չնայած բազմաթիվ վկայությունների, որ ցկյանս ուսումնառության գործում են երկրորդում են նպաստում է երկարաժամկետ կտրվածքով տնտեսական աճին, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ տնտեսական աճը բոլորի համար բարեկեցություն չի երաշխավորում: 2017 թվականի ԿԶՆ վերաբերյալ իր գնահատման մեջ Բարձրաստիճան քաղաքական ֆորումը եզրակացրել է, որ չնայած ծայրահեղ աղքատության ցուցիչը էականորեն կրճատվել է, միևնույն է, ըստ 2013 թվականի համաշխարհային գնահատումների՝ 10.9%-ը կամ 783 միլիոն մարդ դեռևս ապրում է 1.90 դոլարի սահմանաչափից ցածր եկամուտով (ինչը համապատասխանում է 2011 թվականի գնողունակության համարժեքության ցուցանիշին):⁶⁰

Բացի դրանից, միլիոնավոր մարդիկ կան, որոնք աշխատում են, սակայն վաստակած եկամուտները ծայրահեղ ցածր են նրանց աղքատությունից դուրս բերելու համար: Ցածր եկամուտների մակարդակ ունեցող երկրներում աշխատողների գրեթե 90%-ը կամ աղքատ են, կամ գտնվում են աղքատության շեմին:


Միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում դա վերաբերում է գրեթե 70%-ին:⁶¹ Այդ կատեգորիայում «ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող անձինք ավելի հաճախ են արժանապատիվ աշխատանքի պակաս ունենում և ավելի շատ են ենթարկվում աշխատող լինելու պարագայում աղքատների մեջ հայտնվելու ռիսկին»:⁶²

Ոչ ֆորմալ տնտեսությունը՝ որպես այդպիսին, ահռելի չափերի է հասնում. «Ոչ ֆորմալ տնտեսությունը կազմում է համաշխարհային աշխատուժի գրեթե

61 UNESCO: Global Education Monitoring Report 2016, 2016, page 2.

62 UN Economic and Social Council: Progress towards the Sustainable Development Goals. Report of the Secretary-General 2018, 2018, paragraph 74.

60 UN Economic and Social Council: Progress towards the Sustainable Development Goals. Report of the Secretary-General, 2018, paragraphs 5 and 6.



Գծապատկեր 5.
Աշխատող բնակչության աղքատության ցուցանիշները

Աղբյուրը՝ ILO: Global employment trends for Youth 2017, page 19.

կենս ու միկրո և փոքր ձեռնարկությունների ավելի քան 90 տոկոսը՝ ամբողջ աշխարհում: Ոչ ֆորմալ կարգավիճակը ամբողջ աշխարհում աշխատաշուկաների համար շատ կարևոր բնութագրիչ է, որտեղ գործունեություն են իրականացնում միլիոնավոր տնտեսավարող սուբյեկտներ, և հարյուր միլիոնավոր աշխատողներ իրենց օրվա ապրուստն են վաստակում ոչ ֆորմալ կարգավիճակի պայմաններում»:⁶³ Երկու խմբերում էլ՝ թե՛ աշխատող աղքատների, և թե՛ ոչ ֆորմալ հատվածում աշխատողների շրջանում բավականին մեծ թիվ են կազմում երիտասարդները: Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրների 90%-ում ավելի շատ կանայք են ներգրավվում ոչ ֆորմալ աշխատանքի մեջ, քան տղամարդիկ: Սա հատկանշական է նաև Հարավային Ասիայի երկրների 89%-ի և Լատինական Ամերիկայի երկրների գրեթե 75%-ի համար: Ցածր և միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող կանանց ավելի քան 30%-ը այսպես կոչված

«ընտանիքի օժանդակող անդամներ» են, որոնք սովորաբար չեն վարձատրվում:⁶⁴

«Արժանապատիվ աշխատանքի և ոչ ֆորմալ տնտեսության վերաբերյալ իր բանաձևում» ԱՄԿ-ն ընդգծում է, որ «Աշխատատեղերի թիվն ու որակն ավելացնելու համար անհրաժեշտ է ավելի շատ կարելիություններ մարդկանց մեջ ներդրումներ անելու գաղափարը՝ հատկապես նրանց կրթության, հմտությունների ուսուցման, ցկյան ուսումնառության, առողջության ու անվտանգության պահպանման մասով և խթանել նրանց ձեռնարկատիրական նախաձեռնությունները»:


Ընդհանուր առմամբ, ոչ ֆորմալ ոլորտում աշխատողների կրթության մակարդակն ավելի ցածր է, քան ֆորմալ ոլորտում աշխատողներինը: «Չարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում (...) ոչ ֆորմալ հատվածում աշխատողների գրեթե 55 տոկոսը որևէ կրթություն կամ գոնե տարրական կրթություն չունի ի տարբերություն ֆորմալ հատ-

63 <https://www.ilo.org/global/topics/dw4sd/themes/informal-economy/lang-en/index.htm>, դիտվել է՝ 07.11.18.

64 International Labour Organisation: Women and men in the informal economy, 2018, page 21.

**Գծապատկեր 6.
Ֆորմալ և ոչ ֆորմալ
զբաղվածության
ցուցանիշները**

Ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող երիտասարդների տոկոսային ցուցանիշները, 2016թ.



Աղբյուրը՝ ILO: Global employment trends for Youth 2017, page 21.

վածում աշխատող 15.5 տոկոս աշխատողների: Ոչ ֆորմալ կարգավիճակով աշխատող ինքնազբաղված աշխատողների գրեթե երկու երրորդը կրթված չեն կամ ունեն ընդամենը տարրական մակարդակի կրթություն, հետևաբար այս պարագայում կարելի է ասել, որ ֆորմալ հատվածում աշխատողների թիվը գրեթե երկու անգամ ավելի է (35.7 տոկոս)»:⁶⁵

Հենց այս համատեքստում է, որ ոչ ֆորմալ ՄՌԻԿ-ը կարող է ի ցույց դնել իր ամբողջ ներուժը: Ինչպես նշում է Վոլթերը. «Ոչ ֆորմալ հատվածը տնտեսապես ակտիվ բնակչության մոտ հմտությունների զարգացման հիմնական ձևավորողն է: Ոչ ֆորմալ հատվածի վերաբերյալ առկա տվյալները հստակորեն ցույց են տալիս, որ այդ հատվածում աշխատող մարդկանց մեծ մասը հենց այդ հատվածում էլ ստանում է ուսուցումը»:⁶⁶ Հմտությունների այս ոչ ֆորմալ ուսուցումն ուղղված է տեղական աշխատաշուկայի պահանջներին:

րի բավարարմանը: Ավելին, «Ոչ ֆորմալ հատվածում հմտությունների զարգացումը չի սահմանափակվում միայն այդ հատվածում աշխատող մարդկանց մասնագիտական ուսուցմամբ: Օրինակ՝ Կենտրոնական Աֆրիկայի երիտասարդական ասոցիացիաների 110 առաջնորդների շրջանում AFD-ի կողմից անցկացված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ այդ երիտասարդների 60%-ը, որոնք ունեն բակալավրի կամ մագիստրոսի աստիճան, միևնույն է աշխատաշուկա են մուտք գործել հենց աշխատավայրում ստացած փորձառության կամ ոչ ֆորմալ հատվածում, ստացած գործնական պրակտիկայի շնորհիվ»:⁶⁷ Հետևաբար կարելի է ասել, որ ոչ ֆորմալ մասնագիտական կրթությունը կարող է օգտակար լինել թե՛ որակավորում չունեցող աշխատողների համար, և թե՛ նրանց համար, ովքեր ունեն որակավորում, որը սակայն չի համապատասխանում աշխատանքի իրական շուկայի պահանջներին:

65 International Labour Organisation: Women and men in the informal economy, 2018, page 56.

66 Walther: Building Skills in the Informal Sector, 2013, page 20.

67 Walther: Building Skills in the Informal Sector, 2013, page 21.

Ոչ ֆորմալ հմտությունների կատարելագործումն ու հետագա զարգացումը օգուտ է բերում միևնույն և փոքր ձեռնարկություններին և նպաստում է եկամուտների ավելացմանը: ՄՈՒԿ-ն մեծապես օգնում է ոչ ֆորմալ հատվածի աշխատողներին, և բացի դրանից, նպաստում է նաև ֆորմալ աշխատաշուկային հասանելիություն ունենալու հարցում:

Միևնույն ժամանակ, ՄՈՒԿ-ի միջոցով տրամադրվում են այնպիսի հմտություններ և գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են աշխատանքային իրավունքների համար պայքարելու, ապահով և անվտանգ աշխատանքային միջավայր ունենալու, ինչպես նաև արհեստակցական միություններ և արտադրական այլընտրանքային կառույցներ, ինչպես օրինակ՝ կոոպերատիվներ ստեղծելու համար:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն՝ հանուն կայուն զարգացման նպատակների. ուսումնառության նպատակներ» հրապարակման մեջ նշվում է, որ ուսումնառումները պետք է կարողանան «համագործակցել մյուսների հետ՝ քաղաքական գործիչներից և իրենց գործատուներից արդարացի աշխատավարձ, հավասար աշխատանքի համար հավասար վարձատրություն և աշխատանքային իրավունքներ պահանջելու համար»:⁶⁸

Նման համագործակցությունը և այնպիսի հարցերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումը, ինչպիսիք են հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրությունը, չափազանց կարևոր են կոլեկտիվ ռազմավարությունների խթանման համար՝ հատկապես մրցակցային աշխատաշուկայում: Մասնագիտական ուսուցման բացասական կողմը կարող է լինել ավելի ցածր որակավորում ունեցող աշխատողների փոխարինումը:⁶⁹

Այս համատեքստում կարելի է նշել, որ ՄՈՒԿ-ի առանձնահատուկ ուժեղ կողմերից է այն հանգամանքը, որ այն կարող է ներգրավել հասարակության առավել խոցելի խմբերին ու առաջարկել մեծահասակների ուսումնառության ոչ ֆորմալ ձևաչափեր, այդ թվում՝ մասնագիտական ուսուցում, միևնույն ժամանակ միավորելով դրանք արժանապատիվ աշխատանքի, աշխատանքային իրավունքների և համատեղ գործողությունների վերաբերյալ դասընթացների հետ: Արժանապատիվ աշխատանք գտնելու գործընթացի անքակտելի մասն են կազմում մասնագիտական հմտություններն ու աշխատողների իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը:

68 UNESCO: Education for Sustainable Development Goals. Learning Objectives, 2017, page 26.

69 Մեծահասակների կրթությունը կարող է դրական ազդեցություն ունենալ աշխատաշուկայում անհատական մակարդակում այն անձանց համար, ովքեր ստացել են համապատասխան կրթություն կամ ուսուցում, բայց միևնույն ժամանակ այն կարող է նաև բացասական ազդեցություն ունենալ՝ նվազեցնելով այն անձանց վարձատրությունը, որոնք չեն մասնակցել դրանց: Այս պոտենցիալ ոչ բարենպաստ ազդեցության մասին արձանագրվել է Շվեդիայում՝ Մեծահասակների կրթության Նախաձեռնության ուսումնասիրության ժամանակ: Աղբյուրը՝ UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 90.

Ներդիր 4. Սոցիալական և համերաշխության տնտեսություն (ՄՅՏ)

Մեքսիկայում և Գվատեմալայում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից օժանդակություն է տրամադրվում կազմակերպությունների ցանցերին, որոնք խթանում են «Համերաշխության տնտեսությունը» և համապատասխան դասընթացներ են տրամադրում:

ՄԱԿ-ի Սոցիալական և համերաշխության տնտեսության հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբը իր դիրքորոշման մասին փաստաթղթում նշում է. «Միջազգային զարգացման համայնքը ընդունում է զարգացման վերափոխման անհրաժեշտությունը: Ընդունված գործելակերպը չկարողացավ կանխել ֆինանսական և պարենային ճգնաժամերը, կլիմայի փոփոխությունները, աղքատությունն ու ավելացող անհավասարությունները: (...) ՄՅՏ-ն ևս մեկ լրացուցիչ ուղի է ոչ ֆորմալ տնտեսության հետ կապված անկայուն զբաղվածության մասշտաբների շարունակական աճի և արժանապատիվ աշխատանքի սուր դեֆիցիտի դեմ պայքարելու համար: (...) Ընդհանուր առմամբ, կոոպերատիվները ամենախոշոր գործատուներն են թե՛ հյուսիսային, և թե՛ հարավային կիսագնդի շատ երկրներում: (...) ՄՅՏ կազմակերպությունները կարող են դյուրին դարձնել ֆինանսների, ներդրվող ռեսուրսների, տեխնոլոգիաների, աջակցող ծառայությունների ու շուկաների հասանելիությունը և ընդլայնել արտադրողների կարողությունները՝ ավելի լավ գների շուրջ բանակցելու և ավելի շատ եկամուտներ ապահովելու համար: Դրանք կարող են նվազեցնել աշխատանքի և արտադրանքի շուկաներում իշխանության և տեղեկատվության անհամաչափությունը և ավելացնել եկամուտների մակարդակն ու հաճախականությունը:

Աղբյուրը՝ UN Inter-Agency Task Force on Social and Solidarity Economy: Social and Solidarity Economy and the Challenge of Sustainable Development, 2014, page 1.

Տաջիկստանում, նախկին դատապարտյալները դեռևս շարունակում են խիստ խարանի եկթարկվել, ինչը լրջորեն սահմանափակում է հասարակությունում և աշխատաշուկայում նրանց վերափնտքման հնարավորությունները: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից Նուրեկ քաղաքում 150 կին դառապարտյալի համար իրականացվել են մասնագիտական ուսուցանանքներ և անձնական զարգացման համատեղ ծրագրերը: Մասնագիտական ուսուցումը տրամադրվել է մեծահասակների ուսուցման ազգային կենտրոնի (որը գործում է Աշխատանքի նախարարության եկթակայությամբ) ուսուցանողների կողմից: Ուսումնական դասընթացն ավարտելու մասին վկայականները տրվել են կենտրոնի կողմից և ճանաչվել պետության կողմից, ինչն էապես հեշտացրել է ֆորմալ աշխատանքային շուկա նրանց վերադառնալը:

Բացի դրանից, երկու տեղական գործընկերների միջոցով երկու սեռերի նախկին դատապարտյալներին իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություն է տրամադրվել: Այստեղ նախկին դատապարտյալները գործնական օժանդակություն են ստացել իրենց կյանքը վերակազմակերպելու համար: Ծրագիրն իրականացվել է Արդարադատության նախարարության Զրեակատարողական վարչության հետ համագործակցությամբ: Որպես լրացուցիչ արդյունք՝ համագործակցությունը հնարավորություններ ստեղծեց նախարարության և քաղաքացիական հասարակության միջև երկխոսության համար:

Աղբյուրը՝ <http://tinyurl.com/y62lkmqw>

Ներդիր 5.
Տաջիկստան. Ինչպես
են համատեղվում
մասնագիտական ուսուցումը,
մարդու իրավունքները
և իրավաբանական
ու հոգեբանական
խորհրդատվությունը



Հիմնական ուղերձները

ԿՁԼ 10. Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև.

- ➔ **Նշանակությունը.** ՄՈՒԿ-ը մեծապես նպաստում է առողջապահության, կրթության և եկամուտների մասով առաջընթացի արձանագրմանը աշխարհի երկրներում, ինչի արդյունքում երկրի մակադրակով աճում է Մարդկային զարգացման ինդեքսը: Միասին վերցրած՝ այս բոլոր նվաճումները նպաստում են երկրների միջև ավելի բարձր հավասարության ապահովմանը:
- ➔ **Նշանակությունը.** Գլոբալ կրթության շրջանակներում ՄՈՒԿ-ի միջոցով շոշափվող բազմաթիվ այնպիսի թեմաներ, ինչպիսիք են մարդու իրավունքները, խտրականության դեմ պայքարը և գենդերային հավասարությունը, անփոխարինելի են երկրների ներսում և դրանց միջև հավասարության խթանման համար:
- ➔ **Նշանակությունը.** Համայնքային կենտրոնները կարևոր դերակատարում ունեն միգրանտների ինտեգրման և միգրանտների ու տեղի բնակչության միջև հնարավոր լարվածությունների նվազեցման գործում: Ոչ ֆորմալ ձևաչափով ՄՈՒԿ-ն ապահովում է տարբեր բնույթի միջոցառումներ՝ սկսած գրագիտության դասընթացներից մինչև համատեղ սպորտային ակումբներ:

4.2 ԿՁԼ 10. ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄ

4.2.1 ՄՈՒԿ-ի դերը ԿՁԼ 10-ի իրագործման հարցում

ԿՁԼ 10-ը նպատակաուղղված է անհավասարությունների, այդ թվում՝ գենդերային անհավասարությունների (որին ավելի մանրամասն անդրադառնում է ԿՁԼ 5-ը) վերացմանը երկրների ներսում և դրանց միջև: ԿՁԼ 10-ի թիրախներն ու ցուցանիշները միանշանակորեն հղում չեն անում կրթությանը: Սակայն, թիրախ 10.2-ում կրթությունը ներառված է, քանի որ այն նպատակաուղղված է բոլորի սոցիալական, տնտեսական և քաղաքական ներառմանը՝ անկախ տարիքից, սեռից, հաշմանդամությունից, ռասայից, էթնիկ պատկանելիությունից, ծագումից, կրոնից կամ այլ կարգավիճակից:

4.2.2 ՄՈՒԿ նշանակությունը հավասարության հարցում

Անհավասարությունը չափվում է մի քանի տարբեր եղանակներով, այդ թվում՝ Մարդկային զարգացման համաթվի (ՄՀԳ) անհավասարությունների ներառմամբ վերանայված տարբերակով: Եթե ՄՀԳ-ն որպես այդպիսին ամբողջացնում է առողջապահության, գիտելիքների և արժանապատիվ կենսակերպի վերաբերյալ տվյալները, ապա անհավասարությունների ներառմամբ վերանայված Մարդկային զարգացման համաթիվը (ԱՄՀԳ) դիտարկում է, թե առողջապահության, կրթության և եկամուտների գծով միջին վիճակագրական նվաճումները ինչպես են բաշխվել երկրի բնակչության տարբեր խմբերի միջև:

Աղյուսակ 2-ում ներկայացված է, թե տոկոսային ինչ չափով է փոփոխվում ՄՀԳ-ն անհավասարությունների ներառումից հետո: Հստակ երևում է, որ որքան ցածր է նախնական ՄՀԳ-ն, այնքան բարձր են անհավասարություններով պայմանավորված նվազումները: Ինչպես արդեն նշվել է, ՄՈՒԿ-ն իր ազդեցությունն ունի Մարդկային զարգացման համաթվի (ՄՀԳ) բոլոր ցուցիչների վրա: ՄՈՒԿ-ն ավելացնում է միջին վիճակագրական նվաճումները կրթության բնագավառում (տե՛ս ԿՁԼ 4-ի գլուխ 3-ը՝ ՄՈՒԿ-ի ունեցած դերի վերաբերյալ), նպաստում է առողջապահության զարգացմանը

**Մեծահասակների ուսումնառության և կրթության դերը ԿԶՆ 8-ի, 10-ի, 13-ի
և 16-ի իրականացման գործում**

Աղյուսակ 2.

**Անհավասարությունների
ներառմամբ վերանայված
ՄԶՀ**

	Մարդկային զարգացման համաթիվ	Անհավասարությունների ներառմամբ վերանայված ՄԶՀ	
	Արժեք	Արժեք	Ընդհանուր կորուստը (%)
Մարդկային զարգացման խմբերը			
Շատ բարձր մարդկային զարգացում	0.894	0.799	10.7
Բարձր մարդկային զարգացում	0.757	0.636	16.0
Միջին մարդկային զարգացում	0.645	0.483	25.1
Ցածր մարդկային զարգացում	0.504	0.347	31.1
Չարգացող երկրներ	0.681	0.531	22.0
Չարգացող փոքր կղզի-պետություններ	0.676	0.508	24.9
Քիչ զարգացած պետություններ	0.524	0.375	28.5
Տարածաշրջաններ			
Սահարայից հարավ ընկած աֆրիկյան պետություններ	0.537	0.372	30.8
Հարավային Ասիա	0.638	0.471	26.1
Արաբական պետություններ	0.699	0.523	25.1
Լատինական Ամերիկա և Կարիբյան կղզիներ	0.758	0.593	21.8
Արևելյան Ասիա և խաղաղօվկյանոսյան կղզիներ	0.733	0.619	15.6
Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն	0.895	0.788	11.9
Եվրոպա և կենտրոնական Ասիա	0.771	0.681	11.7
Աշխարհ	0.728	0.582	20.0

Աղբյուր՝ UNDP Human Development Reports <http://hdr.undp.org/en/composite/IHDI>

(տե՛ս ԿԶՆ 3-ի գլուխ 2-ը և դրա ունեցած դերակատարումը այլ միջճյուղային ուղղություններում), ինչպես նաև եկամուտների ավելացմանը (տե՛ս գլուխ 4-ը արժանապատիվ աշխատանքի վերաբերյալ)։ Զանի որ Մարդկային զարգացման ավելի բարձր համաթիվը ուղիղ համեմատական է հավասարության բարձր մակարդակին, կարելի է եզրակացնել, որ ՄՈՒԿ-ն դրական ազդեցություն ունի երկրների ներսում հավասարության ապահովման գործում և հետևաբար նպաստում է թիրախ 10.2-ի իրականացմանը՝ բոլորի սոցիալական, տնտեսական և քաղաքական ներառմանը (այս համատեքստում, տե՛ս նաև գլուխ 5-ը,

որն անդրադառնում է անհավասարությանը՝ որպես լուծում պահանջող կարևոր խնդրի)։

4.2.3 ՄՈՒԿ-ի լրացուցիչ ազդեցությունը անհավասարությունների կրճատման գործում

Բացի այն, որ ՄՈՒԿ-ը ընդհանուր ազդեցություն ունի սոցիալական, տնտեսական և քաղաքական ներառման տեսանկյունից, այն նաև առնչություն ունի ԿԶՆ 10-ի որոշ այլ ուղղությունների հետ։

Թիրախ 10.3-ը նպատակաուղղված է հավասար հնարավորությունների ապահովմանը՝ հիմնականում խտրական օրենքների, քաղաքականության և գործելակերպերի վերացման միջոցով: Հասկապես հետաքրքրության է ներկայացնում համապատասխան ցուցանիշը, քանի որ դրանով չափվում է «բնակչության այն մասնաբաժինը, որն արձանագրել է խտրականություն անձամբ զգալու կամ իրավունքների ունձգության ենթարկվելու մասին փաստեր՝ խտրականության այն ձևերով, որոնք արգելված են մարդու իրավունքների միջազգային իրավունքով»: Այս ցուցանիշը նախատեսված է «ներքևից վերև» սկզբունքով, այսինքն բնակչությունը ինքն է գնահատում, թե արդյոք խտրականություն տեղի ունեցել է, թե ոչ:

Ակնհայտ է, որ խտրականության, խտրական քաղաքականության և գործելակերպերի վերաբերյալ լայնամասշտաբ իրազեկման և ուսուցման միջոցառումները պարտադիր են, եթե կարևորվում է բնակչության կողմից նման տեղեկատվություն տրամադելու և հետևողականություն դրսևորելու հարցը: Այսինքն, խտրականությունների մասին տեղեկացման բացակայությունը կարող է վկայել ոչ թե հավասարության մասին, այլ համայնքի և հասարակության իրեզեկված չլինելու մասին: ՄՈՒԿ-ի ներդրումը թիրախ 4.7-ում (կրթություն հանուն կայուն զարգացման) ներառում է նաև մարդու իրավունքների և գենդերային հավասարության մասին ուսուցումը, ուստի և համապատասխանում է թիրախ 10.3-ին:

Թիրախ 10.7-ն ուղղված է օժանդակելու կանոնավոր, անվտանգ, օրինական ու պատասխանատու միգրացիային և մարդկանց շարժվելու ազատությանը, այդ թվում՝ պատշաճ իրականացվող միգրացիոն քաղաքականության միջոցով: Վերջին ժամանակներում տեղի ունեցած հարկադրված միգրացիան դեպի Եվրոպա ակնհայտորեն ցույց է տալիս, որ կառավարություններն առնվազն կարիք ունեն իրենց տեղաբնակ բնակչության հետ հանգել փոխհամաձայնության թե՛ միգրացիոն քաղաքականության մշակման, և թե՛ մարդասիրական ու քաղաքական հիմքերով ապաստան տրամադրելու իրենց համապատասխան

ազգային ու միջազգային պարտավորությունների կատարման առնչությամբ: Շարունակվող հակասությունները և ավելացող քսենոֆոբիայի դրսևորումները ցույց են տալիս միգրացիայի հարցերում քաղաքական կրթության լայնամասշտաբ գործընթացների և քաղաքացիների՝ միգրացիայի հարցերում մասնակցության ավելացման անհրաժեշտությունը:

Ավելին, ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Կրթության վերաբերյալ վերջին համաշխարհային զեկույցում ընդգծվում է, որ «Միգրացիայի և աշխատողների փոխարինման մասին հարցերի վերաբերյալ կրթությունն ու իրազեկման մակարդակի բարձրացումը տեղի չի ունենում միայն դասասենյակում: (...) Այդ հարցում կարևոր դերակատարում ունեն նաև համայնքային կենտրոնները»:⁷⁰

Թուրքիայի, Միացյալ Նահանգների և Միացյալ Թագավորության փորձը ցույց է տալիս, որ այս կենտրոնները արժեքավոր ներդրում ունեն թե՛ միգրանտների ինտեգրման, և թե՛ միգրանտների ու տեղի բնակչության միջև պոտենցիալ լարվածությունների կարգավորման հարցում:

Զեռնարկվող միջոցառումները բազմազան են և կարող են ներառել գրագիտության դասընթացներ, արտադասարանական օժանդակություն, սպորտային միջոցառումներ, համայնքային էքսկուրսիաներ, հանրային միջոցառումներ և պարզապես հանդիպումների կազմակերպման հնարավորություններ: Հաջողություններ գրանցած համայնքային կենտրոնները երբեմն դառնում են պարզապես «վստահելի վայրեր», որտեղ միգրանտները և տեղաբնակները կարող են հանդիպումներ ունենալ և ծանոթանալ միմյանց մշակութային բազմազանությանը:⁷¹ Այս համատեքստում ոչ ֆորմալ ՄՈՒԿ-ը կենսական նշանակություն ունի: ԿԶՆ 10-ի իրականացման միջոցների շարքում 10.բ. ենթակետով նախատեսված գործողությունները, այն է՝ զարգացմանն ուղղված պաշտոնական աջակցության և ֆինանսական հոսքերի խրախուսումը, բավականին հնչեղություն ստացած խնդիր է հանուն կայուն զարգացման

70 UNESCO: Global Education Monitoring Report 2019. Migration, displacement and education: building bridges, not walls, 2018, page 91.

71 UNESCO: Global Education Monitoring Report 2019. Migration, displacement and education: building bridges, not walls, 2018, pages 91-92.

կրթության հարցում, մասնավորապես հյուսիսային կիսագնդի երկրներում: Ըստ ԵԱՀԿ-ի տվյալների, զարգացման նպատակով աջակցության ծավալների՝ համախառն ազգային եկամտի մինչև 0.7% չափով մեծացումը (ԵԱՀԿ անդամ երկրների համար) մինչ օրս արձանագրված լավագույն ցուցանիշն է:

Այս հարցի վերաբերյալ մինչ այսօր քաղաքացիական հասարակության կողմից բազմաթիվ արշավներ ու հաշվետվողականության ապահովման նախաձեռնություններ են իրականացվել, որոնք համաձայնեցվել էին դեռևս 1970 թվականին և բազմիցս վերահաստատվել են,⁷² այդ թվում ԿԶՆ 17-ում:

Քանի որ տվյալները համեմատաբար ավելի հասանելի են և ոլորին է հետևել դրանց փոփոխություններին, ուստի դրանք են համարվում ԵԱՀԿ անդամ երկրների քաղաքացիների համար մեկնարկային և լիովին համահունչ են Կրթություն հանուն կայուն զարգացման հայեցակարգին:⁷³

72 <http://www.oecd.org/dac/stats/the07odagnitarget-ahistory.htm>, դիտվել է՝ 23.10.18.

73 Թիրախ 10.գ-ի իրականացման միջոցները՝ միգրանտների դրամական փոխանցումների գործարքների ծախսերը իջեցնել 3 տոկոսից ցածր, ամենաքիչն են ընդգրկվում քաղաքացիական հասարակության քարոզարշավներում ու իրագեղվում:



Հիմնական ուղերձները

ՄՈՒԿ նշանակությունը ԿԶՆ 8, 10, 13 և 16-ի համար

ԿԶՆ 13. Ձեռնարկել անհետաձգելի գործողություններ՝ կլիմայի փոփոխությունների և դրանց ազդեցությունների դեմ պայքարելու համար

- **Ճանաչումը.** ԿԶՆ 13-ում միանշանակորեն կրթությունը, իրազեկվածության մակարդակի բարձրացումը և մարդկային կարողությունների հզորացումը նշվում են որպես այդ նպատակի թիրախներ և իրագործման միջոցներ:
- **Կարիքները.** Տարեկան 83,000 մարդ է զոհվել 2000-ից 2013 թվականների ընթացքում տեղի ունեցած բնական աղետների հետևանքով:
- **Նշանակությունը.** Աղետների ռիսկերի կրճատմանն ուղղված մարդակենտրոն կանխարգելիչ միջոցառումները այդ ոլորտին առնչվող քաղաքականության շրջանակի անբաժանելի մասն են կազմում: ՄՈՒԿ-ն կարևոր նշանակություն ունի դրա իրագործման և արդյունքում՝ մարդկանց կյանքեր փրկելու գործում:
- **Նշանակությունը.** 119 երկրներում անցկացված հարցման հիման վրա կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազային կրթության, կլիմայի վերաբերյալ գիտելիքների կատարելագործումը և հանրության կողմից կլիմայի փոփոխությունների տեղային նշանակության ազդեցությունների գիտակցումը կարևոր նշանակություն ունեն կլիմայի փոփոխությունների դեմ ուղղված գործողություններում հանրության ներգրավման և աջակցության համար: ՄՈՒԿ-ը ևս կարևոր դերակատարում ունի կլիմայի փոփոխությունների դեմ ուղղված գործողությունների իրականացման հարցում:

4.3 ԿԶՆ 13. Կլիմայի փոփոխությունների դեմ ուղղված գործողություններ

4.3.1 ՄՈՒԿ-ի դերը ԿԶՆ 13-ի իրագործման հարցում

ԿԶՆ 13-ով երկու թիրախ ու իրականացման միջոց է նախատեսվում, որոնց համար կարևոր նշանակություն ունի մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը:

- Թիրախ 13.1-ն ուղղված է աղետների ռիսկերի նվազեցմանն ու վտանգներին և բնական աղետներին դիմակայելու և հարմարվելու կարողությունների զարգացմանը:

- Թիրախ 13.3-ով ուղղակիորեն կոչ է արվում բարելավել կրթությունը, բարձրացնել իրազեկվածության մակարդակը և զարգացնել մարդկային ու ինստիտուցիոնալ կարողությունները՝ կլիմայի փոփոխությունների մեղմացման, հարմարվողականության, ազդեցության նվազեցման և վաղ նախազգուշացման հարցերում:
- 13.բ-ի իրականացման միջոցով նախատեսված գործողությունները նույնպես ուղղված են կլիմայի փոփոխություններին առնչվող արդյունավետ պլանավորման և կառավարման կարողությունների զարգացմանը՝ հատկապես կարևորելով կանանց, երիտասարդներին, ինչպես նաև տեղական համայնքներն ու մարզինալացված խմբերը:

4.3.2 Մեծահասակների կրթությունը կարող է կյանքեր փրկել. աղետների ռիսկի նվազեցման մարդկային գործոնը

Ակնհայտ է, որ աղետներն ավելանում են թե՛ իրենց հաճախականությամբ, և թե՛ ուժգնությամբ: Դրանց հետևանքով տուժած անձանց թիվն ամեն տարի և յուրաքանչյուր երկրի մակարդակով տատանվում է: «Միջինում տարեկան 83,000 մարդ զոհվել է, իսկ 211 միլիոն մարդ տուժել է բնական աղետների հետևանքով, որոնք տեղի են ունեցել 2000-ից 2013 թվականների ընթացքում»:⁷⁴

Նման վայր է Ինդոնեզիայի Պալու քաղաքը, որտեղ հարյուրավոր մարդիկ զոհվեցին 2018 թվականի սեպտեմբերի 28-ին տեղի ունեցած ցունամիի հետևանքով: Հետագայում, պատճառների և սխալների վերլուծությունը ցույց տվեց, որ հիմնականում խնդիրը գործող վաղ նախազգուշացման համակարգերի հետ կապված տեխնիկական խնդիրներն էին: Գլխավորապես քննարկվում էր ծովեզերքին սեյսմիկ տվիչների, ծովի մակարդակագրերի, ազդալուսանների և ազդարարման շչակների բացակայությունը կամ դրանց տեխնիկական սպասարկման թերի լինելը, ինչպես նաև sms հաղորդագրությունների միջոցով ազդարարման համակարգի խափանումը: Բայց միևնույն ժամանակ ոչ բոլորն էին համոզված, որ ցունամիների մասին նախազգուշացնող համակարգի առկայությունը կարևոր նշանակություն ունի:

Անդրադառնալով այդ դեպքերին՝ «Նյու Յորք Փոստ» թերթը գրել էր. «2004 թվականի ցունամիից հետո բնական աղետների հարցերով զբաղվող պաշտոնատար անձինք պնդում էին, որ երկրաշարժն է նախազգուշացնում ցունամիի մասին և ազդարարում մարդկանց անմիջապես տարհանելու անհրաժեշտության մասին: (...) Ու այն ժամանակ, երբ երևում էր, որ հսկայական ալիքները մոտենում են, մեծ թվով մար-

դիկ դեռ կուտակված էին ափին, և այդ փաստը ցույց է տալիս, որ ավելի վաղ տեղի ունեցած աղետներից դասեր չեն քաղվել»:⁷⁵

Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030թթ. գործողությունների ծրագիրը նման ամենաարդիական փաստաթուղթն է աղետների ռիսկի նվազեցման համար: Ծրագրով սահմանվում է, որ թեև աղետների ռիսկի նվազեցման ընդհանուր պատասխանատվությունն ընկնում է պետությունների վրա, այնուամենայնիվ, շեշտվում է նաև, որ կարևոր դերակատարում ունեն այլ շահագրգիռ կողմերը, օրինակ՝ քաղաքացիական հասարակությունը և համայնքային կազմակերպությունները: Ծրագրում մասնավորապես մատնանշվում են հետևյալ տարրերը, որոնք սերտորեն կապված են երիտասարդների և մեծահասակների կրթության հետ.

- «Աղետների ռիսկի նվազեցման համար հարկավոր է կիրառել ավելի ընդլայնված և մարդկային տրոս կանխարգելիչ մոտեցումներ: (...) Միևնույն ժամանակ կառավարությունները պետք է աշխատեն համապատասխան շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ կանանց, երեխաների և երիտասարդների, հաշմանդամություն ունեցող մարդկանց, աղքատների, փախստականների, տեղաբնիկ ժողովուրդների, կամավորների, համայնքների մասնագետների և տարեցների հետ, և վերջիններիս ներգրավեն քաղաքականության, պլանների և ստանդարտների մշակման և կիրառման գործընթացներում»:⁷⁶
- Անհրաժեշտ է նաև խթանել «... աղետների ռիսկի իմացության, այդ թվում՝ աղետների կանխարգելման, մեղմացման, պատրաստվածության, արձագանքման, և վերականգնման հարցերի ներառումը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության, ինչպես նաև քաղաքացիական կրթության բոլոր մակարդակներում ու մասնագիտական ուսուցման և վերապատրաստման ծրագրերում»:⁷⁷

75 <https://nypost.com/2018/10/01/indonesias-early-warning-system-couldve-saved-lives-in-deadly-tsunami/>. Տե՛ս նաև՝ <https://phys.org/news/2018-10-indonesia-tsunami-early-strategy-palu.html>, երկու կայքերը դիտվել են՝ 25.10.18

76 UNISDR: Sendai Framework for Disaster Risk Reduction, 2015, paragraph 7.

77 UNISDR: Sendai Framework for Disaster Risk Reduction, 2015, paragraph 24.

74 <https://unstats.un.org/sdgs/report/2016/goal-13/>, դիտվել է՝ 26.10.18

- «Տարեց մարդիկ ունեն տարիներով կուտակված գիտելիքներ, հմտություններ և իմաստություն, որոնք անգնահատելի են աղետների ռիսկի նվազեցման գործում: Հետևաբար նրանք պետք է ներգրավված լինեն քաղաքականության, պլանների և հատուկ մեխանիզմների, այդ թվում վաղ նախազգուշացման համակարգերի մշակման գործընթացներում...»,⁷⁸ ինչով ընդգծվում է սերունդների միջև գիտելիքների փոխանակման հնարավորությունների ներուժը և, տվյալ դեպքում, կարևորվում դրա անհրաժեշտությունը:

Արձագանքման հզորացված կարողությունների զարգացման համատեքստում ՄԱԿ-ի Աղետների նվազեցման միջազգային ռազմավարությամբ սահմանված կարևոր առաջնահերթությունների թվում նշվում է համայնքների կողմից վտանգի մասին նախազգուշացումների տարածման, ջրօդերևութաբանական և գեոֆիզիկական պարզ նշանների ճանաչման անհրաժեշտությունը, որը թույլ կտա արագ արձագանքել տվյալ իրավիճակում:⁷⁹ Այլ կերպ ասած, եթե գոյություն ունեցող բոլոր տեխնիկական միջոցները խափանվեն, ապա Ինդոնեզիայի ամենահեռավոր բնակավայրերում մարդիկ պետք է իմանան, որ երկրաշարժը, որը կարելի է զգալ սույնիսկ առանց արտաքին որևէ նախազգուշացման, վկայում է ցունամիի բարձր ռիսկի մասին, և այդ պարագայում ամենահամարժեք արձագանքը պետք է լինի մարդկանց արագ տարահանումը: Մեծահասակների ուսումնառության և կրթության հնարավորությունները, որոնք հիմնականում տրամադրվում են համայնքային ուսուցման կենտրոններում, սերունդների միջև գիտելիքների ու տեղեկատվության փոխանակման անփոխարինելի և լիարժեք գործիք են: Դրանք կարևոր են համայնքների մակարդակով ռիսկերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և արձագանքման հնարավորությունների ավելացման համար: (ՏԵՄ նաև գլուխ 5 viii, որը վերաբերում է սերունդների միջև գիտելիքների և տեղեկատվության փոխանակմանն ու միջսերնդային ուսուցմանը):

4.3.3 Կլիմայի փոփոխությունների դեմ պայքար

Փարիզյան համաձայնագրում սահմանվում է, որ կլիմայի փոփոխությունը մարդկության համընդհանուր խնդիրն է: Համաձայնագրին միացել է 197 երկիր և այս պահին այն վավերացրել է 181 երկիր: Կոնվենցիայի 6-րդ հոդվածն ուղղված է կլիմայի փոփոխությունների ազդեցության նվազեցմանը՝ հնարավորություն տալով հասարակությանը իր մասնակցությունն ունենալ լուծումներ գտնելու հարցում:

Այս նպատակով գործողությունների երկու ուղղություններ են նախանշվել՝ «կրթություն և ուսուցում» և «հանրության իրազեկում ու մասնակցություն»:

Գործողությունների առաջին ուղղության՝ «կրթության և ուսուցման» մասով «Կլիմայի փոփոխության մասին» Միավորված ազգերի կազմակերպության շրջանակային կոնվենցիայի քարտուղարությունը միանշանակորեն ընդունում է ցկյանս ուսումնառության մոտեցումը, նշելով հետևյալը. «Հոդված 6-ով կոչ է արվում ձեռնարկել այնպիսի նախաձեռնություններ, որոնք բազմազան են, նորարարական և ռեսուրսաարդյունավետ: Դրանք կարող են լինել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության շրջանակներում իրականացվող գործնական միջոցառումներ: Այդ նախաձեռնությունները կարող են ուսուցման միանգամայն տարբեր ձևաչափեր ունենալ և անցկացվել ինչպես նախադպրոցական, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատություններում, իրականացվել թե՛ մասնագիտական ուսուցման, և թե՛ ցկյանս ուսումնառության ձևով»:⁸⁰

Շահագրգիռ կողմերի մեծ մասը գիտակցում է, որ կլիմայի փոփոխությունները հնարավոր չէ արագ տեսնելու կանգնեցնել, ավելի շուտ դրանք պետք է կառավարել, հետևաբար դրանց հետևանքների մեղմացումն ու դրանց հարմարվելն ավելի արդիական են դառնում, ու ավելի շատ անհրաժեշտ են դառնում մի շարք նոր ու բազմաբնույթ հմտություններ: Գյուղաբնակները կիրառում կամ կրկին թարմացնում են երաշտադիմացկուն մշակաբույսերի սերմերի վերաբերյալ իրենց գիտելիքները, մարդասիրական աջակցությամբ զբաղ-

78 UNISDR: Sendai Framework for Disaster Risk Reduction, 2015, paragraph 36.

79 UNISDR: EWC III. Third International Conference on Early Warning. Developing Early Warning Systems: A Checklist, 2006, էջ 7. Տե՛ս օրինակ՝ Guru/ Santha: People-centred early warning systems and disaster risk reduction.

A Scoping Study of Public Participatory Geographical Information Systems (PPGIS) in India, 2013.

80 <https://unfccc.int/topics/education-and-outreach/workstreams/education-and-training>, դիտվել է՝ 25.10.18.

վորները սկսում են ուսումնասիրել, թե ինչպես կարելի է «ավելի լավ կառուցել»,⁸¹ քաղաքացիական ինժե-
ներները սկսում են ավելի շատ ուշադրություն դարձել
վերականգնվող էներգիայի աղբյուրներին, կառավա-
րիչները փորձի փոխանակում են անում, թե ինչպես
կարելի է պլանավորել բոլոր տեսակի ապրանքների
արտադրությունը՝ հաշվի առնելով հնարավոր փո-
փոխական եղանակային երևույթները: Զանի որ մեր
միջավայրը փոփոխության է ենթարկվում, ավելանում
է նաև ավանդական հմտությունների վերականգնման
և նորերի ձեռքբերման անհրաժեշտությունը:

Գործողությունների երկրորդ ուղղությունը՝ հանրույթ-
յան իրազեկման, հասարակության մասնակցության
և հանրության համար տեղեկատվության հասանե-
լիության մասով,⁸² սերտորեն փոխկապակցված է մե-
ծահասակների կրթության և ուսումնառության, ինչ-
պես նաև ակտիվ քաղաքացիության հետ: Gallup-ի
կողմից 2007-2008 և 2010 թվականներին անցկաց-
ված գլոբալ հարցման արդյունքները (119 երկրնե-
րում) ցույց են տալիս, որ կլիմայի փոփոխությունների

վերաբերյալ իրազեկման հետ ամենաշատը փոխկա-
պակցված է կրթությունը, իսկ հետո արդեն հաղոր-
դակցության միջոցների հասանելիությունը: Կլիմայի
փոփոխությունների ռիսկի ընկալումները տարբեր
են: Այսպես, Աֆրիկայի և Ասիայի շատ երկրներում,
որտեղ ռիսկի մասին նախագգուշացնող տեղեկատ-
վությունը հիմնականում ընկալվում է տեղանքի
ջերմաստիճանային փոփոխությունների ձևով: Իսկ
Լատինական Ամերիկայում և Եվրոպայում ռիսկի
մասին իրազեկվածության ամենաուժեղ գործոնը այն
ընկալումն է, որ կլիմայի փոփոխությունները պայ-
մանավորված են մարդու միջամտությամբ: Սակայն
կարևոր նշանակություն ունեն նաև այլ գործոնները
նույնպես, և «... արդյունքները ցույց են տալիս, որ
բազային կրթության, կլիմայի վերաբերյալ գիտելիք-
ների կատարելագործումը և կլիմայի փոփոխույթ-
յունների տեղական մասշտաբով ընկալումը կարևոր
նշանակություն ունեն հանրության ներգրավման և
կլիմայի փոփոխությունների դեմ ուղղված գործ-
ողություններին օժանդակելու համար»:⁸³

81 «Ավելի լավ կառուցելու» գաղափարը նշանակում է աղետներից հետո
պետությունների և համայնքների դիմակայունությունը բարձրացնելու
նպատակով իրականացվող վերականգնման և վերակառուցման փուլերի
օգտագործում՝ աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները
ֆիզիկական ենթակառուցվածքների ու սոցիալական համակարգերի
վերականգնման փուլերում, ինչպես նաև կենսակերպի, տնտեսության և
շրջակա միջավայրին վերաբերող հարցերում ներառելու միջոցով:» Աղբյուրը՝
<https://www.preventionweb.net/terminology/view/51750>, դիտվել է՝ 05.11.18.

82 [https://unfccc.int/topics/education-and-outreach/workstreams/public-partici-
pation](https://unfccc.int/topics/education-and-outreach/workstreams/public-participation), դիտվել է՝ 25.10.18

83 Predictors of public climate change awareness and risk perception around
the world, 2015, page 1014.

Կուբայում Դի-Վի-Վի Ինթերնեշնալը համագործակցում է «Centro Felix Varela»
հասարակական կազմակերպության հետ, որը խորհրդատվական կարգավիճակ է ստացել
ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից: Կազմակերպությունն
ակտիվ է պատասխանատու քաղաքացիության ամրապնդումն է: «Centro Felix Varela»
կազմակերպությունը միջազգային ցանցի անդամ է: Այն մոբիլիզացնում է քաղաքացիներին
և որպես Էկոլոգիական և կլիմայի փոփոխության խնդիրների հարցով քաղաքացիների
լայնամասշտաբ իրազեկման գործիք օգտագործում է պլանավորումը կամ այլ կերպ
ասած՝ «քարտեզագրումը»: Քաղաքացիները կազմում են «կանաչ ապրելակերպի» ու նաև
Էկոլոգիական, սոցիալական և մշակութային ռեսուրսների օգտագործման սխեմա: Նման
«քարտեզագրումը» տարածվում է նաև փոփոխված կլիմայով տարածքների, այսինքն՝ այն
տեղական տարածքների վրա, որտեղ ցայտուն կերպով երևում են կլիմայի փոփոխության
անկանխատեսելի ազդեցությունները մեր մոլորակի վրա, ինչպես նաև այն տարածքների
վրա, որոնք տուժել են բնական կամ տեխնոգեն աղետների հետևանքով: Ներկայումս
նախաձեռնությունում ներգրավված են 65 երկրների մոտ 950 քաղաքներ, ավաններ և գյուղեր:

Ներդիր 6.

«Կանաչ քարտեզ».
մտածել գլոբալ, բայց
պլանավորել
տեղական
մասշտաբով



Հիմնական ուղերձները

ՄՈՒԿ նշանակությունը ԿԶՆ 8, 10, 13 և 16-ի համար

ԿԶՆ 16: խթանել խաղաղ և ներառական հասարակության կայացումը՝ հանուն կայուն զարգացման, ապահովել արդարադատության հասանելիությունը բոլորի համար, ստեղծել արդյունավետ, հաշվետու և ներառական հաստատություններ բոլոր մակարդակներում:

→ **Նշանակությունը.** Մեծահասակների կրթությունը կարևոր դեր ունի համայնքների մոբիլիզացման, ուսուցման և իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման գործում՝ հակամարտությունների կարգավորման, կայուն խաղաղության խթանման և հաստատությունների գործունեության ու հաշվետվողականության նկատմամբ մոնիթորինգի նպատակներով:

→ **Նշանակությունը.** Բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ մեծահասակների կրթության ծրագրերը կարող են ուղղակիորեն նպաստավոր դեր ունենալ բռնությունների կրճատման գործում՝ հակամարտությունների կարգավորման միջոցով (թիրախ 16.1), դաժան վերաբերմունքի, երեխաների շահագործման և թրաֆիքինգի նվազեցման (թիրախ 16.2), օրենքի գերակայության ապահովման (թիրախ 16.3), կաշառակերության կրճատման (թիրախ 16.5), արդյունավետ գործող հաստատությունների զարգացման միջոցով (թիրախ 16.6), որոշումների կայացման գործընթացում հանրության ներգրավման (թիրախ 16.7) և հանրության համար տեղեկատվության հասանելիության ապահովման միջոցով (թիրախ 16.10):

4.4 ԿԶՆ 16. Խաղաղություն, արդարադատություն և արդյունավետ կառույցներ


4.4.1 Խաղաղություն, արդարադատություն և արդյունավետ գործող կառույցներ. վերևից ներքև, թե՛ ներքևից վերև

ԿԶՆ 16-ը ընդգրկում է հարցերի բավականին լայն շրջանակ, այդ թվում՝ բռնությունների, դիտավորյալ կատարված սպանությունների ու հակամարտությունների հետևանք հանդիսացող գոհերի թվի կրճատումը, երեխաների պաշտպանությունը (այդ թվում՝ երեխաների նկատմամբ բռնությունների, շահագործման, թրաֆիքինգի և խոշտանգումների դեպքերի վերացումը), օրենքի գերակայության խթանումը, բոլորի համար արդարադատության հավասար հասանելիության ապահովումը, անօրի-

նական ֆինանսական հոսքերի և զենքի ապօրինի շրջանառության մասշտաբների կրճատումը, կոռուպցիայի և կաշառակերության դեպքերի կրճատումը, արդյունավետ ու հաշվետվողական ինստիտուտների/կառույցների ստեղծումը, որոշումների կայացման ներառական և մասնակցային գործընթացի ապահովումը և հանրության համար տեղեկատվության հասանելիության ապահովումը:

Իրականացման միջոցներով (որոնք նշված են 16.ա և 16.բ թիրախներում) նախատեսվում է համապատասխան ազգային ինստիտուտների/կառույցների հզորացում և ոչ խտրական օրենքների ու ռազմավարությունների խթանում: Ընդհանուր առմամբ, ԿԶՆ 16-ի նկարագրությունը ցույց է տալիս, որ դրա հիմնական առաջնահերթություններն են ինստիտուտների/կառույցների օրենքները և ռազմավարությունները:

ԿԶՆ 16-ի շրջանակներում կառուցվածքային հարցերը նախատեսված են «վերևից ներքև» սկզբունքով, ու որևէ անդրադարձ չկա այն մարդկանց դերակատարմանը, ովքեր ներգրավվելու են և ներկայացված են լինելու այդ գործընթացներում, ում պաշտպանության համար իրականացվում են դրանք և ի վերջո ի շահ



Աղբյուրը՝ Anderson & Olson: Confronting War: Critical Lessons for Peace Practitioners, 2003, page 56.

Գծապատկեր 7.

Խաղաղարարական գործունեության արդյունավետության մոդել

որոնց ենթադրվում է, որ պետք է գործեն բոլոր այդ կառույցները, օրենքները և ռազմավարությունները:

Այդուամենայնիվ, 2018 թվականին ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհուրդը հավանության արժանացրեց կայուն զարգացման կառավարմանն ուղղված՝ 11 սկզբունքներից բաղկացած մի փաթեթ, որտեղ բոլորովին այլ բան է ասվում:⁸⁴ Սկզբունքներից մեկը վերաբերում է մասնակցությանը, և դրանով շեշտվում է, որ «... բոլոր ազդեցիկ քաղաքական խմբերը պետք է ակտիվ մասնակցություն ունենան բոլոր այն հարցերում, որոնք իրենց են վերաբերում, և հնարավորություն ունենան ազդեցություն ունենալու քաղաքականության մշակման վրա: Դրանց օրինակներից են (...) հանրային քննարկումների կարգավորման գործընթացները, (...) մասնակցային սկզբունքով բյուջեի ձևավորումը և հասարակության կողմից ուղղորդվող զարգացումը»:⁸⁵ Այլ կերպ ասած, այս սկզբունքով նկարագրվում են սոցիալական և քաղաքական գործընթացներ, որոնց հիմքում ընկած են քաղաքացիների կրթությունը և մոբիլիզացումը:

4.4.2 Ինչպես ձևավորել խաղաղ համագոյակցող հասարակություններ

«Խաղաղ գործելակերպին ուղղված մտածելակերպ» (ԽԱՂՈՒՄ) ծրագիրը լայն ճանաչում ունեցող շրջանակ է, որն ուղղված է խաղաղությանը նպաստող գործունեության արդյունավետության գնահատմանն ու դրա վերաբերյալ քննարկումներին: Այս շրջանակի կառուցվածքը (տե՛ս գծանկար 7) հիմնված է 26 կոնկրետ դեպքերի ուսումնասիրության և հարյուրավոր գիտական և ոլորտին քաջատեղյակ կառույցների հետ աշխատանքների վրա:⁸⁶ Առաջին փուլում նախագծի միջոցով վեր են հանվում երկու հիմնական թիրախ խմբերը՝ քաղաքականությունն առաջնորդող և բանակցային գործընթացներ իրականացնող «առանցքային անձինք» և «մեծաթիվ այլ մարդիկ», ովքեր բնակչության մեծ մասն են կազմում կամ ներկայացնում են հասարակության լայն շրջանակները: Այնուհետև տարբերակվում է, թե որ մակարդակում է հնարավոր արդյունքների հասնել՝ անհատական մակարդակում, թե՛ սոցիալ-քաղաքական:

Հիմնական եզրակացությունները հետևյալն են.

1) կայուն խաղաղության համար անհրաժեշտ են միջամտություններ և փոփոխություններ, որոնք պետք

84 Սկզբունքները մշակվել են ՄԱԿ-ի պետական կառավարման հարցերով փորձագետների խմբի և ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական հարցերով դեպարտամենտի կողմից:

85 Տե՛ս <http://sdg.iisd.org/commentary/guest-articles/effective-governance-for-sustainable-development-11-principles-to-put-in-practice/> Սկզբունքների ամբողջական ցանկը տե՛ս՝ UN Economic and Social Council: Principles of effective governance for sustainable development, 2018, paragraph 31.

86 Տե՛ս <https://www.cdacollaborative.org/what-we-do/peacebuilding-effective-ness/> For details see: Anderson & Olson: Confronting War: Critical Lessons for Peace Practitioners, 2003.

Ե լինեն բոլոր չորս մակարդակներում (ինչպես ներկայացված է վանդակներում), և

2) ազդեցությունը պետք է տարածվի բոլոր ոլորտների միջև, այսինքն, ըստ գծանկարում սլաքներով ներկայացվածի՝ բոլոր վանդակների միջև: Անկախ նրանից, թե կոնկրետ նախագիծը կամ քաղաքականության իրականացման միջոցառումը այդ սխեմայի որ մասում է գտնվում, միևնույնն է, անհրաժեշտ է այնպես պլանավորել, որ բոլոր այդ գործողությունների ազդեցությունը տարածվի բոլոր անձանց վրա և բոլոր մակարդակներում, որպեսզի հնարավոր լինի արդյունքի հասնել և էական փոփոխություններ արձանագրել»:⁸⁷

Դիտարկելով այս տեսությունը ԿՀՆ 16-ի համատեքստում, կարելի է ասել, որ ԿՀՆ 16-ի թիրախները և իրականացման միջոցները հիմնականում 3-րդ վանդակում են (կառույցներ, օրենքներ և քաղաքական ռազմավարություններ) և վերաբերում են սահմանափակ թվով առանցքային անձանց: Մեծահասակների կրթությանն ուղղված գործողությունները հիմնականում նպատակաուղղված են կամ անհատներին (վանդակ 1), կամ համայնքներին (1-ին և 4-րդ վանդակների միջև՝ կախված խմբի մասշտաբներից), և իդեալական տարբերակում այդ գործողությունների իրականացման արդյունքները պետք է փոխանցվեն անհատական մակարդակից՝ սոցիալ-քաղաքական մակարդակ՝ վանդակ 4: Վանդակներ 3-ի և 4-ի միջև սլաքները մատնացույց են անում առանցքային անձանց և հանրության միջև ակտիվ փոխգործակցության անհրաժեշտությունը:

Խաղաղության, արդարադատության և ինստիտուցիոնալ կայացման համատեքստում դրանք խոսում են ինստիտուտների և հանրության միջև հաղորդակցության, թափանցիկության, հաշվետվողականության և մասնակցության մասին:

Մեծահասակների կրթության ոչ ֆորմալ ձևերը, օրինակ՝ համայնքային ուսումնական կենտրոններում կամ երիտասարդների կրթական կենտրոններում կազմակերպվող դասընթացների տեսքով, միաՆշանակորեն համայնքների հնարավորությունների ընդլայնման և մոբիլիզացման աղբյուր են հանդի-

սանում: Մեծահասակների կրթությունն ուղղված չէ պարզապես մասնակցության խրախուսմանը: Այն նաև զարգացնում է այնպիսի կարողություններ, որոնք հնարավորություն են տալիս կառույցներից և քաղաքական գործիչներից հաշվետվողականություն պահանջել: Մյուս կողմից, կառույցները կդառնան էլ ավելի վստահելի, ինչը կհանգեցնի սոցիալական կապիտալի ավելացմանը:⁸⁸

Այս փոխլացնող և փոխադարձ հզորացնող գործընթացը լավ արդյունքներ է տալիս, և ապացուցում, որ մեծահասակների կրթությունը պարզապես օժանդակող գործիք չէ: Այս երկու գործընթացներն անքակտելի են՝ թե՛ հաշվետու և մասնակցային կառույցների ձևավորումը, և թե՛ իրազեկ ու ակտիվ քաղաքացիական բնակչության ձևավորումը:

4.4.3 Մեծահասակների կրթության դերը. օրինակներ

Ստորև ներկայացվող մասնակցային սկզբունքով բյուջեի պլանավորման օրինակը ցույց է տալիս, թե ինչպես է մեծահասակների կրթությունն ու ուսումնառությունը նպաստում վերը նշված «Խաղաղ գործելակերպին ուղղված մտածելակերպ» ծրագրի կիրառությունը: Բյուջեի պլանավորման մասնակցային սկզբունքը փոխկապակցված է ԿՀՆ 16-ի շրջանակներում ներառված բազմաթիվ հարցերի հետ, որոնցից են՝ կաշառակերության կրճատումը (թիրախ 16.5), արդյունավետ գործող կառույցների/ինստիտուտների ստեղծումը (թիրախ 16.6), որոշումների կայացման գործընթացում հանրության ներգրավումը (թիրախ 16.7) և հանրության համար տեղեկատվության հասանելիության ապահովումը (թիրախ 16.10):

Մասնակցային սկզբունքով բյուջեի պլանավորումն այն գործընթացն է, որը ընտրովի պաշտոններ չգրադեցնող քաղաքացիներին հնարավորություն է տալիս մասնակցություն ունենալ հանրային ֆինանսական միջոցների պլանավորման և (կամ) բաշխման գործընթացում: Այս գործընթացը, որպես այդպիսին,

87 Anderson & Olson: Confronting War: Critical Lessons for Peace Practitioners, 2003, page 56.

88 UNESCO Institute for Lifelong Learning: 3rd Global Report on Adult Learning and Education, 2016, page 111.

նպաստում է արդյունավետ, հաշվետու և թափանցիկ հաստատությունների ձևավորմանը:⁸⁹

Մասնակցային սկզբունքով բյուջեի պլանավորումն ավելի արդյունավետ է փոքր համայնքային մակարդակից ավելի բարձր՝ վարչական, սակայն ոչ համապետական մակարդակում, օրինակ՝ քաղաքային կամ ապակենտրոնացված շրջանի մակարդակում: Ամեն դեպքում դա կարող է լինել որևէ պետական հաստատություն, որն ունի կառավարման և ռեսուրսների տնօրինման լիազորություններ:⁹⁰ Բրազիլիայի Պորտո Ալեգրի քաղաքում 1989 թվականին Նախաձեռնվեց բյուջեի կազմավորման ամբողջովին մասնակցային գործընթացը: Այդ ժամանակվանից ի վեր մասնակցային սկզբունքով բյուջեի պլանավորման գործընթացը տարածվեց աշխարհի ավելի քան 1200 քաղաքներում: Ըստ որոշ աղբյուրների գնահատման, ամբողջ աշխարհում մասնակցային սկզբունքով կազմվել և մոնիթորինգի է ենթարկվել գրեթե 3000 բյուջե: Իր բուն եռթյամբ մասնակցային սկզբունքով բյուջեի պլանավորումն իրենից հենց մեծահասակների կրթության և ուսումնառության գործընթաց է ներկայացնում: Մասնակցային սկզբունքով բյուջեի պլանավորման մասնակիցները ձեռք են բերում բավականին լայն սպեկտրի գիտելիքներ և տեխնիկական ու սոցիալական հմտություններ, այդ թվում՝ ֆինանսական գրագիտության հմտություններ, ավելի խորացված տեղեկություններ են ստանում տեղական կառույցների գործառնությունների և պարտավորությունների վերաբերյալ, կարողանում են վերհանել համայնքային կարիքներն ու առաջնահերթությունները, իրականացնել բյուջեի պլանավորում և մոնիթորինգ, իրազեկված են լինում հաշվետվողականության և թափանցիկության մասին, ինչպես նաև ձեռք են բերում հաղորդակցման և բանակցությունների հմտություններ:

Ընդհանուր առմամբ, մասնակցային սկզբունքով բյուջեի պլանավորումը՝

- ավելացնում է քաղաքացիների մասնակցության մակարդակը հանրային ոլորտում որոշումների կայացման գործընթացներում,
- մեծացնում է տեղեկատվության հասանելիության մակարդակը, օրինակ՝ պետության պատասխանատվության, քաղաքականության իրականացման և մշակման վերաբերյալ, ինչպես նաև այնպիսի տեխնիկական հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ օրինակ հողօգտագործումն ու գոտիավորումը,
- անմիջական կապ է ապահովում մասնակցության և մատուցվող ծառայությունների միջև,⁹¹
- նվազեցնում է կոռուպցիան և կաշառակերությունը՝ թափանցիկության ավելացման շնորհիվ:

89 Թիրախ 16.6-ի՝ արդյունավետ, հաշվետու և թափանցիկ հաստատությունների մասով ցուցանիշներից մեկը հետևյալն է. «Առաջնահերթ հանրային ծախսեր՝ որպես Նախնական հաստատված բյուջեի մաս՝ ըստ ոլորտների (կամ ըստ բյուջեի հոդվածների)»:
90 Hope for Democracy: 25 Years of Participatory Budgeting World-Wide, 2014, page 29.

91 The World Bank: Participatory Budgeting, 2007, page 41.

Ներդիր 7. Գրագիտություն և ԿՇՆ 16

Մայիում Դի-Վի-Վի Ինթերնեշնալը համագործակցում է «Jeunesse et Développement» կազմակերպության հետ և համատեղ իրականացնում համայնքային զարգացման ծրագիր, որի ընթացքում, ի թիվս այլևի, կիրառում է նաև «ՌԵՖԼԵԿՏ» մեթոդը (մանրամասների համար՝ տե՛ս մեթոդաբանության վերաբերյալ գլուխ 2-ը): Չնայած ի սկզբանե ծրագիրն ուղղված էր գրագիտության և առողջապահության հարցերին, արդյունքում ստացվեց այնպես, որ ձևավորվեցին երեխաների հարցերով կոմիտեներ: Այդ կոմիտեների կազմում ընդգրկված են ծնողներ, որոնք քննարկում են երեխաների թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված միջոցներ և մեխանիզմներ՝ այդպիսով ուղղակիորեն նպաստելով թիրախ 16.2-ի իրագործմանը (երեխաների նկատմամբ բռնությունների, շահագործման, թրաֆիքինգի և խոշտանգումների դեպքերի վերացում): Ավելին, «ծրագիրը ցույց է տվել, որ որքան մարդիկ ավելի շատ են տեղեկացված իրենց կյանքին ու շրջակա միջավայրին վերաբերող օրենքների և այլ գործընթացների մասին, այնքան ավելի ակտիվ դերակատարում ունեն որոշումների կայացման և կառավարման գործընթացներում», և դրանով իսկ նպաստում են թիրախ 16.3-ի (օրենքի գերակայության խթանում) և թիրախ 16.7-ի (որոշումների կայացման գործընթացում հանրության ներգրավում) իրականացմանը:


Աղբյուրը՝ http://uil.unesco.org/fileadmin/bamako_conf_2007/UIL-Effective-Programmes/08_en.html

Դի-Վի-Վի Ինթերնեշնալը երիտասարդների զարգացման ինստիտուտ հասարակական կազմակերպության հետ համատեղ (որը ներգրավված է մոտ 50 երիտասարդական կենտրոններից բաղկացած ցանցում) Դրոգաստանում իրականացրել է միջեթնիկական և միջկրոնական լարվածությունների թուլացմանն ուղղված միջոցառումներ երկրի հյուսիսի և հարավի բնակչության շրջանում: Առաջիններն, ընդհանրապես, ավելի հարուստ են և քաղաքական, իսկ երկրորդներն՝ ավելի աղքատ և գյուղաբնակ: Հետիականարտային տարածքներում կազմավորվել են խառը եթնիկ պատկանելիության երիտասարդների տարբեր խմբեր: Փորձագետ օժանդակողների և ուսումնական դասընթացների օգնությամբ երիտասարդների յուրաքանչյուր խումբ մշակել է նախագծեր կամ կազմակերպել է միջոցառումներ՝ ընդգծելով բոլոր եթնիկ խմբերի էական նմանությունն ու հավասարությունը: Արդյունքում 2014 թվականի հունվարից մինչև 2016 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում երկրի հարավում թվով 15, իսկ երկրի հյուսիսում՝ 10 «Երիտասարդական ստեղծագործ խմբեր» մոտ 400 և 500 մասնակիցներ են ներգրավել թվով 58 գործողությունների շրջանակներում կազմակերպված մոտ 125 միջոցառումներում:

Արդյունքում մշակվել ու արձանագրվել են մի շարք մեթոդաբանություններ, որոնք կարող են կիրառվել նաև այլ վայրերում: Հենց նույն երիտասարդական խմբերն իրենք էլ բավականին մեծ օգուտներ ստացան՝ իրենց հմտությունների և կարողությունների զարգացման ու ստացված նյութերի և սարքավորումների տեսքով: Ըստ երիտասարդների զարգացման ինստիտուտի տվյալների, նախագծում ներգրավվածների մոտ 30%-ը դեռ կամավոր աշխատում են որպես ուսուցանողներ, իսկ մոտ 10%-ն այժմ ներգրավված են որպես մշտական հիմունքներով կամավորներ:

Ներդիր 8.
Հավամարտությունների
կարգավորում
երիտասարդների հետ
աշխատանքի միջոցով

Աղբյուրներ՝ https://ec.europa.eu/europeaid/projects/promotion-ethnic-equality-and-civic-engagement-peace_en և Siochru: Evaluation of DVV International Asia Programme, 2017, page 53.



5

Եզրափակիչ դիտարկումներ և առաջարկություններ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը կարևոր դերակատարություն ունեն թե՛ ԿԶՆ 4-ի, և թե՛ մնացած բոլոր ԿԶՆ-ների իրագործման հարցում: Մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը ինքնավստահության ավելացման, իրավունքների և հնարավորությունների ընդլայնման ու վերափոխման գործիք է, որը մի շարք կարևոր օգուտներ է բերում անհատին, համայնքին և հասարակության ընդհանրապես: Օրակարգ 2030-ը ինքնին չի սամանափակվում միայն քաղաքականության որոշ անկշան փոփոխություններով կամ լրացումներով, այն նախանշում է մեր աշխարհը վերափոխելու և մարդկանց ու մոլորակի շահագործումը կայուն զարգացմամբ փոխարինելու լայն հնարավորություններ:

Մեծահասակների կրթական հանրությանն ուղղված՝ ստորև ներկայացված առաջարկությունները կարող են օժանդակել վերափոխումների այդ գործընթացում մեծահասակների ուսումնառության և կրթության դերի հզորացմանը:

i. Անհավասարությունը դարձնել ամենաառանցքային խնդիր. Մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը այս տեսանկյունից լայն հնարավորություններ է տալիս, ուստի «ոչ մեկին չանտեսելու» և «սկզբում ամենաանտեսվածների օգնության հասնելու» համընդգրկուն նպատակը պետք է դրվի մեծահասակների ուսուցմանն ուղղված բոլոր նախաձեռնությունների կենտրոնում: Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը պետք է նպատակաուղղված լինեն ամենամարգինալացված խմբերին, օժանդակեն առավել աղքատներին և աջակցություն տրամադրեն ամենաշատ խտրականության ենթարկված խմբերին: Ամբողջ աշխարհում անհավասարությունների աճը փաստում է, որ միայն «ոչ մեկին չանտեսելու» սկզբունքը բավարար չէ փոփոխությունների հասնելու համար: Այն պետք է լինի լուծման ենթակա հիմնական և առանցքային խնդիր, սակայն խտրականության կառուցվածքային և պատմական ասպեկտների հետ կապված խնդիրների լուծման համար անհրաժեշտ են նաև խտրականության բացառմանն ու հավասար իրավունքների ապահովմանն ուղղված գործողություններ:

ii. Խուսափել քաղաքականության նեղ ձևակերպումների վրա կենտրոնանալուց. Հանրային

քաղաքականության մշակումն անցնում է բազմաթիվ փուլերով, որոնք են՝ ա) օրակարգի սահմանումը, բ) քաղաքականության ձևակերպումը, գ) քաղաքականության իրականացումը և դ) քաղաքականության մոնիթորինգն ու գնահատումը: Մեծահասակների կրթության մասնագետներն ու լրբիստները պետք է խուսափեն պարզապես քաղաքականության նեղ ձևակերպումների վրա կենտրոնանալուց: Արդեն իսկ մեծ փորձառություն ու բավականին մեծ թվով քաղաքական ռազմավարություններ գոյություն ունեն: Առավել հավասար ու ավելի կայուն հասարակություններ ձևավորելու քաղաքական կամքը չի կարող պայմանավորված լինել էլ ավելի շատ ու արտասովոր քաղաքականություններով ու տեխնիկական լուծումներով: Որոշ երկրներում կարևոր հարցերից է քաղաքականության օրակարգի մշակումը՝ հաշվի առնելով մարգինալացված խմբերի կարիքները: Այլ երկրներում իրավիճակը կարող է տարբերվել, որտեղ թեև կարող են գոյություն ունենալ արդեն իսկ մշակված արդյունավետ քաղաքականություններ, բայց դրանք երբեք չիրականացվեն կամ ամբողջությամբ խեղաթյուրվեն իրականացման ընթացքում, օրինակ՝ ոչ ճիշտ կառավարման կամ կոռուպցիայի կամ պարզապես կենտրոնական և տեղական կառավարման մարմինների միջև իրականացման գործելակերպերի անհամապատասխանության պատճառով: Ուստի այս պարագայում կարևոր նշանակություն ունեն իրազեկված քաղաքացիների իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումն ու նրանց մոբիլիզացումը:

iii. Կենտրոնանալ ազգային օրակարգերի ու քաղաքականությունների վրա. Տարածաշրջանային և համաշխարհային մակարդակում հաղորդակցությունը ու միջազգային դաշինքները օգտակար են ընդհանուր սոցիալական և կրթական խնդիրների վերհանման համար: Սակայն, միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ կրթությանը վերաբերող հարցերի շուրջ որոշումների կայացման գործընթացները հիմնականում տեղի են ունենում ազգային մակարդակում: Միջազգային ու համաշխարհային մակարդակով գիտելիքների և փորձի փոխանակումն, իհարկե, կարևոր նշանակություն ունի, սակայն կոնկրետ փոփոխությունները տեղի են ունենում հենց ազգային մակարդակում: Գործող ազգային քաղաքականության, ռազմավարությունների վերլուծությունը, ինչպես նաև քաղաքականության մակարդակում ՄՈՒԿ-ին

ավելի շատ կարևորելը լոբբիստական արդյունավետ աշխատանքների հիմնական նախադրյալներն են:

iv. **Լոբբիստական և քարոզչական աշխատանքները կազմակերպել «ներքևից վերև» սկզբունքով.** Հնարավորություն տալ, որ «հետին պլանում» մնացածները դառնան օրակարգ մշակողներ: Բոլոր օրակարգերը և քաղաքականությունները, որոնք կոչված են իրականացվելու ի նպաստ մարզինալացված խմբերի, կարող են հաջողություն ունենալ միայն այն դեպքում, երբ ոչ թե պարզապես ներկայացվեն այդ խմբերին, այլ ձևակերպվեն ու ձևավորվեն հենց այդ խմբերի կողմից: Հետևաբար, անհրաժեշտ է լոբբինգի օրակարգը ձևավորել «ներքևից վերև» սկզբունքով:


v. **Ձևավորել միջուկորտային կարողություններ ու համագործակցություն.** Գյուղաբնակների տեսանկյունից գյուղատնտեսական գիտելիքների տարածման ծառայությունը կարող է շատ ավելի կարևոր լինել, քան մեծահասակների կրթության վերաբերյալ օրենքը: Եթե գյուղատնտեսական գիտելիքների տարածման ծառայությունն իր բյուջեի զգալի մասը հատկացնում է կրթական և ուսումնական միջոցառումներին և ապահովում է խոցելի խմբերի ներգրավումը, ապա դա կարող է լինել այն նպատակը, որի ուղղությամբ արժե որ մեծահասակների կրթությամբ զբաղվողների համայնքը լոբբիստական աշխատանքներ իրականացնի: Հոմանիտար աջակցության և զարգացման նախագծերում մեծահասակների կրթությունը և ուսումնառությունն արդեն իսկ ներառված են որպես այդ նախագծերի անբաժանելի մաս և կարող են վերաբերել տարբեր ոլորտների, սկսած՝ գյուղատնտեսությունից մինչև առողջապահություն, և աղետների ռիսկերի նվազեցումից մինչև հոգեբանական օգնություն: Հարկ է նշել նաև, որ այս նախագծերում հաճախ մեծահասակների կրթության և ուսումնառության բաղադրիչն ընդգրկվում է առանց մեծահասակների կրթական համայնքի հետևողական ներգրավման, ինչը միջուկորտային հաղորդակցության և փոխգործակցության բացակայության հետևանք է հանդիսանում:

vi. **Մեծացնել մեծահասակների ուսումնառության և կրթության առավելությունների տեսանելիությունը.** Մեծահասակների կրթությամբ զբաղվողների համայնքից դուրս շատ սահմանափակ է անհատների և լայն հասարակության իրազեկվածությունը մեծահասակների ուսումնառության և կրթության առավելությունների և օգուտների մասին: Հետևաբար անհրաժեշտ է ներգրավել միջուկորտային կառույցները՝ ստեղծելու համար համատեղ նախագծեր այն ոլորտներում, որտեղ հնարավոր է տեսանելի դարձնել ՄՈՒԿ ուղղակի օգուտները, այն է՝ ֆունկցիոնալ գրագիտությունը, առողջապահությունն ու բարեկեցությունը կամ աղետների ռիսկերի կրճատումը:

vii. **Մեծահասակների կրթության և ուսումնառության համար բյուջեից հատկացվող միջոցները պետք է կրթության ոլորտի բյուջեի մասը կազմեն և համընդգրկուն լինեն.** Կրթական համայնքի կողմից միշտ պահանջ է դրվում, որ կառավարությունները առկա ռեսուրսներից առավելագույնը հատկացնեն կրթության ոլորտին, որը չպետք է լինի ՀՆԱ-ի 4-6%-ից և հանրային ոլորտի ծախսերի 15-20%-ից պակաս: Կրթության բյուջեի ձևավորման ժամանակ օգտակար և արդյունավետ է որոշում կայացնողների ուղղորդումը՝ մեծահասակների կրթության և ուսումնառության համար հատկացվող միջոցների կոնկրետ շեմի սահմանումը (օրինակ՝ 3%): Բացի դրանից, մեծահասակների կրթության և ուսումնառության համար հատկացվող միջոցներ պետք է հասանելի լինեն բոլոր ոլորտային նախարարություններում: Աղքատ բնակչությանն ուղղված ծրագրերի մեծամասնությունը՝ լինեն դրանք գյուղատնտեսության, առողջապահության թե էներգետիկայի վերաբերյալ, պետք է մեծահասակների կրթության և ուսումնառության բաղադրիչները նախատեսեն որպես այդ ծրագրերի անբաժան մաս՝ նորարար ռամավարությունների իրականացման և «հետ մնացածներին» օժանդակելու նպատակով: Մասնակցության ու մեծահասակների կրթության և ուսումնառության միջոցառումների բացակայությունը դեռևս մնում է շատ ոլորտային ծրագրերի թույլ կողմը և խոչընդոտ է հանդիսանում դրանց շարունակականության համար:

viii. **Միջսերնդային կրթությունը դարձնել ավելի արդյունավետ և պրոդուկտիվ.** Նորարարական տեխնոլոգիաների վրա հիմնված լուծումները (որոնք հիմնականում հանդիպում են այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ Էներգետիկան, ծովագնացությունը, արդյունաբերությունը, աղետների ռիսկերի նվազեցումը և այլն) կարիք ունեն լրացվելու նաև ուսումնական բաղադրիչներով՝ տեղական մակարդակով դրանց արդյունքների կայունության և շարունակականության ապահովման համար: Շատ հաճախ միջսերնդային ուսուցման ձևերը զգալի օգտակարություն են ունենում նմանատիպ ծրագրերի համար: Սերունդների միջև ուսուցման միջոցով նորարարական և ավանդական գիտելիքների մեկտեղումը հնարավորություն է տալիս օգտվելու թե՛ ավանդականի, և թե՛ նորարարականի առավելություններից:

ix. **Պահանջել մարդու իրավունքների վրա հիմնված իրավապաշտպան մոտեցումներ և քաղաքականության համատասխանություն.** ԿԶՆ-ներով առաջարկվում է կամավոր հիմունքներով իրականացնել այն, ինչն արդեն իսկ որպես պարտադիր իրականացման պայման սահմանված է ամբողջ աշխարհում մարդու իրավունքներին առնչվող միջազգային պայմանագրերով: Քաղաքացիներն են իրավատերերը, իսկ կառավարությունները պարտավորություններ ունեցող հաշվետու կառույցներ են: Այս հաշվետվողականությունը չի նշանակում, որ այն կարող է վերաբերել միայն առանձին քաղաքականություններին, որոնք նպատակաուղղված են միայն առանձին ԿԶՆ-ների կամ որոշ ԿԶՆ-ների կոնկրետ թիրախների իրականացմանը: Կառավարությունները պետք է պատասխանատվություն կրեն ընդհանուր քաղաքականության համապարփակ և համապատասխան լինելու համար, քանի որ «մեր աշխարհի վերափոխումը» ընդամենը կամավորական նախաձեռնություն չէ, այլ գոյատևելու խնդիր:



6

Հղումներ

Adult education and learning:

Endorsing its contribution to the 2030 Agenda. By Marcella Milana, John Holford, Steven Hodge, Richard Waller & Sue Webb; in: International Journal of Lifelong Education, 36:6, 625-628, (2017)

Anderson, Mary B. & Olson, Lara:

Confronting War: Critical Lessons for Peace Practitioners. Reflecting on Peace Project. Collaborative for Development Action (2003)

ASPBAE:

“Lifelong Learning in the 2030 Agenda for Sustainable Development: Implications for Policy and Practice” – a UIL think-tank meeting on lifelong learning and the SDGs. 27-28 September 2016, Hamburg, Germany (2016)

Benavot, Aaron & Lackhard, Ashley Stepanek:

Monitoring the education of youth and adults: from EFA to Sustainable Development Goal 4. In: Agenda 2030 – Education and Lifelong Learning in the Sustainable Development Goals; International Perspectives Adult Education, IPE 75 (2016)

Benavot, Aaron:

The invisible friend: adult education and the Sustainable Development Goals. In: Adult Education and Development. Role and Impact of Adult Education. DVV International (Ed.) (2018)

Bergman, Noam:

Impacts of the Fossil Fuel Divestment Movement: Effects on Finance, policy and Public Discourse. In: Sustainability 2018, 10, 2529

Bertelsmann Stiftung:

SDG Index and Dashboards Report. Implementing the Goals. Global Responsibilities (2018)

Casey, C., & Asamoah, L.:

Education and sustainability: Reinvigorating adult education's role in transformation, justice and development. In: International Journal of Lifelong Education, 35(6), 590–606 (2016)

CLADE:

Leaving no one behind: the key role of Youth and Adult Education in the implementation of the 2030 Agenda (2018)

CLADE/CEAAL/REPEM/ICAE/DVV International:

Call for Action, Defending the Right to Education of Youth and Adults, Towards the Mid-term Review of CONFINTEA VI (2017)

Concord (European NGO confederation for relief and development):

Addressing inequality through EU development co-operation. CONCORD responses to the stakeholder consultation (2018)

CSO Representatives in the Education 2030

Steering Committee:

Report by Camilla Croso & Maria Khan. New York, June 29-30 Steering Committee Meeting (2017)

Department of Economic & Social Affairs:

How well are the links between education and other sustainable development goals covered in UN flagship reports? A contribution to the study of the science-policy interface on education in the UN system. DESA Working Paper No. 146, ST/ESA/2015/DWP/146. Katia Vladimirova, David Le Blanc (2015)

DVV International:

Strategic Fields of Action of DVV International (2017)

DVV International:

Report. Tracer Study on Non-Formal Vocational Training Courses. Submitted by Lao-German Development Consulting Co. (2017)

DVV International:

Revised final proceedings Report of the 2018 GAWE Workshop “Accountability for SDG 4 and Citizen Participation. Keep Your Commitments”. 24th April 2018. Bridge View Hotel, Lilongwe (2018)

European Association for the Education of Adults:

Manifesto for Adult Learning in the 21st Century (no date)

European Association for the Education of Adults:

EAEA Background Paper. Adult education and sustainability (September 2018)

Education & Academia Stakeholder Group:

Eradicating poverty and promoting prosperity in a changing world: Contribution to the HLPF July 2017 session

Education & Academia Stakeholder Group:

Sectoral position paper related to the theme of the 2018 High-Level Political Forum “Transformation towards sustainable and resilient societies – the contribution of education” (no date)

Franciscans International (Ed.):

Human Rights, Sustainable Development and Climate Policies. Connecting the Dots (no date).

Global Education 2030 Meeting (12/2018),

Education in an Interconnected World:

ensuring inclusiveness and equitable development. Concept note and provisional programme. Draft (2018)

Guru, Balamurugan (Dr.) & Santha, Suni D. (Dr.):

People-centred early warning systems and disaster risk reduction. A Scoping Study of Public Participatory Geographical Information Systems (PPGIS) in India. Tata Institute of Social Sciences. Input Paper. Prepared for the Global Assessment Report on Disaster Risk Reduction 2015 (2013)

Heilmann, Johann:

Jugend- und Erwachsenenbildung – Motor für Antiradikalisierung, Frieden und Konfliktprävention. Bonn, DVV International (2018)

Hinzen, Heribert & Schmitt, Sylvia (Eds.):

Agenda 2030 – Education and Lifelong Learning in the Sustainable Development Goals. International Perspectives in Education of Adults, IPE 75 (2016)

Hope for Democracy:

25 Years of Participatory Budgeting World-Wide. Organized by Nelson Dias, edited by In Loco Association (2014)

ICAE:

Post 2015 Education. The right to education and lifelong learning: Supporting materials for advocacy in the post 2015 process (2014)

ICAE:

Moving towards an integral and holistic approach of ALE. Skills and competencies for life and work. ICAE Policy brief (no date)

International Council for Science (ICSU):

A Guide to SDG Interactions: from Science to Implementation [D.J. Griggs, M. Nilsson, A. Stevance, D. McCollum (Eds.)]. International Council for Science, Paris (2017)

International Labour Organisation:

Resolution concerning decent work and the informal economy. ILC90-PR25-292-En (2002)

International Labour Organisation:

Unprotected labour: what role for unions in the informal economy? Labour Education 2002/2. No. 127 (2002)

International Labour Organisation:

Recovering from the crisis: A Global Jobs Pact adopted by the International Labour Conference at its Ninety-eighth Session, Geneva, 19 June 2009.

International Labour Organisation:

Global Employment trends for Youth 2017. Paths to a better working future. Geneva (2017)

International Labour Organisation:

World Employment Social Outlook. Trends 2018. Geneva (2018)

International Labour Organisation:

Decent Work and the Sustainable Development Goals. A Guidebook on SDG Labour Market Indicators (2018)

International Labour Organisation:

Women and men in the informal economy. A statistical picture. Third Edition (2018)

International Labour Organisation.

Employment Policy Department: Decent Jobs for Youth. The Global Initiative for Action (no date)

Lifelong learning for quality education:

Exploring the neglected aspect of Sustainable Development Goal 4. Sue Webb, John Holford, Steven Hodge, Marcella Milana & Richard Waller. In: International Journal of Lifelong Education, 36:5, 509-511 (2017)

Manninen, Jyri & Meriläinen, Matti, University of Eastern Finland:

Benefits of Lifelong Learning. BeLL Survey Results (no date)

Matheson, David & Catherine:

Lifelong Learning and Lifelong Education: a critique. In: Research in Post-Compulsory Education, 1:2, 219-236 (1996)

Ministry of women and child development of Malawi:

The development of and state of adult learning and education (ALE). A national report of Malawi (2008)

Orlovic, Violeta & Popovic, Katarina:

Lifelong learning for sustainable development – is adult education left behind? (no date)

Overseas Development Administration:

Occasional papers on education, no.17: Action Research Report on REFLECT. Education research regenerated Freirean literacy through empowering community techniques. The experiences of three REFLECT pilot projects in Uganda, Bangladesh, El Salvador. Prepared by David Archer & Sara Cottingham (1996)

Predictors of public climate change awareness and risk perception around the world:

By Lee, T. M., Markowitz, E. M., Howe, P. D., Ko, C., Leiserowitz, A. A., In: Nature Climate Change, doi:10.1038/nclimate2728. Published online (2015)

SDG-Education 2030 Steering Committee:

Meeting Report, New York, 29-30 June 2017 and internal CSO Report for CCNGO (2017)

SDG-Education 2030 Steering Committee:

Synthesis of key recommendations and decisions, 09.03.2018 (2018)

SDG Steering Committee:

Contribution from the SDG Steering Committee to the 2018 High Level Political Forum. 23.04.2018 (2018)

Siochru, Sean O, Nexus Research Cooperative:

Evaluation of DVV International Asia Programme. Final Report (2017)

Statistisches Bundesamt:

Indikatoren der UN-Nachhaltigkeitsziele. Für Deutschland verfügbare Indikatoren der globalen UN-Agenda 2030 für nachhaltige Entwicklung (2018)

Thöne, Anja:

Vocational Youth and Adult Education. Expert Paper. DVV International (2017)

Thöne, Anja:

The United Nations Agenda 2030. The contribution and the potential of youth and adult education. Expert paper. DVV International (2018)

Transparency International:

Corruption Fighters Tool Kit. Civil societies experiences and emerging strategies (2002)

UNEP:

The 10-Year Framework of Programmes on Sustainable Consumption and Production (no date)

UNESCO:

Education transforms lives (2013)

UNESCO:

Sustainable Development Begins with Education. How education can contribute to the proposed post-2015 goals (2014)

UNESCO:

Shaping the future we want. UN Decade of Education for Sustainable Development (2005-2014). Final Report. DESD Monitoring and Evaluation (2014)

UNESCO:

World Conference on Education for Sustainable Development. Conference Report by the General Rapporteur (2015)

UNESCO:

Rethinking Education. Towards a Global Common Good? (2016)

UNESCO:

Global Education Monitoring Report 2016. Education for People and Planet. Creating Sustainable Futures for All (2016)

UNESCO:

Global Education Monitoring Report 2017/18. Accountability in Education: Meeting our Commitments (2017)

UNESCO:

Unpacking Sustainable Development Goal 4. Education 2030. Guide. Edition Oct. 2017 (2017)

UNESCO:

Education for Sustainable Development Goals, Learning Objectives (2017)

UNESCO:

2017 CCNGO/Education 2030. Global Meeting Declaration. Implementing SDG 4 / Education 2030. Siem Reap, May 2017 (2017)

UNESCO:

Global Education Meeting 2018. Education in an interconnected world: Ensuring inclusive and equitable development. Draft Concept Note & Agenda (2018)

UNESCO:

Global Education Monitoring Report 2019. Migration, displacement and education: building bridges, not walls (2018)

UNESCO Institute for Lifelong Learning:

Technical Note Lifelong Learning (no date)

UNESCO Institute for Lifelong Learning:

CONFITEA VI, Belém Framework for Action (2010)

UNESCO Institute for Lifelong Learning:

Second Global Report on Adult Learning and Education. Rethinking Literacy (2013)

UNESCO Institute for Lifelong Learning:

3rd Global Report on Adult Learning and Education. The Impact of Adult Learning and Education on Health and Well-Being; Employment and the Labour Market; and Social, Civic and Community Life (2016)

UNESCO Institute for Lifelong Learning,

Edith Hammer, PPT:

Lifelong Learning and the Agenda 2030 Perspectives and Challenges. First International Seminar on Lifelong Education. Brasilia, 12th September 2017 (2017)

UNESCO Institute for Lifelong Learning:

CONFITEA VI. Mid-Term Review. Report of the Conference (2017)

UNESCO Institute for Lifelong Learning:

CONFITEA VI. Mid-Term Review 2017. Progress, challenges and opportunities: The status of adult learning and education. Summary of the regional reports. (2017)

UNESCO Institute for Lifelong Learning:

CONFITEA VI Mid-Term Review Statement – The power of adult learning and education: A vision towards 2030 (2018)

UNESCO Institute for Lifelong Learning:

Promoting lifelong learning for all: The experiences of Ethiopia, Kenya, Namibia, Rwanda and the United Republic of Tanzania. Edited by Daniele Vieira do Nascimento & Raúl Valdés-Cotera (2018)

UNESCO & UIL:

Recommendation on Adult Learning and Learning 2015 (2016)

UNESCO Institute for Statistics:

Fact Sheet No. 45, Literacy Rates Continue to Rise from One Generation to the Next (2017)

UNESCO/UNDP/UNFPA/UNHCR/UNICEF/UN Women/World Bank Group/ILO:

Education 2030. Incheon Declaration and Framework for Action for the implementation of Sustainable Development Goal 4. Ensure inclusive and equitable quality education and promote lifelong learning opportunities for all (2015)

UNISDR (The United Nations Office for Disaster Risk Reduction):

EWG III. Third International Conference on Early Warning. From concept to action. Developing Early Warning Systems: A Checklist (2006)

UNISDR (The United Nations Office for Disaster Risk Reduction):

Sendai Framework for Disaster Risk Reduction 2015-2030 (2015)

UNISDR (The United Nations Office for Disaster Risk Reduction):

Global Assessment Report on Disaster Risk Reduction. The pocket GAR 2015. Making Development Sustainable: The Future of Disaster Risk Management (2015)

United Nations:

Paris Agreement (2015)

United Nations:

Global Sustainable Development Report 2016, Department of Economic and Social Affairs, New York, July (2016)

UN Department of Economic and Social Affairs:

Handbook for the preparation of voluntary national reviews. The 2019 Edition (2018)

UN Economic and Social Council, Committee on Economic, Social and Cultural Rights:

Implementation of the international covenant on economic, social and cultural rights. General Comment No. 13 (Twenty-first session, 1999), The right to education (article 13 of the Covenant, E/C.12/1999/10 (1999)

UN Economic and Social Council, High-level Political Forum on Sustainable Development (HLPF):

Discussion papers on the theme of the HLPF, submitted by major groups and other stakeholders. E/HLPF/2016/2 (2016)

UN Economic and Social Council:

Progress towards the Sustainable Development Goals. Report of the Secretary-General. E/2017/66 (2017)

UN Economic and Social Council:

Principles of effective governance for sustainable development. Official Records, 2018. Supplement No. 24, E/2018/44-E/C.16/2018/8 (2018)

UN Economic and Social Council, High-level Political Forum on Sustainable Development (HLPF):

Report of the HLPF convened under the auspices of the Economic and Social Council at its 2018 session. E/HLPF/2018/7 (2018)

UN Economic and Social Council:

Progress towards the Sustainable Development Goals. Report of the Secretary-General. E/2018/64 (2018)

UN Economic and Social Commission for South Asia and the Pacific:

Integrating the three dimensions of sustainable development. A framework and tools (2015)

UN General Assembly:

National institutions for the promotion and protection of human rights. A/RES/48/134 (1994)

UN General Assembly:

SIDS Accelerated Modalities of Action (SAMOA) Pathway. A/RES/69/15 (2015)

UN General Assembly:

Transforming our world: the 2030 Agenda for Sustainable Development. A/RES/70/1 (2015)

UN Inter-Agency Task Force on Social and Solidarity Economy:

Social and Solidarity Economy and the Challenge of Sustainable Development (2014)

UN Office on Drugs and Crime:

Doha Declaration on integrating crime prevention and criminal justice into the wider United Nations agenda to address social and economic challenges and to promote the rule of law at the national and international levels, and public participation. (2015)

UN Office on Drugs and Crime:

United Against Corruption. Corruption and Development (no date)

UN Office of the High Representative for the Least Developed Countries, Landlocked Developing Countries and Small Island Developing States:

Small Island Developing States in Numbers. Climate Change Edition (2015)

Walther, Richard:

Building Skills in the Informal Sector. In: Technical and Vocational Skills Development in the Informal Sector. International Perspectives in Adult Education; IPE 68 (2013)

The World Bank:

Participatory Budgeting. Public Sector Governance and Accountability Series. Edited by Anwar Shah (2007)

Կայքեր

Global Education Monitoring Reports

<https://en.unesco.org/gem-report/sdg-goal-4>

High Level Political Forum (general background information)

<https://sustainabledevelopment.un.org/hlpf>

Human Rights Guide to Sustainable Development Goals (The guide illustrates the human rights anchorage of the 17 Sustainable Development Goals.)

<http://sdg.humanrights.dk/en>

Right to Education (a global human rights organisation focusing on the right to education)

<http://www.right-to-education.org/issue-page/themes/adult-education-and-learning>

SDG Dashboard (a dashboard displaying regional trends by Bertelsmann)

<https://dashboards.sdgindex.org/#/>

SDG Tracker (presents data across all available SDG indicators):

<https://sdg-tracker.org>

Sustainable Development, Knowledge Platform, Goal 4

<https://sustainabledevelopment.un.org/sdg4>

UNESCO LitBase (the Global Literacy and Numeracy Database documenting 223 case studies of effective literacy and numeracy practices)

<https://uil.unesco.org/literacy/effective-practices-database-litbase>

UNESCO Institute for Statistics (dataset on SDG 4)

<http://data.uis.unesco.org/Index.aspx?DataSetCode=edulit>



Բրիտա Շվայգհոֆեր

Բրիտա Շվայգհոֆերը սոցիալական անտրոպոլոգիայի մագիստրոս է, ունի մարդկային ռեսուրսների զարգացման գծով մագիստրոսի աստիճան և որակավորված հաշտարար է: Բազմաթիվ տարիների ընթացքում նա ապրել և աշխատել է նախկին Հարավսլավիայի երկրներում և համակարգել է քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված ծրագրեր: Աշխատել է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի և մարդու իրավունքների ոլորտում գործող «ՖԻԱՆ» կազմակերպության հետ: Պարենային իրավունքի թեմայով բազմաթիվ դասընթացներ է անցկացրել Աֆղանստանում, Պակիստանում և Կամբոջայում, ինչպես նաև մասնակցել է մարդու իրավունքների գծով հետազոտական առաքելություններում: Ներկայումս աշխատում է որպես արտահաստիքային խորհրդատու և տրամադրում է մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումների վերաբերյալ խորհրդատվություն, դասընթացներ, անցկացնում է գնահատումներ և ուսումնասիրություններ:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը «Գերմանիայի մեծահասակների կրթության ասոցիացիայի» (Deutscher Volkshochschul-Verband e. V. (DVV)) միջազգային համագործակցության ինստիտուտն է: Լինելով Գերմանիայում շարունակական կրթության բնագավառում խոշորագույն ծառայություն մատուցող՝ Դի-Վի-Վի-ն ներկայացնում է շուրջ 900 մեծահասակների կրթության կենտրոնների և նրանց միությունների շահերը:

Որպես մեծահասակների կրթության և զարգացման ուղղված համագործակցության ոլորտի առաջատար մասնագիտական կազմակերպություն՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալն արդեն ավելի քան 50 տարի աջակցում է ցկյանս ուսումնառության ներդրմանն ու դրան ուղղված գործողությունների օժանդակմանը: Ամբողջ աշխարհում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը օժանդակում է երիտասարդների և մեծահասակների կրթության կայուն կառույցների ստեղծմանն ու զարգացմանը:

Որպես գործընկեր, մենք մշտապես երկխոսություն ենք վարում այն երկրի ժողովրդի հետ, որտեղ աշխատում ենք: Այս նպատակով համագործակցում ենք Աֆրիկայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի և Եվրոպայի ավելի քան 30 երկրների շուրջ 200 կառույցների հետ, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության, կառավարության և ակադեմիական ոլորտների գործընկերների հետ: Մեր գրասենյակների խնդիրն է տեղական և տարածաշրջանային համագործակցության կառուցումը, ինչպես նաև գործընկեր պետություններում մեր գործունեության որակի և արդյունավետության ապահովումը: Մեր աշխատանքներն ուղղված են գրագիտության և հիմնական կրթության, մասնագիտական վերապատրաստումների ապահովմանը, զրբալ և միջմշակութային ուսուցման խնդիրներին, ինչպես նաև բնապահպանական կրթությանն ու կայուն զարգացմանը, միգրացիայի և ինտեգրացիայի հետ կապված հարցերին, փախստականների հետ աշխատանքին, առողջապահական կրթությանը, հակամարտությունների կանխարգելմանն ու կրթության միջոցով ժողովրդավարության զարգացման հիմնահարցերին:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալն իր ծրագրերն իրականացնում է Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության, Եվրոպական միության և այլ դիմորների կողմից տրամադրված դրամաշնորհների միջոցով: Մեծահասակների կրթության ազգային, տարածաշրջանային և միջազգային միությունների հետ համատեղ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը լոբբիստական աշխատանքներ է տանում կրթության իրավունքի հանրամատչելիությունն ու ցկյանս ուսումնառությունը խթանելու նպատակով: ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները, Կրթություն 2030 համաշխարհային կրթական օրակարգը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մեծահասակների կրթության համաշխարհային համաժողովն ուղղորդում են մեր աշխատանքը՝ օգնելով ձևավորել մեր գործունեության շրջանակները: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը օժանդակում է Եվրոպայի և աշխարհի մակարդակով տեղեկատվության ու փորձագիտական գիտելիքների փոխանակմանը՝ համաժողովների, սեմինարների և իրապարկումների միջոցով:

Գործունեության ռազմավարական ուղղություններ

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը որդեգրել է գործունեության ոլորտների երեք հիմնական ռազմավարական ուղղություն: Այդ գործունեության ոլորտները սերտորեն փոխկապակցված են, ինչպես նաև փոխադրվում են միմյանց.

Չարգացման ուղղված օժանդակություն՝ մեծահասակների կրթության ծրագրերի միջոցով. Իր տեղական գործընկերների հետ միասին մշակում և իրականացնում է մեծահասակների կրթության ծրագրեր ամբողջ աշխարհում:

Տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների տրամադրում. Որպես մասնագիտացված կազմակերպություն Ինստիտուտը փորձագիտական գիտելիքներ է փոխանցում մեծահասակների կրթության և զարգացման գործընթացների շրջանակներում՝ ունենալով համեմատական առավելություն, որը բխում է թե՛ երկրի ներսում, և թե՛ արտասահմանում ստացված գիտելիքներից:

Ամբողջ աշխարհում մեծահասակների կրթության համար բազային պայմանների բարելավում. Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը նաև նպատակաուղղված օգտագործում է իր փորձագիտական բազան՝ ամբողջ աշխարհում մեծահասակների կրթության համար պայմանների բարելավման նպատակով:

Ավելի մանրամասն տարբերակը հասանելի է հետևյալ կայքում՝
www.dvv-international.de/en/materials/expert-and-position-papers

Դի-Վի-Վի ինթերնեյշնալ
Օբերե Վիլհելմշտրասե 32
53225 Բոն
Գերմանիա

Հեռախոս: +49 (0) 228 97569-0
Էլ-փոստ: info@dvv-international.de
www.dvv-international.de

